



147-925
- 38 -

147

MISSOURI

MISSOURI

MISSOURI

16135

9(47-925)

5-38

ՀԵՐԵՎԱՐԿ

5 OCT 2011

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՄԻԶԻՆ ԴԱՐ

Ճանդիլ ու. Ք. Ակադեմիայի
առկույտ հայոց օք զիշ թագա

5
4
3
2
1

9

ՅՈՒՐԱՌԵՑՐԵՑ
Հայոց Ծխ. գպրոց. ծրագրին
Տ. Տէր-Գրիգորեանց
Ուսուց. Բազ. Հ. Հովի. օգ. դպր.

РУКОВОДСТВО
къ Армянской исторіи (средніе вѣка)
ПРИСПОСОБЛЕНО
къ программѣ арм. церк.-прих. школъ
Т. Терь-Григорьянцемъ.

БАКУ

Типографія газеты „Баку“.
1913.

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Բ Ի Լ Ա

Միջին դարու սկզբներին ազգերի կեանքում խո-
շոր յեղաշրջում կատարուեց չնորհիւ քրիստոնէութեան,
որ ստեղծեց նոր քաղաքակրթութիւն. մինչև այժմ էլ
այդ քաղաքակրթութեան մշակողներն ու առաջ տա-
նողները քրիստոնեայ ազգերն են:

Ինչպէս նախնական շրջանի կուլտուրան, այնպէս
էլ քրիստոնէութեան քարոզութիւնն սկսուեց արևելքից:

Միջերկրական ծովի հարաւ—արևելեան կողմում,
երկու մայր ցամաքների բաժանման կէտում, ընկած
է մի, տարածութեամբ ոչ մեծ, երկիր, որ շատ հնուց
յայտնի էր Հրէաստան անունով՝ իր երուսաղէմ մայ-
րաքաղաքով: Այնաեղ ապրում էին հրէաները, որոնք
կոչում էին և իսրայէլացիք, և գրա համար այդ եր-
կիրն էլ երբեմն կոչում էր իսրայէլացոց երկիր: Հրէ-
աստանը հնում շիտում էր նշանաւոր պետութիւնների
հետ. մի կողմից տարածում էր Եղիպատուը, որ հնում
ամենաքաղաքակիրթ երկիրն էր, միւս կողմից նա յա-
րաբերութիւն էր պահպանում Ասորեստանի, Ասորիքի,
Փիւնիկիայի և Արարիայի միջով Բարելոնի հետ: Հրէա-
ների երկրովն էին անցնում այդ ժամանակուայ հա-
մարեա նշանաւոր վաճառականական ճանապարհները.
մի կողմից՝ Փիւնիկիայից գէպի Արարիա, միւս կողմից՝
Եղիպատուից գէպի Ասորեստան և Բարելոն: Այդ հան-
գամանքը նպաստեց հրէաների մէջ շատ վաղուց վա-

Ճառականութեան զարգացմանը: Հին դարում շահերի մրցումն էր տեղի ունենում Ասորեստանի և Եգիպտոսի մէջ: Հրէաները ականատես էին այդ մրցմանը:

Շնորհիւ առեւտրական յարաբերութեան՝ հրէաները ծանօթացան շատ ազգերի հետ՝ մանաւանդ Փիւնիկիայի անկումից յետոյ. իսկ այդ յարաբերութիւնն այն հետևանքն ունեցաւ, որ նրանք շուտով իւրացրին այդ ժամանակուայ քաղաքակիրթ ազգերի ուսումն ու գիտութիւնները:

Արդէն Աթէնքում Քրիստոսից վեց դար առաջ շնորհիւ յոյն փիլիսոփաների՝ ուսումը դուրս էր եկել քրմական նեղ շրջանից և բաւականաչափ զարգացել. այնպէս որ նա սկսել էր թափանցել բնութեան զանազան երևոյթների և գաղտնիքների մէջ և բացատրութիւններ էր տալիս անկախ կրօնական աշխարհայեցքից ու համոզմունքից; Յոյն փիլիսոփաները քննադատորէն էին վերաբերում դէպի շրջապատող երեւոյթները: Հիմնուել էին նշանաւոր գրադարաններ ու համարաբաններ՝ նոյն իսկ Յունաստանից դուրս, որոնց շնորհիւ յունական գիտութիւնները և նրա գիտնականների մտքի արտադրութիւնները մատչելի էին դառնում մինչեւ իսկ հեռաւոր այլազգիներին:

Յունաստանի անկումից յետոյ, երբ Բ. դարում համաշխարհային նշանակութիւն ստացաւ Հոռվմը, մի շաբք երկրների հետ (Կարթագէն, Եգիպտոս, Իսպանիա, Բուն Յունաստան, Մակեդոնիա, Փոքր Ասիա, Փիւնիկիա, Ասորիք և Հրէանատան) յունական քաղաքակրթութիւնն էլ անցաւ նրան: Հոռվմը իւրացրեց յունական արհեստները, գիտութիւնները, ստեղծութեան նոյնիսկ քաղաքական կազմը: Նա յարմար ճանապարհներով հաղորդակցութիւնն ստեղծեց իր հեռաւոր գաղութների և տիրապետած երկրների հետ: Հոռվմը

դարձաւ առեւտրի կենտրոն, որտեղ կարելի էր հանդիպել Աֆրիկայի, Ասիայի և Երոպայի ամենահեռաւոր ծայրերից եկած վաճառականների. նրանք իրանց հեռաւոր հայրենիքից բերում էին թէ ապրանք և թէ նրա հետ իրանց երկրի քաղաքակրթութիւնն ու սովորութիւնները. միաժամանակ նրանք ծանօթանում էին հոռվմէական (աւելի շուտ յունական) թէ քաղաքակրթութիւնն և թէ մտաւոր կեանքի հետ. Հոռվմը մի վայր էր, ուր բազմաթիւ այլատարր ցեղեր շփւում էին իրար հետ և ստեղծում մի ընդհանուր յունա-հոռվմէական կուլ'տուրա:

Մասնաւորապէս հրէաները, որպէս վաճառական ժողովուրդ, Հոռվմում մեծամեծ գաղութներ ունէին. Հոռվմի կայսրներն իրանց նիւթական շահի տեսակէտից հովանաւորում էին նրանց և նպաստում նրանց յառաջադիմութիւնները: Արևելքից եկող հրէայ վաճառականներն իջնում էին իրանց ցեղակիցների մօտ և հաղորդում մայր երկրի նորութիւնները. օտարութիւնն մէջ գանուող իւրաքանչիւր հրէայ համաձայն իր կրօնական համոզման՝ պարտք էր համարում գոնէ մի երկու անդամ այցելել հրէական սրբավայր Երուսաղէմի տաճարը: Տարուայ որոշ ժամանակ (գլխաւորապէս գարնանը՝ Պասէքի տօնին) ահազին թուով հրէաներ էին ժողովւում Երուսաղէմ ամենահեռաւոր տեղերից: Սյովիսով հրէաները երբէք չէին կարում իրանց հայրենիքից. նրանք հոգով միացած էին նրա հետ:

Ծանը էր Հոռվմի գերիշխանութիւնը հպատակ ժողովուրդների համար: Ամբողջ քաղաքների և երկըների բնակիչներ համարում էին Հոռվմի քաղաքացիների սեպհականութիւնը և պատերազմից յետոյ կենդանիների հօտերի պէս քշում էին Հոռվմ ու վաճառքի հանւում: Քանի Հոռվմի քաղաքացիք իրանց

արդիւնքները վաճառքի չէին հանում, ուրիշ խօսքով՝
քանի զարգացած չէր արդիւնաբերութիւնը, ստրուկնե-
րի դրութիւնն այնքան էլ ծանր չէր. բայց երբ առե-
արի զարգացման շնորհիւ արդիւնքի աւելորդ մասն
սկսեցին վաճառքի առարկայ դարձնել, այն ժամանակ
ստրուկների դրութիւնը միանդամայն անտանելի դար-
ձաւ: Նրանց աշխատեցնում էին թէ դաշտերում և թէ
հանքերում առանց ինայելու, որպէսզի, որքան կարե-
լի է, շատ արդիւնք ստանան, և եթէ նրանք ծուլանում
էին, անինայ ջարդում էին: Այդ ստրուկների թիւը
հարիւր հազարների էր համուռմ: Այդ է պատճառը, որ
էին պատմութեան ընթացքում Հոռվմում անընդհատ
ապստամբութիւններ էին բռնկւում, սակայն որոնք
ամենասուկալի կերպով զարում էին:

Պակաս անտանելի չէր և հետաւոր սեպհականու-
թիւնների գրութիւնը: Փոխարքաները ամենատանիվզ
կերպով կողովառում էին հետաւոր նահանգները. հառլ-
մէական լէգիոնները լուիսուսում էին հայտնածած ցեղերի
թէ պատռութիւնը և թէ պատիւն ու սրբութիւնը: Ան-
ընդհատ տեղի ունեցող ապստամբութիւնները առիթ
էին հանգիստանում, որ ամբողջ քաղաքներ ու համայնք-
ներ միանդամայն ոչնչացուեն: Նոյն դրութեան մէջ
էր և Հրէաստանը:

Ինչպէս Հոռվմի կայսրութեան բոլոր վայրերում,
Հրէաստանում ևս դիւղացիներն ու խաչնարածները ա-
մենալայն չափով հարստահարուում էին. Նրանք ճնշուած
էին ծանր հարկերի տակ, որի շնորհիւ սաստիկ տա-
րածուած էր վաշխառութիւնը: Ժողովրդի անբաւակա-
նութիւնից առաջ էին եկել մի քանի խմբակցութիւններ,
որոնք գաղտնի կամ բացարձակ կուտ էին մզում
այդպիսի դրութիւն ստեղծող և պաշտպանող հոռվմէտ-
կան բռնապետութեան դէմ: Այդ խմբակցութիւններից

հշանաւորներն էին զելուները, սադուկեցիները, փարի-
սէցիները և յեսունացի:

Հոռվմի տիրապետութեան ամենակատաղի թշնա-
միներն էին զելուները. Նրանք Գալիլիայի լեռներն
ապաւինած զինուած խմբերն էին, որոնք երբեմն-եր-
բեմն աւազակապետների առաջնորդութեամբ իջնում
էին լեռներից և յարձակում հոռվմէական զօրքի վրայ
ու սարսափ տարածում. Նրանք վրէժինդիր էին լի-
նում ժողովրդի բռնաբարուած իրաւունքների համար
և դրա համար Երուսաղէմի հիւծուած և հալածուած
սեպհականազուրկ տարբի համակրութիւնը նրանց կողմն
էր: Նրանք մի քանի անգամ ընդհանուր ապստամբու-
թիւն բարձրացրին, սակայն միշտ էլ հոռվմէայցիք մեծ
արիւնհեղութեամբ ճնշեցին: Վերջին կատաղի կուրը
տեղի ունեցաւ Յիսուսի ծննդեան առաջին տարինե-
րում, որը զապուհց. երկու հազար գերի ընկած հրէա-
ներ խաչուեցին, իսկ աւելի մեծ թուով վաճառուեցին
Երրի ստրուկները, Հարվարդա առմանակապետի կուրը հար-
ծանքներ սկսեց և Հրէաստանն արիւնով ներկուեցաւ:
Բացի այդ՝ ամենուրեք բազմացան աւազակային խըմ-
բեր, որոնք անինայ կողովառում ու աւերում էին եր-
կերը և սպանում մարդկանց: Ժողովրդի յուսահատու-
թիւնը աննկարագելի էր. նա իր յոյսը կտրել էր
բոլոր աշխարհայիններից և աչքերը յառել դէպի
երկինք, որտեղից սպասում էր իր միակ փրկիչ՝ միս-
սիային: Ժողովրդի այգափսի յուսահատ դրութիւն
ժամանակ տուած եկան այնպիսի խմբակցութիւններ,
որոնք տիրող բռնութիւնների դէմ միակ կուռելու զէնք
համարում էին տնտեսական օգնութիւն և խաղաղ աշ-
խատանք: Յեսունացիք էին զրանք:

Նրանք ապրում էին համայնքներով Հրէաստանի
զիւղերում և զանազան վայրերում. Նրանք իրար վե-

բարերում էին իրեկ եղբայրներ և ամենքն էլ աշխատում էին ընդհանուրի՝ համայնքի համար: Ոչ ոք սեպ-հականութիւն չունէր, ոչ սեպհական տուն, ոչ ստրուկ, ոչ հող, ոչ հօտ և ոչ ընդհանրապէս այնպիսի բան, որից կարող էին հարստանալ: Նրանք իրանց ունեցածը մտցնելով՝ հաւասարապէս օգտում էին: Վաստակած փողն իւրաքանչիւրը յանձնում էր զլխաւորին, որը գնում էր ամեն անհրաժեշտ բան և ամենքին էլ բաժանում թէ առատ ուտեստ և թէ այլ անհրաժեշտ իրեր: Առաւտեան աղօթքից յետոյ զլխաւորներն ամեն մէկին ցոյց էին տալիս իրանց կատարելիք աշխատանքները: Մինչև ժամը 11-ը ժրաշանութեամբ աշխատելոց յետոյ, իրանց մարմինը լուանում էին ցուրտ ջրով, ապա հագնում քաթանի զգեստ և մտնում ընդհանուր սեղանատունը: Այստեղ աղօթում, ապա ստանում էին առատ կերակուր: Ճաշից յետոյ հանում էին իրանց զգեստը և կրկին աշխատում:

Սակայն Հոռվմը խլելով ժողովրդի աղատութիւնը՝ պարզ է, որ այդպիսի համախմբումներն էլ պէտք է հալածէր: Հրավարակում մնացել էին միայն քահանաները, դպիրներն ու փարիսեցիները: Ժողովրդի մէջ յուզումը դեռ չէր զադարել, երբ հետո Հրէական անապատից մի ձայն կոչում էր. «Եկէք ինձ մօտ, դուք, բոլոր յոգնածներ և ծանրաբենուածներ և ես կըհանզըստացնեմ ձեզ»: Նա քարոզում էր սէր, գութ դէպի մերձաւորն ու ընկերը և խորշումն աշխարհային վայելչութիւններից, որի համար խոստանում էր երկնքի արքայութիւնը: Ժողովրդի մէջ յուզումը վերջացաւ 70 թ. Ք. յ. Երուսաղէմի կործանումով. այնտեղից արդէն փախել էին բոլոր հարուստներն ու քահանաները գպիրների և փարիսեցիների հետ: Քաղցած ու տան-

ջուած հասարակ զասակարգը Երուսաղէմի փլատակների տակ գտաւ իր գերեզմանը. կենդանի մնացածները խումբ-խումբ թողեցին իրանց հայրենիքը և կամովին տարագրուեցին աշխարհի ամենահեռաւոր անկիւնները Նրանց հետ ցրուեցին և նոր վարդապետութեան հետեղներն ու քարոզիչները, որոնք սկըզբում հիւրընկալութիւն գտան իրանց ցեղակիցների մօտ՝ Հոռվմում:

Առաջին անգամ նոր ուսմունքին հետեղները Հոռվմում և ուրիշ տեղերում հաստատուած հրէաներն էին, իսկ կամաց-կամաց նրա խօսքերն արձագանգ գտան հազարաւոր այլածուածների և քաղցածների սրտերում: Առաջին անգամ Ասորիքի Անտիօք քաղաքում հաւատացողներին քրիստոնեայ անունը տուին:

Հաւատացեալներն ամենքը միասին էին անցկացընում, և իւրաքանչիւրի ունեցածը համայնքին էր պատկանում, ամեն մէկն էլ իր սեպհականութիւնը վաճառում յանձնում էր առաքեալին, որը բաժանում էր կարիքաւորներին: Այսպիսի փոքրիկ համայնքներից սկսեց կամաց-կամաց քրիստոնէութիւնը տարածուել աւելի լայն խաւերում:

Հանգամանքները նպաստում էին նրա տարածմանը. հոռվմայեցիք արիելով Միջերկրական ծովին շփուող բոլոր երկրներին՝ ամեն տեղ միասեսակ կառավարութեան եղանակ և որոշ չափով միատեսակ քաղաքակրթութիւն էին մացլել, որը հեշտացնում էր ամեն մի ներքին յարաբերութիւն. լայնածաւալ պետութեան հպատակները դասաւորուած էին այնպէս, որ քրիստոնէական ուսմունքը հեշտութեամբ կարող էր մուտք գործել, ամբողջ ժողովուրգներ՝ գալիք, սպանացիք, հրէաներ, Աֆրիկայի հելլենացած սեմիտներ

զգկուած էին իրանց թէ ցեղական և թէ քա-
դաքական ազատութիւնից։ Նրանք յուսահատուած աշ-
խարհայինից՝ միայն հոգեկան միմիթարութեան էին ա-
կընկալում։ թէ այդ ցեղերի և թէ տիրապետող հոռվ-
մայեցիների մէջ դասակարգերն իրանց անտեսական
կացութեամբ խիստ տարբերում էին. իրանց վիճակից
գոհ եղողների թիւը շատ սակաւ էր և բազմաթիւ
«տառապեալներ ու ծանրաբեռնուածներ» ուրախու-
թեամբ փարեցին նոր ուսմունքին և իրանց հոգեկան
միմիթարութիւնը նրանում գտան։

Շնորհիւ յոյն և հստվմայեցի նշանաւոր մտածող-
ների մարդկային միտքը գուրս էր հկել որոշ չափով
խաւար հեթանոսական շրջանից և քննադատօրէն էր
վերաբերում դէպի իր պաշտած աստաւածները, որոնք
շատերի աչքում կրցրել էին իրանց նշանակութիւնը.
աւելի բարձր շրջաններում, որոնց մատչելի էին յոյն
փիլիսոփիաների գրուածքները, տիրում էր հիասթա-
փութիւն դէպի կեանքը, որը նպաստում էր բարքերի
սոսկալի անկման, և նոր ուսմունքը կամաց-կամաց
սկսեց մուտք գործել և իշխանական պալատները։

Սկզբում հեթանոսները բաւականանում էին նոր
վարդապետութեան հետեւզներին ծաղրելով, որովհե-
տեւ նրանք ստրուկներ, կանայք և երեխաներ էին, և
նոր կրօնն անուանում էին «աղքատների կրօն»։ Սա-
կայն քանի նրանք բազմանում էին, իրանց վրայ էին
դարձնում Հոռվմի կայուրների ուշադրութիւնը. այնու-
հետեւ հեթանոս ժողովուրդն ամեն մի դժբախտ պա-
տահարի պատճառ համարում էր քրիստոնեաներին,
որոնք չէին յաճախում մեհեանները, աստուածներին
զոհ չէին մատուցանում և իրանց հետ չէին աղօթում։
Աւելութիւնն ու հալածանքը քանի զնում, մեծանում
էր. այդ բանին նպաստում էին մանաւանդ այն հրէա-

ները, որոնք նոր վարդապետութեանը չէին հետեւում։
Ամենամեծ հալածանք հանողներից մէկն էր Նե-
րոն կայսրը, որը Հոռվմի հրդեհի պատճառ համարեց
քրիստոնեաններին, և սոսկալի կոտորածներ սկսուեցին։
Այդ հալածանքները մերթ սաստիկ, մերթ մեղմ շա-
րունակուեցին մինչև Դիոկղեաիանոս, որը հալածանք-
ների նոր գուռ բացաւ. ամբողջ քաղաքներ արիւնով
ներկուեցան. սակայն այդ հալածանքները ոչ թէ պակ-
սեցնում էին քրիստոնեանների թիւը, այլ, ընդհա-
կառակն, նպաստում էին նրա տարածմանը։ Այնքան
մեծ ծաւալ էր ստացել նա Դ-րդ դարու սկզբներին,
մինչ Կոստանդիանոս յենուելով քրիստոնեայ կուսակ-
ցութեան վրայ՝ Հոռվմի կայսրների գահը ձեռք բերաւ
և յետոյ ինքն էլ ընդունելով նոր կրօնը՝ միանդամայն
աղատեց հալածանքներից։

մաց-կամաց մուտք գործել դէպի Հայաստան և
Պարսկաստան:

Ա.

Քրիստոնեայ Արշակունիք

Ի.

Քրիստոնէութեան քարոզութիւնը Հայաստանի
հարևան երկրներում. Աւանդութիւններ Արգար Ուշա-
մայի, Թագէսս և Բարդուղիմէսս առաքեալների և
Սանդուխտ կուսի մասին. Հալածանք քրիստոնէու-
թեան դէմ:

Առաջին երկիրը, որտեղ չըկաստանից յե-
տոյ քրիստոնէութիւնն սկսեցին քարոզել, Ասո-
րիքն էր: Վաղուց արդէն ասորիների մի խոշոր
մասն ընդունել էր մովսիսականութիւն և հրէայ
քարոզիչներն ազատ մուտք ունէին իրանց նոր
կրօնակիցների մօտ: Մինչև անդամ թագաւոր-
ներն ընդունում էին մովսիսականութիւն:

Ինչպէս մովսիսականութիւնը, նոյնպէս էլ
քրիստոնէութիւնն ընդունելութիւն գտաւ ասո-
րիների մէջ, և Անտիոք քաղաքում առաջին ան-
դամ մի խումբ հաւատացեալների «քրիստոնեայ»
անունը տուին:

Ասորիքից քրիստոնէութիւնն սկսեց կա-

Քրիստոնէութեան առաջին շրջանի քարոզութեան
մասին Մովսէս Խորենացին բերում է հետեւել աւան-
դութիւնները, որ հաղորդել են ասորի պատմիչները:

Ուռայաստանի թագաւոր Արգար (Արգար)
Ուշամայ (Ակ) (50 թ. Ք. յ.) հոռվմայեցիների իր
վրայ ունեցած կասկածները փարատելու համար՝ գե-
պանութիւն ուղարկեց Բեթքուպին քաղաքը Մասի-
նոս հազարապետի մօտ: Դեսպանութիւնն անցնելով
երուաղէմով՝ պատահեց Յիսուսին, որ քարոզում և
բժշկում էր ժողովրդին: Նրանք եկան և Արգարին
պատմեցին իրանց տեսածը: Արգար վաղուց տառա-
պում էր հիւանդութեամբ (բորոտութեամբ). զրա հա-
մար նա գեսպաններ ուղարկեց Յիսուսի մօտ և խնդ-
րեց գալ իրեն բժշկել ու իր Եղեսիա քաղաքում հան-
դիստ ապրել:

Յիսուս ընդունելով դեսպանութիւնը՝ երանի
տուաւ նրան, որ գեռ չտեսած հաւատում է իրան,
սակայն մերժեց անձամբ զնալ, այլ խոստացաւ իրհնից
յետոյ աշակերտներից մէկին ուղարկել: Այդ աշակեր-
տը Թագէսս առաքեալն էր, որ եկաւ Եղեսիա, քարո-
զեց ու մկրտեց Արգարին իր ընտանիքով: Թագաւո-
րական ընտանիքի հետ մկրտուեցին և շատերը, և Թա-
գէսս հաւատացեալներին հովուելու համար՝ Ադրէ ա-
նունով խոյրաբարին եղիսկոպոս կարգելով՝ ինքն անցաւ
հիւսիսային Հայաստան, ուր իշխում էր Սանատրուկ
Արշակունի իշխանը: Թագէսս այդ կողմերում էլ քա-
րոզեց. շատերի թւում հաւատաց և Սանատրուկի
գուստը Սանդուխտ:

Աբգարի մահուանից յետոյ, երբ Սանատրուկ տիրեց նրա գահին, հալածանք հանեց քրիստոնեաների դէմ. այդ հալածանքին զոհ գնացին շատ հաւատացեաներ, որոնց թւում և Սանգուխտն ու իր ուսուցիչ Թաղէոս, որոնց Սանատրուկ նահատակել տուեց Շաւարշան դաշտում:

Սոորիքում քրիստոնէութեան մուտք գործելով հիմք էր զրուել նոր քրիստոնէական զրականութեան. եկեղեցական զրքեր և նոր վարդապետութեան պատմութիւնը զրուած էին ասորերէն՝ ասորի քարոզիչների ձեռքով. որտեղ մուտք էր գործում քրիստոնէութիւնը, տարածում էր և ասորոց լեզուն և զրականութիւնը. Բ-րդ գարում Եղեսչան ամբողջովին արդէն քրիստոնեայ էր:

Միւս կողմից՝ Միջերկրականի վրայով քրիստոնէութիւնը մուտք գործեց Փոքր Ասիա, Մակեդոնիա, Յունաստան և Բալկանեան թերակղզու զանազան վայրերը. Պօղոս առաքեալը երկար ժամանակ քարոզել է Փոքր Ասիայում. Արևմուտքում քրիստոնէութիւնն ամենից շատ տարածում էր յունական քաղաքակրթութեան վայրերում և քրիստոնէութիւնընդունողների մեծամասնութիւնը յունախօս էր: Յոյն քարոզիչներն ազգւում էին յունական գիտութիւններից, իսկ ասորի քարոզիչներն աչքի էին ընկնում իրանց խիստ պարզ կեան-

քով և աշխատում էին քրիստոնէութեան նախկին պարզութիւնը անաղարտ պահել:

Այսպիսով թէ արևմուտքից և թէ հարաւից քրիստոնեայ քարոզիչներն ազատ մուտք ունեին դէպի Հայաստան: Բացի Թաղէոս առաքեալից՝ յիշատակւում է և Բարդուղիմէոս, որը նոյնպէս քարոզել և նահատակուել է Հայաստանում:

Քրիստոնէութեան քարոզութիւն հետ միասին սկսուել է և հալածանք նրա դէմ: Առաջին շրջանից մնացած մի շարք նահատակութիւնների աւանդութիւններն այդ են ապացուցանում: Բացի այդ՝ որովհետև քրիստոնէութեան քարոզութեան շրջանում Հայաստանը գտնուել է Հռովմի գերիշխանութեան տակ և պարթե թագաւորները նշանակւում էին Հռովմից, պարզ է, որ կայսրների հանած հալածանքները պէտք է տարածուէին և Հայաստանում: Բուն Հայաստանում (Մեծ Հայքում) քրիստոնէութեան քարոզութիւնը շատ դանդաղ էր առաջ գնում. հայ ժողովուրդը ժնորհիւ երկրի դիրքի եւ քաղաքական բաժանման հեռու էր մնացել յունական ուսման ազդեցութիւնից. նաև սեր կապուած էր հին կրօնի եւ իր աստուածների հետ. նրա մեջ բացակայում էր քննադատական ոգին: Այդ հանգամանքն ըմբռնել էին առաջին յոյն քարոզիչները և նոր վարդապետութիւնն Ասիայում յաջողութեամբ տարա-

ծելու նպատակով հեթանոսական սօներն ու ծիսակատարութիւնները գործադրում էին քրիստոնէականի նպատակով։

Նոր վարդապետութեան հետևողներն իրար «Եղբայր» էին անուանում. հաւատակից եղբայրները կազմում էին համայնք: Նրանք օգնում էին հիւանդներին, ծանր պայմանների մէջ տառապողներին և թշուառացածներին: Օգնութիւնը լինում էր թէ մասնաւոր կերպով և թէ համայնական միջոցներից. ջերմեւանդ հաւատացեալները կիրակի օքերը կամ ուրիշ տօնակատարութիւնների ժամանակ բերում էին իրանց նուերը և յանձնում համայնքի հոգաբարձուին (Եպիսկոպոսին): Ժամասացութիւնից յետոյ հաւաքուած նուերները բաժանում էին կարօտեալ «Եղբայրներին»: Երբեմն հաւատակից կարօտեալներին բաժանելիս մասն էին հանում և հեթանոս չքաւորներին: Դրա համար չքաւորները, այրիները, անօգնական պառականայք ու որբեր ամենից առաջ անդամագրուեցին ըրիստոնեալ համայնքներին:

Առաջին քարողիչները կոխւ էին յայտաբարել տիրող բռնակալութեան, բարքերի ապակնութեան և սուս ու կեղծ հասկացողութիւնների դէմ: Նրանք հաստատել էին միակնութիւնը և անկուծելի դարձել ամուսնութիւնը. արգելում էին վաշխառութիւնն ու բնչաքաղ-

ցութիւնը և քարոզում էին հաւասարութիւն.
հպատակի և տիրողի մէջ խտրութիւն չէին
դնում:

Համայնքն ինքն էր վճռում իր մէջ պատահած վէճերն ու անհամաձայնութիւնները. հեթանոս դատաւորին դիմելը մեծ յանցանք էր համարւում և դրա համար նրանից միանգամայն խորշում էին: Հիմք դրուեց նոր դատաստանական հիմնարկութեան, որը ապագայում սրբագործեց եկեղեցին և շատ անգամ պաշտպանեց աշխարհիկ իշխանութեան դէմ:

Համայնքի անդամներն ընտրում էին իրանց համար հոգաբարձու, որ յունարէն կոչւում էր եպիսկոպոս: Եպիսկոպոսներն սկզբում թափառական կեանք էին վարում և յարաբերութիւն պահպանում իրարից հեռու ընկած համանքների մէջ. նրանք զբաղւում էին և իրանց սեպահական գործերով. բժշկութեամբ, փերեզակութեամբ, խաշնարածութեամբ, արհեստներով և այլն: Բայց երբ համայնքները բազմացան և նրանց կարիքները շատացան, այն ժամանակ նրանցից իւրաքանչիւրը կապուեց իր համայնքի հետ, և վերջինս էր հոգում նրա և նրա ստորագրեալ սարկաւագների ապրուստր:

Հաւատակիցների ժողովը կոչում էր եկեղեցի, որ յունարէն նշանակում է Աստուծոյ ժողովուրդ:

Տիրող հեթանոս իշխանները հալածանք հանեցին նոր վարդապետութեան հետևողների դէմ. այնուհետեւ քրիստոնեանները գաղտնի էին ժողովում և դաւանում իրանց կրօնը։ Որքան հալածանքները սաստկանում էին, այնքան քրիստոնէութիւնը տարածւում էր, որովհետեւ հալածուած հաւատացեալները փախչում էին ամենահեռաւոր տեղեր և քարոզում։ Հայաստանում մեծ հալածանք տեղի ունեցաւ Խոսրովի ժամանակ, երբ շատ քրիստոնեաններ նահատակուեցան։

II.

Տրդատ Մեծ, Նոր հալածանք քրիստոնէութեան դէմ. Ագաթանգեղոսի աւանդութիւնը Հոփսիմեանց և Գայիանեանց մասին. Գրիգոր Պարթև. Յեղաշրջում չողմի կայսրութեան մէջ. Տրդատ ընդունում է քրիստոնէութիւն. Հայ եկեղեցին և յունա-ասորական կըրթութիւն։

Տրդատ Դիոկետիանոսի հաճութեամբ 297 թուին բարձրացաւ Հայաստանի գահը։ Նրա քառասուն տարուայ թագաւորութիւնը միանգամայն խաղաղութիւն բերաւ հայերին, և նըրանք, իրու ՚ի բնէ խաղաղ աշխատանքին նուելրուած ժողովուրդ, անձնատուր եղան իրանց ներքին բարեկարգմանը։
Այդ խաղաղութեան ընթացքում քրիստո-

նէութիւնն աւելի և աւելի տարածւում էր։ Պարսիկներն իրանց պարտութիւնից յետոյ մի երկարատև դաշն էին կապել, որով Հայաստանի և Հռովմի կայսրութեան խաղաղութիւնը ապահովուած էր։ Դիոկետիանոսի նպատակն էր կազմակերպել մի ուժեղ միապետական կառավարութիւն, և նա, իրու քաղաքագէտ, չէր կարող չնկատել, որ հետզհետէ իր աշխարհիկ իշխանութեան կողքին ստեղծւում է միանգամայն անկախ, իր ձգտումներին հակառակ քրիստոնէական համայնքների իշխանութիւնը, որոնք բաժանուած բազմաթիւ եպիսկոպոսութիւնների ցրուած էին երկրի բոլոր կողմերում։ Այդ փոքրիկ հոգեսոր իշխանութիւնները կարող էին խանգարել իր ձգտումներին։ Քրիստոնէութիւնը մուտք էր գործել մինչև իսկ Դիոկետիանոսի պալատը։ Նրա կինն ու քոյրը նոյնպէս ընդունել էին քրիստոնէութիւն, և երբ 302 թուի ձմեռը լէգիոնների մէջ գտնուած քրիստոնեայ զինուորները բացէ ՚ի բաց մերժեցին մասնակցել հնուց սովորութիւն դարձած ՚ի պատիւ աստուածների անելիք պաշտամունքին, այն ժամանակ Դիոկետիանոս բուռն միջոցների դիմեց։ Ապստամբութիւնն այնպէս արագ տարածուեց, մինչև իսկ կայսրը շուարեց։ այնուամենայնիւ նա իրամայեց արիւն չբափել։ Սակայն ամբոխի կատաղութիւնը զապել անկարելի

Էր. Նրա հրովարտակը հրապարակով պատռուեցաւ. մայրաքաղաք Նիկոմիդիան հիմնայատակ կործանուեց, որի փոխարէն նրա պալատը հըլդեհի մատնուեցաւ: Հեթանոս ամբոխը կատադաբար յարձակուեց ամենուրեք քրիստոնեաների վրայ, որոնցից շատերը նահատակուեցան. քրիստոնեայ սպաները աստիճանից և պատուից զրկուեցան: Այս հալածանքի միջոցին քրիստոնեաները ոչ թէ միայն կոտորւում, այլև գիմադրում էին, և պարզուեց, որ քրիստոնեաները պատկառելի ոյժ են կազմում կայսրութեան մէջ: Այնուհետև Դիոկղետիանոս մի հրովարտակով հրամայեց «բոլոր քրիստոնէական տաճարները կործանել, եկեղեցական սպասներն ու գրքերը ոչնչացնել, քրիստոնեաներին տանջանքերի ենթարկել, ստորին դասի հաւատացեալներին զրկել քաղաքացիական իրաւունքներից, ազատ թողած ստրուկներից խլել ազատութիւնը, իսկ ստրուկ դասը զրկուում էր երբեիցէ ազատագրուելու յոյսից»: Թէև այդ հրովարտակով իրաւունք չէր տրուում քրիստոնեաների արիւն թափել, սակայն ամենափոքրիկ գիմադրութիւնը նրանց կողմից առաջացնում էր արիւնհեղութիւն, և կայսրութեան արեւեան մասն ամբողջովին ներկուեց քրիստոնեաների արիւնով: Այդ հալածանքը շատերին քշեց Հայատան՝ իրենց հաւատակիցների մօտ:

Սակայն Հայաստանն էլ զերծ չմնաց այդ հալածանքներից. Տրդատ, որպէս Դիոկղետիանոսի դաշնակից և բարեկամ, մէկը միւսի ետևից երկու հրովարտակ հանեց, որով հրամայում էր հետապնդել և գտնել ամեն տեղ քրիստոնեաներին՝ պատժելու համար: Նա քրիստոնեաների ինչըը խոստանում էր նույիրել նրանց գտնողներին. թագաւորական զինուորները ցըուեցին ամեն կողմ քրիստոնեաներ որոնելու: Հալածանքից ստիպուած հաւատացեալները բնակութիւն էին հաստատում մեծամեծ քաղաքներում՝ հեշտ թագնուելու համար:

Այդ հալածանքից չազատուեց և թագաւորի մտերիմ ու ազգական Գրիգոր Պարթևը, որը նոյնպէս յանձն չառաւ աստուածներին պաշտօն մատուցանել:

Շատ քրիստոնեաներ նահատակուեցան Հայաստանում Տրդատի հրամանով, որոնց թւում և Վաղարշապատի շրջակայքում բնակութիւն հաստատած երկու խումբ հաւատացեալներ. նրանց մէջ կային շատ կոյսեր. նրանց գլխաւորներն էին Հոփիսիմէ և Գայիանէ, որոնք փախել էին Հռովմի կայսրութիւնից:

Սակայն Յ05 թուին Դիոկղետիանոս հարկադրուեցաւ հրաժարուել գահից իր աթոռակցի հետ. գահի շուրջը բարձրացան խոռովութիւններ. կուսակցութիւններն առաջ էին քաշում

իրանց թեկնածուներին. դա հերանոսութեան եւ քրիստոնէութեան վերջին պայման էր, և 312 թուին քրիստոնեայ կուսակցութեան պարագալուխ կոստանդիանոս խոշոր յաղթութիւն տանելով իր հակառակորդների դէմ՝ բարձրացաւ Հռովմի կայսրութեան գահը. քրիստոնէութեան յաղթանակն էր այդ. իսկ յաջորդ 313 թ. տեղի ունեցաւ նրա «Միլանի հրամանը», որով միանգամայն ազատ յայտարարուեց քրիստոնէութիւնը:

Այսպիսի խոշոր յեղաշբջումը Հռովմէական կայսրութեան մէջ չէր կարող անհետևանք մը նալ նրա գերիշխանութիւնը ճանաչող Հայաստանի համար և, յիրաւի, Տրդատ, որ կոստանդիանոսի մտերիմն էր և նրա հարսանիքին հրաւիրուած ու սէր հաստատուած երկուսի մէջ, Դիոկղետիանոսի հրաժարումից յետոյ՝ 306 թուին քրիստոնէութիւնը ազատ կրօն յայտարարեց Հայաստանում:

Ագաթանգեղոս այսպէս է պատմում Տրդատի դարձի մասին.

Գրիգորին Խոր վիրապ ձգել տալուց, կոյսերին և շատ քրիստոնեաների նահատակելուց յետոյ Տրդատի վրայ մի տեսակ մելամաղձութիւն եկաւ, որը տեսեց վեց օր: Այսուհետեւ թագաւորը հրամայեց որսի պատրաստութիւն տեսնել. նա կամեցաւ որսի գնալ: Մինչդեռ նա ուղում էր կառք նստել յանկարծ վայր ընկաւ և շատ սկզբունք սկսեց գժութիւններ անել:

Պալատական կանայք, գլխաւորապէս թագաւորի կինը և քոյը (որոնք ըստ երևութիւն հակուած էին դէպի քրիստոնէութիւնը) թագաւորի հետ պատահած դժբաղդութիւնը նրա՝ քրիստոնեաների և մասնաւորապէս Գրիգորի դէմ հանած՝ հալածանքի հետեանք և քրիստոնեաների Աստուծուց ուղարկուած պատուհաս համարեցին.

Տրդատի քոյը Խոսրովիդուխտ երազ տեսաւ. մի սպիտակազգեստ մարդ ասում էր, որ Գրիգորը կարող է բժշկել թագաւորին: Վերջապէս պալատականները համոզուեցին և Օտա Ամատունեաց իշխանը գնաց Արտաշառ ու Գրիգորին հանեց վիրապից կենդանի. մի քրիստոնեայ կին ծածուկ կերակրել էր նրան վիրապում:

Գրիգոր քարոզեց և հաւատացրեց հիւանդ թագաւորին, որ նահատակուած քրիստոնեաները հոգեապէս ապրում են, մեռած չեն և նրանք իրանց չարչարանաց փոխարէն վարձատրութիւն պէտք է ստանան Աստուծուց: Տրդատ հոգեապէս հանգստացաւ և ընդունեց քրիստոնէութիւն. նրա հետ հաւատացին և շատ իշխաններ ու ժողովրդի բազմութիւն:

Դրանից յետոյ Գրիգորի և Տրդատի առաջին գործն եղաւ վկայարաններ կանգնեցնել կոյսերի բընակած և նահատակուած տեղերում. շինուեցին Գայականէի, Հոկիսիմէի անուսն նուիրած և Շողակաթի անունով վանքերը:

Մինչ Գրիգոր զբաղուած էր քարոզութեամբ, ինքը թագաւորը բոլոր զօրքով Վաղարշապատից արշաւեց գնաց Արտաշատ քաղաքը Անահատական մէհեանը կործանելու: Ճանապարհին հանդիպաց նախ Երամազդի գրիչը կոչուող երազացոյց երազնդհան Տիւր աստուծոյ պաշտամունքի տեղին. այդ մեհեանը

ուսման և գիտութեան վայր էր. հրդեհեցին ու այրեցին այն, իսկ կրակից զերծ մնացած հիմքերը քանդեցին. այնտեղ մժերուած գանձը աղքատներին, տառապեալներին ու չքաւորներին բաժանեցին: Դաստակերսը, սպասաւորներին և քրմերին հողաբաժինների հետ նուիրեցին եկեղեցուն:

Յետոյ արշաւեցին Դարանաղեաց կաւառի թորդան աւանը, որտեղ գտնւում էր սպիտակափառ կոչուած Բարշամի մեհեանը: Մեհեանն ու արձանը կործանեցին, իսկ ոսկին ու արծաթը աւարի տալով աղքաներին բաշխեցին: Գիւղն իր ամրող գաստակերտով ու կալուածներով Աստուծոյ անուանը նուիրելով՝ Փրկչի ո. նշանը կանգնեցին այնտեղ:

Դրանից յետոյ գնացին Անի աւան ամրոցը, որտեղ գտնւում էին Հայոց թագաւորների դամբարանները: Այդտեղ կործանեցին աստուածների հայր կոչուած Արամազդի մեհեանն ու կուռքերը, և տէրունական նշան կանգնելով՝ աւանը բերդի հետ միասին եկեղեցուն նուիրեցին:

Այդտեղից դուրս եկաւ Եկեղեց գաւառը. Երէդ աւանումն էր գտնւում Հայոց թագաւորների պաշտամ Անահիտ ամիկնոջ մեհեանը: Թրմերը դուրս եկան զինուած սպասաւորներով և զօրքով ու կուռմ էին ահազին աղաղակ բարձրացնելով. սակայն տեղի տալով փախան և բարձրաբերձ պարիսպներն էլ կործանուեցին: Թագաւորը զօրքի հետ համայակալ կործանեցին մեհեանը և ոսկին ու արծաթը բաժանեցին: Այդտեղից Գայլ գետով անցնելով քանդեցին Նանէ դիցուհու Արամազդի գտներ մեհեանը, որ Թիլ աւանումն էր: Երկու մեհեանների գանձերը ժողովելով շրջակայքի հետ միասին եկեղեցուն նուիրեցին:

Եկան հասան Արամազդի որդու՝ Միհրի մեհեանը, որ գտնւում էր պարթեական լեզուով Բագայառին կոչուող գիւղում (Դերջան գաւառում). հիմքից կործանեցին և այնտեղ ժողոված գանձերը աւարի տալով աղքատներին բաժանեցին, իսկ այդ վայրերը եկեղեցուն նուիրեցին:

Քրմերից որոնք ընդունեցին քրիստոնէութիւնը, Գրիգոր քարոզեց ու բացատրեց նոր կրօնի վարդապետութիւնը և պաշտօններ տուեց, իսկ չընդունողները փախան Խաղուեաց և Կովկասեան լեռները:

Այդ բոլորից յետոյ Տրդատ ժողով գումարեց Վաղարշապատում և Գրիգորին ընտրելով հովիւ՝ քահանայապետ՝ ուղարկեցին կեսարիա, այնտեղի եպիսկոպոսից ձեռնադրութիւն ստանալու:

Արաթանգեղոս այսպէս է նկարագրում այդ ճանապարհորդութիւնը.

— Գրիգորին ուղեկցում էին Անգեղ տան մեծ իշխանը, Աղձնեաց մեծ բղեշնը, Մարդպետական իշխանը, թագակապ իշխանը, Հայոց զօրքերի սպարապետը, Կորդուաց աշխարհի իշխանը, Ծոփաց աշխարհի իշխանը, Գարգարացոց աշխարհի իշխանը, որ երկրորդ բղեշն էր համարում, Ռշտունեաց աշխարհի իշխանը, Մոկաց աշխարհի իշխանը, Սիւնեաց աշխարհի իշխանը, Ծաւդէից աշխարհի իշխանը, Ուտէացոց աշխարհի իշխանը, Զեր և Զարեանդ գաւառի շահապ իշխանը, Մաղիսազութեան տան իշխանը և Արծրունեաց իշխանը:

Եւ պատրաստուեցին, իրենց հետ նուէրներ վերցրին՝ ուկի ու արծաթ, ձիաներ և ջորիներ, զգեստներ, տեսակ-տեսակ սպամներ այն սրբավայրերի համար, որտեղ առաքեալներն էին լինում. բոլոր եկեղեցիների համար նուէրների պատրաստութիւն տեսան:

Դրիգորին նստեցրին արքայական ոսկեպատ կառքի մէջ, որին լծուած էին սպիտակ ջորիներ. բոլոր իշխանները ժողովուելով նրա հետ կառքերով և երիվարներով, զօրքով և իւրաքանչիւր գնդի դրօշակներով շարժուեցին գնացին Այրարատեան գաւառի Վաղարշապատ քաղաքից: Համնելով Յունաց երկրի սահմանները՝ մէծամեծ պատիւներ ստացան և հիւրասիրուեցին շատ քաղաքներից:

Նեռնդիս կաթողիկոսը և քահանայական դասը մէծ պատուով ընդունեցին նորադարձներին, տօն և մաղթանք կատարեցին:

Նոյն հանդիսով և բազմաթիւ յոյն քահանաներով Գրիգոր վերադարձաւ Հայաստան:

—Եկան հասան Սեբաստիա... այնտեղ Գրիգոր շատ եղբայրներ գտաւ, որոնց համոզեց իր հետ գալ, որպէսզի իր աշխարհում վիճակներ տայ. նրանցից մեծամեց խմբեր կազմելով իր հետ վերցրեց.

—Երբ Գրիգոր հասաւ Հայոց աշխարհը, լսեց որ Տարօնի երկրում Վահեվահեան մեհեանն է մնացել, որ շատ հարուստ էր, ոսկով և արծաթով լի, որովհետեւ շատ թագաւորներ բազմաթիւ նուէրներ էին տուել. նա համարւում էր ութերորդ սրբավայրը, որտեղ վիշտապարագ անուանուած Վահագնն էր. դա Մեծ Հայքի թագաւորների ուխտատեղին էր և գտնւում էր Եփրատ գէտի վրայ՝ Քարքեայ լիւան դէմուղէմ և որը յաճախակի ուխտագնացութեան համար Աշտիշատ էր կոչ-

ւում, որովհետեւ այն ժամանակ դեռ ևս երեք մեհեաններն էլ կանգուն էին. առաջին մեհեանն էր Վահեվահեան, երկրորդը՝ ոսկեմօր ոսկեծին աստուածունու, որի բազինն էլ հէնց կոչւում էր ոսկիհատ ոսկիհամօր աստուածունու և երրորդը՝ Աստղիկ կոչւուած դիցահու մեհեանն էր, որ յունարէն ասում էին Վահագնի սենեակ. նա ինքն էր Աֆրոդիտէն: Ա. Գրիգոր ցանկացաւ այն էլ քանդել որովհետեւ տգէտ մարդիկ դեռևս կատրում էին այնտեղի պաշտամունքը:

Նա իր հետ բերել էր Յովհաննէս Մկրտչի և Աթանազիյնէս նահատակի նշխարները: Մեհեանը կործանելով՝ նշխարներն այնտեղ ամփոփեց: Որովհետեւ այստեղ մեծ դիմադրութեան հանդիպեցին, ուստի մեհեանն այնպէս կործանեցին, որ շինութեան հետքն անդամ չերևաց:

Գրիգոր առաջին մկրտութիւնն այդտեղ կատարեց և շատ հաւատացեալների մկրտելով՝ 'ի յիշատակ սրբերի տօն նշանակեց, որպէսզի ժողովրդի սովորութիւնն անխախտ պահպանուի:

Տրդատ լսելով Գրիգորի վերադարձի մասին, մեծ բազմութեամբ ընդառաջ գնաց և Արածանի գետում մկրտուեցին:

Այսպիսով Տրդատի և Գրիգորի ջանքերով Հայաստանը պաշտօնապէս ընդունեց քրիստոնէութիւն: Ինչպէս Տրդատ, նոյնպէս և Գրիգոր մեծ դեր խաղացին այդ գործում:

Հստ աւանդութեան Գրիգոր Տրդատի հօրն սպանող Անակի որդին էր, որին յոյն սանդու Սոփիան նախարարների վրէժինդրութիւնից ազատելով փախ-

ցրել էր կեսարիա. այնտեղ յոյն ընտանիքում մեծանալով՝ Գրիգոր սնուել էր քրիստոնէական հոգով, ամուսնացել էր Մարիամ անունով յոյն աղջկայ հետ, ունեցել էր երկու որդի՝ Արիստակէս և Վրթանէս և ապա բաժանուելով կնոջից՝ ինքը գնացել էր Հռովմ Տրդատին ծառայելու՝ իր հօր մեղքերը թեթևացնելու նպատակով։ Տրդատ շատ սիրում էր նրան, թէև զիւտէր նրա քրիստոնեայ լինելը։ Գրիգոր Տրդատի հետ վերադարձել էր Հայաստան։

Գրիգոր Հայաստանում քրիստոնէութիւնը արմատացնելու նպատակով հիմնեց եկեղեցիներ և վանքեր, որոնք՝ բացի ուխտատեղիներ և աղօթատներ լինելուց՝ ծառայում էին և իրեւ դպրոցներ։ Ժողովեց հին կրօնի ներկայացուցիչ քրմերին ու նրանց որդոց և սովորեցրեց քրիստոնէական վարդապետութիւնը, և այս՝ կրկին նպատակով. նախ՝ ժողովրդին քրիստոնէութեան դէմ գրգոռողիների թիւը կրպակաւէր և երկրորդ՝ երկրի հասկացող ու գրագէտ դասը նրանք էին կազմում։ Նրանց ուսացանում էին յոյն քահանաները յոյն լեզուով և գրով. այսպիսով մինչ հարաւային Հայաստանը ենթակայ էր ասորի գրականութեանը, արևմտեան և հիւսիս-արևելեան Հայաստանը ենթարկուեցաւ յունական ուսմունքին։ Դպրոցներում սովորող քրմերից և նրանց որդիներից գուրս եկան առաջին հայ քրիստոնեայ հոգեորականները։ Տըր-

դատ այնպէս տարուել էր նոր վարդապետութեամբ, որ տէրութեան գործերը թողած շըրջում էր գաւառից գաւառ և քարոզում ժողովրդին։ Որպէսզի ժողովրդի յիշողութիւնից միանգամայն ջնջէ հին հեթանոսութիւնը յիշեցնող սովորութիւններն ու յիշատակարանները, Գրիգոր արգելեց հայ լեզուն եկեղեցիներում, և ծիսակատարութիւնների ժամանակ գործ էին ածում ասորի կամ յոյն լեզուն։ հեթանոսական տօները վերածեց քրիստոնէականի, հեթանոսական սրբավայրերում և ուխտատեղիներում կանգնեցրեց քրիստոնէական աղօթատներ։ Նա արգելեց հեթանոսական սովորութիւնները, քարոզեց՝ հեռանալ բոլոր աշխարհային գուարճութիւններից, նուիրուել աստուածպաշտութեան և այդպիսով ակնկալել երկնքի արքայութեանը։ Լուց հայ գուսանի երգը, որ հին հեթանոս թագաւորների գործերն էր փառաբանում և յիշեցնում անցեալը. դադարեցին հեթանոսական տօնակատարութիւնները և միմիայն քրիստոնէական անշուք տաճարների կամարների տակ յոյն և ասորի հոգեորականներն աղօթքներ էին մըմնջում ժողովրդին անհասկանալի լեզուներով. իսկ ժողովրդը լուռ ու մունջ լսում էր՝ առանց հասկանալու նոր՝ քրիստոնէական Աստուծոյ լեզուն։ Գրիգոր քրիստոնէութիւնը Հայաստանում

արմատացնելու նպատակով երկիրը վիճակների քաժանեց ըստ գոյութիւն ունեցող նախարարութիւնների. իւրաքանչիւր վիճակի համար եպիսկոպոս նշանակեց, որոնք թէ իրրե դատաւորներ էին ներկայանում և թէ ուսուցանում էին ժողովրդին: Նայած նախարարի բարձին, նրա եպիսկոպոսն էլ նոյն աստիճանին էր համարւում. այլև եպիսկոպոսի պարտականութիւնն էր՝ յետ կանգնեցնել նախարարին եւ առհասարակ իշխանական դասակարգին հակաֆիսոնէական ընթացքից եւ նրան ենթակել եկեղեցու օրէնադրութեանը: Նոյն դերը հասարակ ժողովրդի նկատմամբ կատարում էին քահանաներն ու վարդապետները:

Տրդատ՝ բացի կործանած մեհեանների հարստութիւնն ու ահազին կալուածներ եկեղեցիներին ու վանքերին նուիրելուց, որոնց տէրն ու կարգադրիչը հոգկորականութիւնն էր, ընդարձակ կալուածներ ևս նուիրեց թէ Գրիգորին ու իր սերնդին և թէ զանազան վանքերի ու եկեղեցիների: Միմիայն Գրիգոր ստանում էր յիսուն գաւառի եկամուտ: Այսպիսով նայ եկեղեցին էլ նոյնպիսի կազմակերպութիւն ստացաւ, որպիսի քաղաքական կազմունէր Հայաստանը:

Սակայն իշխաններից շատերը առ ահի էին ընդունել քրիստոնէութիւնը. նրանց համար

խորք էր նոր կրօնի պահանջները. մանաւանդ նրանց համար օտարութիւն ունեցող նախարարութիւնների իրանց գործերում խառնուելը. իսկ այդ բոլորի պատճառ համարում էին եկուոր պարթե ցեղի ներկայացուցիչ Տրդատին, որն իր չափից դուրս յունասիրութեամբ հայրէնի սրբութիւններն էր խախտում. եւ սկսուեց մի խոլ ատելութիւնների բնիկ նախարարական տիմերի կողմից դէպի բազաւորող տունը: Պայքար էր սկսուել ննի եւ նորի մէջ:

Տրդատ տեսնում էր այդ ամենը և զայրանում, սակայն նա իբրև ճշմարիտ քրիստոնեայ, թողեց աշխարհային կեսնքը և քաշուեց ճգնելու: Ըստ աւանդութեան, երբ նախարարները նրան երկար համոզում էին վերադառնալ և նա չէր համաձայնւում, նրան քունաւորեցին. նա մեռաւ 336 թուին: Նրանից առաջ արգէն մեռել էր Գրիգոր, հայոց առաջին կաթողիկոսը:

Գրիգոր հանդիսացաւ որպէս երկրորդ նըշանաւոր քարոզիչ քրիստոնէութեան. նա հայերին վերջնականապէս հանեց հեթանոսական խաւար հասկացողութիւնից, դրա համար էլ կոչուեց կուսաւորիչ. հայ եկեղեցին կոչւում է կուսաւորչական եկեղեցի, իսկ այդ եկեղեցուն պատկանող հայերը՝ լուսաւորչական հայեր:

III.

Քրիստոնեայ և հեթանոս կուսակցութիւններ. Քրիստոնէութեան քարոզութիւնը հարևան երկրնեռում. Խոսրով կարձահասակ (կոտակ) (336—343) և Տիրան (343—353). Պարսից ջանքերը Հայաստանն իրանց գերիշխանութեան տակ ձգելու.

Տրդատ մեծի քառամնամեայ խաղաղ թագաւորութիւնը նպաստեց Հայաստանի բարգաւաճմանը, ուժեղանալուն և քրիստոնէութեան տարածմանը՝ նոյն իսկ հարևան երկրներում։ Տրդատի շնորհիւ քրիստոնեայ հոգեորականութիւնը մեծամեծ արտօնութիւններ ստացաւ. հոգեորականութեան ներկայացուցիչներն աշխատում էին աշխարհիկ իշխանութեան ներկայացուցիչներին իրենց ենթարկելու նրանք ամեն քայլափոխում խառնում էին քաղաքական եշխանութեան կարգադրութիւնների մէջ. շատ անգամ կանգնեցնում էին նրանց գործադրութիւնը, եթէ դրանք դէմ էին իրանց ձգտումներին և քրիստոնէական վարդապետութեան ոգուն։ Պատմական կեալիում տեղի ունեցող այդպիսի փոփոխութիւնները առանց ընդհարումների չեղան։ Քաղաքական իշխանութեան ներկայացուցիչներն իրանց վայելած դարեւոր

իրաւունքները նետութեամբ չէին զիջիլ հոգեւորականութեանը:

Կոստանդիանոս մեծի մահուանից յետոյ Արևմտեան կայսրութիւնն առժամանակ թուլացաւ՝ շնորհիւ ներքին խոռվութիւնների. նա այլևս ժամանակ չունէր զբաղուելու Արևելքով. Հայաստանն իր բաղդին էր քողնուած։ Տրդատ մեծի թագաւորութեան վերջին տարիններն արդէն խուլ դժգոհութեան նշաններ էին նկատւում գէպի թագաւորող Արշակունի տոհմը, որը նոր կարգերի պաշտպան էր։ Պարսկական գահի վրայ բարձրացել էր Շապուհ մեծը, որը ձբգտում էր Պարսկաստանին վերադարձնել իր նախկին փառքը։

Այսպիսի պայմանների մէջ հէնց որ Հայաստանի գահը բարձրացաւ Խոսրով կարձահասակ (կոտակ)՝ մի թոյլ և վախկոտ մարդ, իսկոյն ծածկուած կրքերը բռնկուեցին։ Սյդ ժամանակ դեռևս շատելը ծածուկ կուապաշտութեան էին հետեւում և հեթանոսական սովորութիւնները շարունակում. նրանք դէմ էին քրիստոնէութեանը. դրա համար էլ դաւադրութիւն կազմեցին Վրթանէս կաթողիկոսի կեանքի դէմ։ Դաւադրութեանը գլուխ էր կանգնած թագուհին, որին կամողիկոսը յաճախ յանդիմանում էր իր հեթանոսական վարք ու բարքի համար։ Սակայն դաւադրութիւնը չյաջողուեց, որով-

հետեւ թագուհին վախենում էր ամուսնուց:

Նախարարներն օգտուելով թագաւորի թոյլ քնաւորութիւնից՝ սկսեցին իրար երկիր ոտնակոլս անել և կուռքել. մանաւանդ մեծ կոտորած սկսուեց Որդունեաց և Մանաւագեան երկու նախարարական հին տոհմերի մէջ. Թագաւորն ու կաթողիկոսը Ալբիանոս նշանաւոր եպիսկոպոսին ուղարկեցին նրանց հաշտեցնելու. սակայն նախարարներն անարգեցին նըան և ուշք չդարձրին նրա խօսքերին: Այն ժամանակ թագաւորը Մամիկոնեան Վաչէ սպարապետին զօրքով ուղարկեց նրանց դէմ: Վաչէն երկու նախարարութիւններն էլ ջնջեց:

Մինչ այս, մինչ այն՝ հիւսիսային վայրենաբարոյ ցեղերը միացած հեղեղեցին Հայատան:

Նրանց յարձակման մասին հետեւալն է պատմը ում. Գր. Լուսաւորչի թոռն Գրիգորիս, որ Աղուանից կողմի քրիստոնեաների վրայ եպիսկոպոս էր կարգուած, անցաւ կոմիս ուրիշ ցեղերի քարոզելու. նա քարոզեց Մազքթաց Աննեսան Արշակունի թագաւորին ևս, նրա քարոզութիւնները մեծ ազդեցութիւն էին գործում: Սակայն այդ ցեղերը, որոնց զբաղմունքն ու ապրուստի միջոցը յափշտակութիւնն ու աւարասութիւնն էր, լուր տարածեցին, որպէս թէ Հայոց թագաւորն է դիտմամբ այդ քարոզին ուղարկել, որպէսզի իրանց սովորական սպարապմունքից յետ կանգնեցնէ:

—Եթէ չյափշտակենք, չսւերենք, ուրիշից չխենք, այլևս ինչնու պիտի ապրենք, ասում էին նրանք:

Գրիգորիսին նահատակեցին ու մհծամեծ խմբերով յարձակուեցին Հայաստանի վրայ:

Խոսրով և Վրթանէս թողեցին երկիրը և ապաւինեցին ամուր տեղեր: Վաչէ սպարապետը միացած մի քանի նախարարների հետ կարողացան ասպատակաւորներին քշել Հայաստանից:

Երկիրը նոր էր խաղաղուել, երբ Շապուհ զօրք ուղարկեց Հայաստանը գրաւելու. նրա հետ ծածուկ միացել էին երկու նախարարական տոհմեր, որոնք խոստացել էին երկիրն ու թագաւորին նրա ձեռքը մատնել: Դաւադրութիւնը բացուեց. երկու դաւադիր նախարարութիւնները ջնջուեցին (Խշունեաց և Աղճնեաց): Այնուհետև Խոսրով զգուշութեան համար պահանջեց, որպէսզի նշանաւոր նախարարները միշտ արքունիքում լինեն: Զինուորական ոյժը կենարոնացը և սպարապետութիւնը յանձնեց Մամիկոնեան տոհմին: Այդ միացած ուժով հայերը երկու անգամ պարսից արշաւանքի առաջն առան:

Եթէ Խոսրով հու հնագանդ էր կաթողիկոսին և քրիստոնեայ կուսակցութիւնն իր կողմն ունէր, որդին Տիրան (313-353) իր ինքնահաճ բնաւորութեամբ միանգամայն դէմ էր

գնում կաթողիկոսի պահանջներին։ Տիրան հետևում էր հեթանոսական սովորութիւններին։ որի պատճառով կաթողիկոսը յաճախ յանդիմանում էր։ Միայն թագաւորը չէր հետևում կուապաշտական սովորութիւններին, այլև իշխաններից շատերը։

— Հայերը հենց սկզբից քրիստոնէութիւնն ընդունել էին ոչ թէ ջերմիուանդ հաւատով, այլ հարկադրուած՝ իբրև մարդկային մի մոլորութիւն։ ոչ թէ դիտակցաբար, համոզուած, ինչպէս որ հարկաւոր էր, այլ մի քանիսը միայն, որոնք յոյն և ասորի լեզուներին տեղեալ էին և նրա (քրիստոնէութեան) մանրամասնութիւններին ծանօթ։ Շատերը սիրում էին իրանց առասպեկների վիպասանական երգերը։ Նրանց էին հաւատում և նրանցով էլ կրթում... դրա համար էլ կուռքերի հին պաշտամունքը գեռ ծածուկ կատարում էին...։

Երիտասարդ Յուսիկ կաթողիկոսը սաստիկ հախատում էր թագաւորին, մինչև իսկ մի անգամ նրան արգելեց եկեղեցի մտնել։ Տիրան զայրացած բրածեծ անել տուաւ նրան, որից և կաթողիկոսը մեռաւ։

Տիրան միւս կողմից էլ հալածանք հանեց նախարարական տոհմերի դէմ, նրա այդ տրամադրութիւնից օդտուեց Մարդարկետունի Հայր կոչուող նախարարը, որը կոտորել տուաւ Ռըշտունեաց և Արծրունեաց նզօր նախարարու-

թիւնները։ Այդ ցեղերից քչերն ազատուեցին։ Յուսիկի վոխարէն Տիրան կաթողիկոսութեան համար հբաւիրեց Դանիէլ անունով ասուրի եպիսկոպոսին, որ Գր. Լուսաւորչի աշակերտըն էր եղած, վերակացու էր բոլոր վանքերի և եկեղեցիների վրայ և խստակեաց մարդ էր։ Դանիէլ գալով՝ առաջին գործն եղաւ Տիրանին նախատել հակաքրիստոնէական ընթացքի և Յուսիկին սպանել տալու համար, որի համար և Տիրան նրան խեղդամահ անել տուաւ։

Շապուհ լսեց Հայաստանի անցքերը և Սիւնեաց նախարարի դրդմամբ զօրք ուղարկեց։ հովվմայեցիք չկարողացան հայերին օգնել, և Տիրան խաբէութեամբ Պարսկաստան տարուելով աչքերի լոյսից զրկուեց։

Տիրանի գերութիւնից յետոյ հայոց մեծամեծները նոր ուշքի եկան, խորհուրդ կազմեցին և դեսպանութեամբ դիմեցին Կոստանդին կայսեր օգնութեանը։ Կայսրը նոր էր վերադարձել գերմանացիների դէմ ձեռնարկած արշաւանքից, երբ հայերը ներկայացան նրան։ Նրանք յիշեցրին Տըդատ մեծի և Կոստանդիանոս մեծի մէջ եղած դաշինքը և օգնութիւն խնդրեցին։ Կայսրը օգնական զօրք ուղարկեց։ պարսիկները պարտուեցին և Շապուհ ստիպուած էր Տիրանին իր ընտանիքով ազատ արձակել։ Տիրան վերադարձաւ Հայաստան և կուրութեան պատճառով գա-

հից հրաժարուելով՝ թագաւորութիւնը զիջեց իր
որդի Արշակին (353-368):

IV.

Արշակ (353-368). Հայաստանի գրութիւնը. Դրա-
ցի պետութիւնների վերաբերմունքը. Արշակի ձգտում-
ները. Պարսկական արշաւանքները. Արշակի ծրագրի
խորտակումը և նրա վախճանը:

Հայաստանում անկախ քաղաքական կեանք
ստեղծելու վերջին փորձը կատարեց Արշակ:
Պայմանները նպաստաւոր էին. Բիւզանդիայի
դահն էր բարձրացել ալլմանների դէմ խոշոր
յաղթութիւն տանելուց յետոյ Յուլիոս Ուրացո-
ղը. Նա ուզում էր վերականգնել հեթանոսական
կարգերը և ստեղծել ուժեղ միապետական կա-
ռավարութիւն. դրա համար նա խլեց եկեղեցի-
ներից իր նախորդների շնորհած արտօնութիւն-
ները: Նա աւելի շատ զբաղուած էր իր ներքին
պետական գործերով. հայերը թողնուած էին
իրանց բաղդին: Պարսիկներն զբաղուած էին
հոների դէմ արշաւանքով, և նրանց ձեռնուու-
չէր Հայաստանի համար հռովմայեցիներին պա-
տերազմի առիթ տալ:

Արշակ օգտուեց իր այդ գրութիւնից և
ցանկացաւ իր արևմտեան դրացուն հետեւելով՝
ստեղծել մի ուժեղ միապետութիւն: Իր այդ

նպատակին համելու համար նախ վերականգնեց
պարթև ցեղի կաթողիկոսութիւնը: Նախարար-
ները, թագաւորն ու գինուորականները ընտրե-
ցին Արշակի թիկնապահ—սենեկապետ Ներսէսին
կաթողիկոսացու: Ներսէս շարունակ թագաւորի
գլխավերնը կանգնած՝ բռնած էր ունենում նրա
ականակուռ սուրբն ու կամարը (գօտին):

Ներսէս ըստ ընդունուած սովորութեան գնաց
կեսարիա և կաթողիկոս ձեռնադրուեց: Նա հոգ տա-
րաւ Գր. Լուսաւորչի գրած կարգերը վերանորոգելու:
Եպիսկոպոսների ժողով գումարեց Աշտիշատում, որ-
տեղ անդրանիկ եկեղեցին էր հիմնուած, կարգադրեց,
որ ամեն տեղ դպրոցներ բացուին յոյն և ասորի լե-
զուններ ուսուցանելու համար. հիմնեց շատ աղքատամոց-
ներ, անկելանոցներ, հիւանդանոցներ. մշտական եկա-
մուտներ նշանակել տուաւ եկեղեցապատկան կալու-
ածներից. Զնայելով որ աղքատամոցներում ամեն բան
պատրաստի կարելի էր գտնել, այնուամենայնիւ նրա
սեղանը միշտ բաց էր օտարականների և աղքատնե-
րի առաջ: Հրամայեց այլևս հեթանոսական սովորու-
թեամբ ննջեցեալների վրայ կոծ չանել. արգելեց մեր-
ձաւորների ամուսնութիւնը, արգելեց դռնէ դռւոն
շընելն ու մուրալը. թագաւորից սկսած՝ ամենքին էլ
պատուիրեց գութ ունենալ դէպի ընկերը, ծառաներն
ու հպատակները: Այսպիսի գործերի համար նրան Մեծ
մականունը տուին:

Արշակ ուժեղ կամքի տէր և քմահաճ մարդ
էր, նա շատ քիչ էր ենթարկելում հոգեորակա-
ր:

նութեան պահանջներին. միւս կողմից նա աշխատում էր նախարարների նշանակութիւնը ձգել ժողովրդի աչքում, որպէս զի հավատակները միայն մի թագաւոր ճանաչեն. իր այդ ձգտմանը հակառակող նախարարութիւնները անխընայ ոչնչացնում էր. հակառակորդները գլխաւորապէս Հայաստանի հին բնիկ նախարարական տոհմերն էին, որոնք ատում էին եկուոր պարթեներին. Նրա ծրագրին համամիտ էր Մարդպետական նախարարութեան Հայրը, որը դէմ էր գեղեցիկ և պտղաւէտ գաւառները «կանանցահանդերձ» մարդկանց տալուն. դրա համար նա բացարձակ յանդիմանութիւն էր կարգում Տըրդատ մեծի յիշատակին և ընդհանրապէս Արշակունիների հասցէին. սակայն նա դաւադրութեան զոհ գնաց:

Արշակ Հայաստանի ամբողջ զինուորական ոյժը կենտրոնացրել և իրեն էր ենթարկել. մնացած նախարարներն անզօր էին նրան հակառակելու. Սպարապետ էր կարգուած Մամիկոնեան տոհմից հոչակաւոր Վասակ զօրավարը:

Յուլիոս Ուրացողին յաջորդել էր Կոստանդին, որն աշխատում էր Արշակին դրաւած պահել. նա արձակեց Տիրանի տուած պատանդներին և կայսերական պալատի օրիորդներից մէկին կնութեան ուղարկեց նրան:

Շապուհ հետեւից նոյն քաղաքականութեանը.

Արշակին հրաւիրեց Պարսկաստան, մեծ պատիւներ տուաւ (նրանք զրկախառնուեցին իբրև հայր և որդի, կամ իբրև եղբայրներ) և խօսք առաւ նրանից, որ իր կողմնակիցը կըլինի:

Արշակ ևս առաւել հպարտանում էր տեսնելով հզօր հարեանների այդպիսի վերաբերմունքը: Նա աւելի ևս հպարտացաւ, նրա կատաղի բնաւորութիւնն աւելի ևս գրգռուեցաւ: նախարարական իրաւունքներն ՚ի չիք դարձնելու նպատակով հիմնեց Արշակաւան բաղաբը, որտեղ իրաւունք տուաւ բնակուելու ամեն մի յանցագործի: Ներսէս յորդորում էր յետ կանգնել այդ ընթացքից, սակայն Արշակ արհամարհեց նրան:

Նախարարների խուլ ատելութիւնը Արշակին կասկածամիտ և դիւրագրգիռ դարձրեց. Նրա այդ բնաւորութիւնից շատ անգամ օգտըւում էին չարամիտ մարդիկ՝ իրանց անձնական հաշիւների համար. դրա հետեւանքը եղաւ մեծ խոռովութիւն և արիւնհեղութիւն արքայական ընտանիքի մէջ, որին զոհ գնացին հարազատ հայրը, կինը և եղբօր որդին: Նա իր հալածանքները նախարարական տոհմերի դէմ շարունակելով՝ միանգամայն ջնջել տուաւ մի քանի նախարարութիւններ և նրանց կալուածները յարքունիս գրաւեց: Ներսէս վշտացած նրա հակաքրիստոնէական ընթացքից՝ բոլորովին հեռացաւ

նրանից և հրաժարուեց կաթողիկոսութիւնից։
Մինչ Շապուհ զբաղուած էր հոների դէմ
արշաւանքով՝ հռովմայեցիք առիթից օգտուելով
գրաւել էին Միջագետքը և հաշութիւն էին պա-
հանջում։ Շապուհ աւարտեց իր արշաւանքը և
յետ պահանջեց թէ Միջագետքը և թէ Հայաս-
տանը, և երկու պետութիւնների մէջ պատե-
րազմը գրգռուեց։ Արշակ սպասում էր՝ թէ որը
իր հզօր հարեաններից կը հրաւիրէ օգնելու. յոյ-
ներն արհամարհեցին նրան, դրա համար էլ նա
վիրաւորուած ընդունեց Շապուհի հրաւէրը։
Նախ քան պարսիկների ժամանելը՝ Արշակ Վա-
սակ սպարապետի առաջնորդութեամբ յաղթեց
հռովմայեցիներին և հարկադրեց նրանց՝ պար-
սիկներից հաշտութիւն ինդրել։ Շապուհ գրկա-
բաց ընդունեց Արշակին, մեծ պատիւներ տու-
աւ, խոստացաւ իր դստերը կնութեան և հիւ-
սիսային Պարսկաստանում կալուածներ տալ
նրան։ Սակայն Արշակ թէ այդ յաղբութիւնից
եւ թէ Շապուհի վերաբերմունքից չկարողացաւ
օգտուել. նա իր կասկածամիտ բնաւորութեան
ընորիիւ զոհ գնաց Սիւնեաց Անդովկ իշխանի
դաւադրութեանը. մինչ Շապուհ պատրաստում
էր իր խոստումներն իրագործել, Արշակ գիշերով
թողեց ու փախաւ։

Հռովմայեցիք պարտաւորուեցան ընդունել
Շապուհի պայմանները, դրանցից մէկն էր. հա-

յերը թողնուում էին իրանց բաղդին. յոյներն
իրաւունք չունեին հայերին օգնելու։
Այնուհետև Շապուհ իր գէնքերը դարձրեց
Արշակի դէմ. պատերազմը մի քանի տարի տևեց,
և շնորհիւ Վասակ սպարապետի զինուորական
ընդունակութիւնների և ճարպիկութեամ՝ յաղ-
թութիւնը միշտ էլ մնում էր հայերի կողմը,
քանի նրանց զինուորական ոյժը կենտրոնացած
էր. սակայն Շապուհի մեքենայութիւնները մի
կողմից, պատերազմի հասցրած երկրի Տիտե-
սական հայքայումը միւս կողմից պառակտում
առաջացրին Հայաստանում. նախարարներից
շատերը հրաժարուեցին Արշակին լսել: Նախա-
րարներից մի քանիսը, որոնց թուում և Արծրու-
նի Մեհրաժանը, բացարձակ անցան Շապուհի
կողմը։ Հայաստան մատնուեց անիշխանութեան
և Արշակ ու Վասակ այնքան յաղթութիւններ
տանելուց յետոյ՝ անօդնական ու լքուած
ստիպուած եղան լսել Շապուհի հրամանը և
գնալ Պարսկաստան։ Շապուհ Վասակին սպանել
տուաւ, իսկ Արշակին աքսորեց Անյուշ բերդը,
որտեղ աքսորւում էին մահապարտները։

Փաւստոս Բուզանդացին հետևեալ աւանդութիւնն
է բերում Արշակի վախճանի մասին։
— Այնուհետև պարսից Շապուհ թագաւորը կան-
չեց կախարդներին, աստղագէտներին և գրբացներին
(քաղդէացիներին), խոսաց նրանց հետ և ասաց. «Ես

շատ անգամ ցանկացայ Հայոց Արշակ թագաւորին սիւրել, բայց նա միշտ էլ անարգեց ինձ: Նրա հետ խողաղութեան ուխտ կապեցի, նա իլանց քրիստոնէական կրօնի համաձայն երգուեց աւետարանի վրայ և զբժեց իր երգմանը: Ես նրան, իրբու իմ որդուն, բազմաթիւ բարիքներ ցանկացայ գործել, բայց նա այդ բոլորի փոխարէն չարիք գործեց: Կանչեցի Տիսրոն քաղաքի երէցներին և կարծում էի, նրանք նենդութեամբ երգուեցրին նրան ու խարել տուին ինձ: Երէցներին, իրեւ մահապարտների, տանջանքների ենթարկել տալով՝ հրամայեցի նրանցից եօթանասուն հոգու մի փոսի մէջ փողոտել, իսկ նրանց հետևողներին կոտորել: Այն Աւետարանը, որի վրայ Արշակ թագաւորը երգուեց, և որը նրանց քրիստոնէական ուսման գլուխն է, շղթաներով կապեցի և այժմ գանձարանումս է: Սակայն ես յիշում եմ Մարի երէցի խօսքերը. նա ասում էր, «Մենք արդարութեամբ երգուեցրինք. իսկ եթէ նա ստեց, այն Աւետարանը բերել կըտայ ձեզ մօտ»: Ահա այս խօսքերը ճշտութեամբ կատարուեցին: Այս քանի տարի է՝ արիները Արշակի դէմ պատերազմ են մղում, սակայն ոչ մի տարի յաղթել չկարողացանք. այժմ իր ոտքով է եկել. եթէ իմանայի, որ այսուհետեւ ինձ հետ կապած ուխտի մէջ հաստատ ու ինձ հաւատարիմ կըմնայ, մեծ պատիւներով և խաղաղութեամբ իր աշխարհը կ'արձակէի»: Իսկ զրբացները նրան պատասխանեցին. «Մեղ այսօր արձակիր և վաղը քեզ կըպատասխանենք»:

Հետեւել առաւոտեան զրբացներն ու աստղագէտները թագաւորի մօտ ժողովուելով ասացին. «Արշակ թագաւորը, որ այժմ եկել է քեզ մօտ, ի՞նչ ձեռվ է խօսում և ի՞նչպէս է իրեն պահում»: Թագաւորն ասաց, «Նա իրեն համարում է իմ ծառաներից մէկը,

ուզում է ոտքիս տակի փոշին լինել»: Նրանք ասացին. «Արա այնպէս, ինչպէս մենք ենք ասում, նրան պահիր այստեղ, դեսպաններ ուղարկիր Հայոց աշխարհը, երկու բու հող և մի դոյլ ջուր բերել տուր Հայոց սահմաններից: Յետոյ հրաման կըտաս՝ վրանիդ յատակի կէսը ծածկել հայաստանից բերած հողվ. ինքդ կըբոնես Հայոց Արշակ թագաւորի ձեռքից, կըտանես այն կողմը, որտեղ իսկական հողը կըլինի և նրան հարցուփորձի կ'ենթարկես: Կրկին կըբոնես նրա ձեռքից և կըտանես հայկական հողի վրայ ու կըլիս նրա խօսքերը: Դրանից յետոյ դու կ'իմանաս՝ թէ Հայաստան վերադառնալուց յետոյ քեզ հետ կապած ուխտի մէջ հաստատ պիտի մնայ, կամ թէ գաշինքը պիտի պահնէ թէ ոչ: Եթէ Հայաստանի հողի վրայ նա խիստ լեզուով խօսայ, իմացած եղիր՝ որ օր հասաւ Հայաստան աշխարհը, նոյն լեզուով պիտի խօսայ, նոյն պատերազմը, նոյն ճակատամարտերը և նոյն թշնամութիւնը պիտի նորոգէ քեզ հետ»:

Պարսից թագաւորն այս բանը լսելով գրբացներից՝ տաճկական ուղարկով մարդիկ ուղարկեց Հարից յաստան հող և ջուր բերելու: Մի քանի օրից յետոյ նրանք վերադարձան բերելով՝ ինչի որ ուղարկուած էին: Ապա Շատրու թագաւորը հրամայեց իր խորանի յատակի կէսը ծածկել բերած Հայոց հողով, ջուրն էլ ցանել վրան, իսկ կէսը թողնել իր բնական երկր հողը: Բերել տուաւ և Հայոց Արշակ թագաւորին, իսկ ուրիշ մարդկանց զուրս անել տուաւ: Նրա ձեռքից բնած շրջեցնում էր զրօննելով: Վրանի մէջ անցուցած անելով, երբ ձեմում էին պարսից հողի վրայ, ասում է, «Հայոց Արշակ թագաւոր, ինչո՞ւ ինձ թշնամի գարձար, ես քեզ որդու պէս սիրեցի, ցանկացայ իմ գարձար, ես քեզ որդու պէս սիրեցի, ցանկացայ իմ գարձարը քեզ կնութեան տալ և որդեգրել քեզ, սակայն

դու թշնամացար ինձ առանց իմ ցանկութեան՝
քո կամքով թշնամի գարձար ինձ հետ և պատերազ-
մեցիր»: Արշակ թագաւորն ասաց, «Մեղք գործեցի և
յանցաւոր եմ, որովհետեւ, մինչ ես եկայ և յաղթելով
կոտորեցի քո թշնամիներին և դրա համար քեզնից
պարզե էի սպասում, իմ թշնամիները հրավորեցին
ինձ, երկիւղի մէջ ձգեցին և փախցրին քեզնից: Այն
երգումը, որով ես երգուեցի, ինձ առաջ մդեց և ես
ահաւասիկ քո առաջ եմ: Ահա քո ծառան ձեռքիդ է.
արա, ինչ որ ցանկանում ես. սպանիր ինձ, որովհետեւ
ես, իբրև քո ծառան, շատ յանցաւոր, մահապարտ
եմ»: Իսկ Շապուհ թագաւորը բռնիւղ նրա ձեռքից՝
շրջում էր և ճեմում ու չքմեղ ճեանալով բերում Հա-
յատանի հողի վրայ: Երբ այդ տեղին էր հասնում և
ոտք դնում հայկական հողի վրայ, սաստիկ ըմբռստա-
նալով և հապատամնալով ուրիշ տեսակ էր խօսում և
ասում. «Իմ նախնեաց վրէժը և Արտաւան արքայի
մահը քեզ և որդոցդ չպիտի ներեմ, որովհետեւ դուք,
ծառաներ, այժմ ձեր տէրերի գահն էք յափշտակիլ.
բայց չպիտի գագարեմ, մինչև որ այդ տեղը մեզ
չփերազարձնեմ»: Դարձեալ նրա ձեռքից բռնում տա-
նում էր պարսից հողի վրայ, այն ժամանակ Արշակ
զզջում էր իր ասածները, խոնարհում, գրկում էր
նրա ոտները, ներողութիւն խնդրելով սաստիկ զզջում
էր իր ասածների վրայ: Իսկ երբ նրա ձեռքից բռնած
տանում էր հայ հողի վրայ, առաջուանից էլ աւելի
խիստ էր խօսում, և երբ կրկին հետացնում էր այն
հողից, ներողութիւն էր խնդրում: Առաւօտուանից մին-
չև երեկոյ նոյն տեսակ շատ փորձեր կատարեց. Երբ
ածած հողի վրայ էր տանում, բարկացած մեծամուս
էր, իսկ երբ բռն հողի վրայ էր շրջեցնում, զզջում
էր: Երեկոյ եղաւ. պարսից թագաւորի ընթրիքի ժամը

հասաւ: Սովորութիւն էր, որ Հայոց թագաւորի բար-
ձը նոյն տախտի վրայ էին դնում, որովհետեւ կարգ էր՝
որ պարսից և հայոց թագաւորները միենոյն տախտի
վրայ՝ նոյն բարձերին էին նստում: Բայց այդ օրը
նախ բազմականների շարքը շարեցին, որից յետոյ
միայն ամենավերջինը Արշակի բազմոցը դրին այն-
տեղ, որտեղի յատակը հայոց հողով էր ծովծուած: Նախ
յատոյ բերին Արշակ թագաւորին նստեցրին: Մի փոքր
ժամանակ ուռած (փքուած) նստելոց յետոյ՝ ոտքի
կանգնեց և ասաց Շապուհ թագաւորին. «Այդ է իմ
տեղը, որտեղ դու ես. ոտքի կանգնիր. Թող որ ես
այդտեղ նստեմ, որովհետեւ մեր ցեղի տեղը այդ է
եղել, իսկ եթէ իմ աշխարհը հասնեմ, մեծապէս վրէժ-
ինդիր պիտի լինիմ»:

Ապա Շապուհ պարսից թագաւորը հրամայեց
շղթաներ բերել, ձգել Արշակի պարանոցը, ոտքերից
ու ձեռներից էլ երկաթներ կապել և քշել Անուշ բեր-
գը, այնտեղ փակել մինչև կըմեռնէ:

Այն ժամանակ (Արշակի որդի) Պապի թագաւո-
րութեան օրով) Հայոց Արշակ թագաւորը դեռ ևս կեն-
դանի էր պարսից երկրում Խաժաստանի Անզմը բեր-
գում, որ Անյուշ բերդ են անուանում: Երբ պարսիկ-
ների պատերազմը հայերի դէմ դագարեց, Քուշանաց
Արշակունի թագաւորը, որ Բահլ քաղաքունի էր նըս-
տում, վեր կացաւ պատերազմ տալու պարսից Սա-
սանեան Շապուհ թագաւորի դէմ: Շապուհ թագաւորը
պարսից բոլոր զօրքը գումարելով ուղարկեց նրա դէմ.
նա իր հետ ամբողջովին վերցրեց և այն հեծելազօրքը,
որ գերել բերել էր Հայոց երկրից: Այդ պատերազմում
Քուշանաց զօրքը չարաչար զարկեց և ցրւեց պարսիկ-
ներին. շատերին կոտորեցին, շատերին գերի վերցրին

և մի մասն էլ փախցրին։ Այդ ճակատամարտում, որտեղ քուշանները պարսից թագաւոր Շապուհին յաղթեցին, մասնակցում էր և Դրաստամատ անունով հայներքինի իշխանը։ Նա հայոց Տիրան թագաւորի և նրա որդի Արշակի տարիներում Անգեղ տան գաւառի իշխանն էր եղած։ Նա հաւատարմութեամբ պահպանում էր Անգեղ բերդի գանձերը և այն կողմերում եղած բոլոր արքունի բերդերը։ Նրա ձեռքին էին և Ծոփաց երկրում գտնուած Բնարեղ բերդի գանձերը։ Նրա բարձը բոլոր նախարարների բարձերից բարձր էր։ Երբ Արշակ թագաւորին բռնեցին, նրան էլ նրա հետը գերի վարեցին Պարսկաստան։

Դրաստամատ մեծ քաջութիւն ցոյց առեց, Շապուհին մահուանից ազատեց, շատ քուշաններ կոտորեց և շատ ախոյանների գլուխներ բերաւ նրա (Շապուհի) առաջ։

Երբ Շապուհ վերադարձաւ Ասորեստան, մեծ շնորհակալութիւն յայտնեց ներքինի Դրաստամատին՝ նրա ծառայութեան համար և ասաց։

— Խնդրիր ինձնից որևէ բան, ինչ էլ որ խնդրես, կըտամ քեզ, չեմ մերժի։

Դրաստամատն ասաց թագաւորին։

— Ինձ ոչինչ պէտք չէ. միայն իրաւունք տնկը, որպէսզի զնամ և իմ իսկական տիրոջը՝ Հայոց Արշակ թագաւորին տեսնեմ։ Երբ կըզնամ նրան տեսնելու, հրաման տնկը՝ մի օրով կապանքներից ազատել, որ ես իրաւունք ունինամ նրա գլուխը լուանալու և օծելու, լաւ զգեստ (պատմուման) հազցնելու, բազմութեան մէջ դուրս բերելու, նրա առաջ խորտիկներ դնելու, զինի տալու և ճիշտ մի ամբողջ օր նուազածութեամբ ուրախացնելու։

Եւ Շապուհ թագաւորն ասում է.

— Խիստ բան է խնդրածդ, որովհետեւ երբ պարսից թագաւորութիւնը հիմնուել է և այն բերդը Անյուշը բերդ է անուանուել, այդ օրից ոչ մի մարդ չի համարձակուել յիշեցնել, որ այն բերդում թագաւորների կողմից փակուած մէկը կայ. բայց ահաւասիկ քո անձը գու վտանգի ենթարկեցիր՝ յիշեցնելով Անյուշը. զու պէտք է քո անձնական օգտի համար մի բան խնդրէիր՝ կամ երկիր, կամ գաւառ և կամ գանձ. բայց որովհետեւ քո ծառայութիւնն ինձ մօտ մեծ է, ուստի ինչ որ խնդրեցիր՝ կըսրուի. զնա։

Նրան մի հաւատարիմ փուշտիպան տուաւ և արգունի մատանիով կնքուած հրովարտակ, որպէսզի գնայ Անդմիշ բերդը և շղթայակապ Արշակ թագաւորին, ինչ որ ցանկանայ, անէ։ Դրաստամատ ճանապարհ ընկաւ փշտիպանի հետ արքունի հրովարտակով Անյուշը բերդը և տեսաւ իր բնիկ տիրոջը։ Նա նրան արձակեց երկաթէ կապանքներից, ձեռակապերից, ոտքերի երկաթներից և շղթայակապի վզի օղակից, — նրա զլուխը լուաց, լողացրեց, ազնիւ պատմուման հագցրեց նրան, բացմոց դրեց նրա տակը և բազմեցրեց, նրա առաջը թագաւորական ընթրիք և զինի դրեց, ինչպէս թագաւորների սովորութիւնն էր, սթափեցրեց (զգաստացրեց) և մխիթարեց նրան ու գուստաններով ուրախացրեց։

Ազանդեր մատուցանելու ժամանակ նրա առաջ դրին մերդ, խնձոր, վարունգ և ամիճ (որսի ձագ), որ ուտէ. զանակ զրին առաջը, որ ինչպէս ցանկանայ, կտրէ և ուտէ։ Դրաստամատը շատ զուարձացնում էր նրան, միշտ ոտքի էր կանգնած և մխիթարում էր։ Բայց երբ արբեց և զինին աչքերն ընկաւ, հպարտացաւ և ասաց. «Վայ ինձ Արշակիս, այսչափ այս ու անցքերն անցան զլխովս»։ Այս ասելով սիրտը

միսեց այն դանակը, որ ձեռին էր և որով միրդ կամ
ամիճ էր ցանկանում ուտել: Նա այնտեղ էլ բազմոցի
վրայ նոյն ժամայն մեռաւ: Իսկ երբ Դրաստամատ
այս բանը տեսաւ, յարձակուեց, հանեց նոյն դանակը
և խրեց իր կողը. նա էլ նոյն ժամին այնտեղ մեռաւ.

V.

Անիշխանութիւն. Շապուհի քաղաքական ձգտում-
ները. Պապ (368—373):

Արշակի աքսորից յետոյ Հայաստան մնաց
անպաշտպան. Նախարարներից նրանք, որոնք
դէպի Արշակունիներն ունեցած ատելութիւ-
նից յարել էին պարսից քաղաքականութեանը,
արդէն Պարսկաստանումն էին և Շապուհի խոր-
հըրդականներն էին դարձել. միւսները, որոնք
Արշակունիների կողմանիցն էին, հետևապէս
հակուած դէպի յոյները՝ թողել էին տուն ու
տեղ և փախել Յունաց երկիրը, երկիրը միան-
գամայն մնացել էր անպաշտպան պարսիկների
առաջ: Շապուհ բազմաթիւ փորձերից եկել էր
այն եղբակացութեան, որ հայերը սրտով միա-
ցած են յոյների հետ, և այդ միացնող կապը
քրիստոնէական կրօնն է:

Հայերը պարսիկների դարեօր հպատակնե-
րը, հարևաններն ու բարեկամներն էին. այդ
կապը խախտուել էր Արշակունիների գոյու-
թեամբ Հայաստանում. սակայն այդ խորթու-

թիւնն աւելի մեծացաւ քրիստոնէութեան տա-
րածմամբ: Արշակի թագաւորութիւնը շատ պարզ
կերպով ապացուցեց այդ երկու հանգամանք-
ներն ես:

Հայաստանը Պարսկաստանի համար մի ան-
հրաժեշտ կալուածք էր. իր բնական հարստու-
թիւններով ու բերքերի առատութեամբ նա ծա-
ռայում էր իբրև մի շտեմարան. դարեր շա-
րունակ Հայաստանի երկրագործ ու աշխատա-
սէր ժողովրդի արդիւնքները ճոխացնում էին
արքայից արքաների ապարանքները, կերակրում
նրա անհամար զօրքերը. բնութիւնից ուազմիկ
հայերի ընտիր հեծելագունդը անհրաժեշտ էր
պարսիկներին՝ թէ արեելեան և թէ արևմտեան
թշնամիների դէմ մաքառելու համար. բացի
այդ՝ Հայաստանը ներկայանում էր իբրև պատ-
նէշ Յունա-հռովմէական արշաւանքների առաջ:
Յունա-հռովմէական պետութիւններն ու պարսիկ-
ներն իրանց քաղաքական վէճերը մեծ մասամբ
Հայաստանումն էին վճռում:

Պարսից արքաները ջանք չին խնայում
Հայաստանն ուժեղանալու դէպում նրա իշ-
խողների սիրու գրաւելու, իսկ բուլանալու
դէպում իրանց իշխանութիւնը տարածելու
նրա վրայ:

Քանի Հայաստանում ուժեղ էր Պարթև թա-
գաւորների իշխանութիւնը՝ Սասանեանների ուշ-

Քը դարձած էր նրանց գոյութեանը վերջ տալու վրայ. սակայն՝ բանի քրիստոնէութիւնը արմատանում եւ անհրաժեշտութիւն էր դառնում, այնքան բաղաբական իշխանութիւնը քուլանում էր՝ նոյն իսկ անկախ արտաքին հանգամանքներից. հայ հոգեւորականութիւնը իր ձգտումներով մեծապէս նպաստում էր բաղաբական իշխանութեան քուլանալուն:

Պարսից արքաները չէին կարող չնկատել, որ Հայաստանում քաղաքական իշխանութեան տեղ բռնել է քրիստոնեայ հոգեւորականութիւնը՝ կամ քրիստոնեայ կուսակցութիւնը և եթէ կայ մի ոյժ, որ կարող է դիմադրել իր քաղաքական ձգառութիւնն Հայաստանի նկատմամբ, — դա քրիստոնեայ կուսակցութիւնն է:

Նապուի սաստիկ հալածանք հանեց քրիստոնէութեան դէմ. Պարսկաստանում գտնուած քրիստոնեաները միանգամայն ջնջուեցան և նրանց տաճարները կործանուեցան:

Հայաստանում քրիստոնէութեան ջնջելը Նապուի առաջին հոգսը դարձաւ. նա այդ ծրագրերը յանձնեց իրազործելու երկու հայ ուրացեալ նախարարների՝ Մեհրուժան Արծրունուն և Վահան Մամիկոնեանին՝ Վասակ սպարապետի եղբօրը:

Երկու նախարարներն ևս բազմաթիւ պարսկական զօրքով մի քանի անգամ արշաւեցին

Հայաստանի վրայ. մի կողմից իրանց անձնական հաշիւներն էին մաքրում զանազան թշնամին նախարարական տոհմերի հետ՝ նրանց կալուածներն աւարի տալսվ, միւս կողմից տնտեսական հարուած հասցնելով ժողովրդին՝ սարսափի տակ ցանկանում էին կրակապաշտութիւնն անհրաժեշտ դարձնել: Երէ հպատակ ժողովուրդըն ուզում է իր կրօնը փոխել, ապա նա պարաւոր է սիրող արքայի կրօնն ընդունել. այսպէս էին բացատրում հայ ժողովրդին. որովհետեւ քրիստոնէական վարդապետութիւնը այնքան էլ ըմբռնելի չէր անգրագէտ ժողովրդի համար, զրա համար շատերը այդ վարդապետութեան բարձր գաղափարներին անտեղեակ լինելով՝ անբնական չէին համարում պարսիկ հոգեւորականութեան և հայ իշխանական մի քանի տոհմերի պահանջները: Նապուի հանած հալածանքները քրիստոնէութեան դէմ օրհասական կարող էին լինել Հայաստանի համար, երէ դրսից օգնութիւն չինէր. հայ ժողովրդի տգիտութիւնից առաջանալիք վտանգը պարզ էր հայ հոգեւորականութեան համար, և նա իր ամբողջ ուշադրութիւնը դարձրեց ժողովրդի հոգեոր կրթութեան վրայ. ժողովրդի կրթութիւնը միայն կարող էր փրկել քրիստոնէութիւնը Ասմիայում կործանուելուց: Ամենալայն չափով նիմիք դրուեց բարոզական եւ բարգմանչական գոր-

ծունէութեան։ Հայ հոգեորականութիւնն իր կըրթութիւնը կարող էր ստանալ միմիայն արեմուտքում, դրա համար նրա համակրութիւնը Յունաստանի կողմն էր։ Յունաստանում և յունական գիտութիւնների վայրերում ուսած և ուսանող հայ հոգեորականները յոյն լեզուն և յոյն հոգեորականների գրուածքները մտցրին հայերի մէջ. յունական ազգեցութիւնը մեծ էր այդ, այսպէս անուանուած, կըթուած հոգեորականութեան վրայ. նրանց միջոցով այդ ազգեցութիւնը տարածուած էր թէ իշխանական տոհմերի և թէ հասարակ ժողովրդի վրայ։

Արևմտեան կայսրութիւնն ևս շահագրգռուած էր Հայաստանով. բացի նրանից՝ որ Հայաստան հարկ էր վճարում նրան, զօրքի մի մասը հայերի հաշուին էր կերակրում, այլև Հայաստանն իրեւ պատնէշ էր ծառայում Սասանեան արկածախնդիր թագաւորների արշաւանքների առաջ. Յունահոգմէական կայսրութեան համար գլխաւորապէս երկու թշնամիներ գոյութիւն ունէին. արևմտեան և արևելեան։ Հայաստանի ոյժն ու համակրութիւնը որոշ չափով ազատում էր նրան արևելեան թշնամուց։ Յունահոգմէական կայսրութիւնը հանգամանեները ներածին չափ օգնում էր հայերին, նպաստում էր նրանց ուժեղանալուն։ Օգնական զօրք էին ուղարկում, Պարսկաստանի կող-

մից վտանգ սպառնալիս այդ զօրքը մնում էր Հայաստանում. նպաստում էին Արշակունիների տոհմի հզօրանալուն, Յունաստանին սահմանակից հայ նախարարներին աստիճաններ ու պատիւներ էին տալիս, ոռմիկ էին նշանակում նրանց և ամեն կերպ աշխատում էին Յունաստանի նշանակութիւնը բարձր պահել հայերի աչքում։ Հայերի առ Արեւմուսէն ունեցած համակրանքի եւ հաւատարմութեան պայմանը Երիստոնէութիւնն էր. դրա համար յոյն կայսրներն աշխատում էին քրիստոնէութիւնն անխախտ դարձնել։

Հայաստանի երկու դրացի մեծ պետութիւններն այսպիսի շահերով էին կապուած նրա հետ. շնորհիւ նրանց մրցման էր, որ Հայաստանն Արշակից յետոյ դեռ ևս մի քանի տարի էլ կիսանկախ դրութեան մէջ մնաց։

Երկու հզօր հարեւաններն եւս օգնում էին բարեկամ եր հաւատարիմ հայերի ուժեղանալուն, սակայն խանգարում նրա անկախութիւն ձեռք բերելու ձգտումներին։

Շապուհ Բ.-ի թագաւորութիւնը շատ բաներով նշանաւոր դարձաւ Պարսկաստանի համար. նա վերին աստիճանի քաղաքագէտ և վճռական մարդ էր. արևելեան հարկաններին հանգստացրել էր, հոռվմայեցիներին յաղթել և ստիպել էր յետ քաշուելու Հայաստանից, վերջին

հարուածն էր շասցըել Հայաստանի Արշակունիներին և այժմ միանգամայն ազատ էր այդ երկրի բաղդը կարգադրելու. շնորհիւ իր քաղաքագիտութեան՝ պառակտումն էր զցել առանց այն էլ անմիաբան նախարարական տոհմերի մէջ, որոնցից շատերն այժմ նրա ձեռքին խաղալիք էին և իրանք էին յանձն առնում իրանց երկրի նկատմամբ կատարելու այն, ինչ որ պարսիկները պիտի անէին. և Շապուհ վճռեց յարմար ըոպէն ձեռքից չթողնել. նա ժողովուրդների տեղափոխութեամբ ցանկացաւ միանգամայն հայերին ձուլել պարսիկների հետ. հարիւր հազարաւոր հայեր քշուեցին Հայաստանից դէպի Պարսկաստանի խորքերը. չին տնտեսութեամբ ապրող Պարսկաստանի համար անհրաժեշտ էին դրանք. իբրև ժամանակի ձեռներէց ժողովուրդ՝ հայերը զարկ կըտային Պարսկաստանի վաճառականութեանը. Հայաստանի տնտեսութիւնը միանգամայն աւերռուեց և այդ հանգամանքը մանաւանդ պիտի ստիպէր բռնի քշուած հայերին ակամայից կապուել իրանց նոր հայրենիքի հետ:

Արշակի որդի Պապ, որ հօր գերութիւնից յետոյ փախել ազատուել էր պարսիկներից, մօր խորհրդով դիմեց յունաց օգնութեան. սակայն մինչև օգնութիւն կըստանար, Հայաստան միանգամայն աւերռուեցաւ. նա թափառում էր

Պոնտոսի լեռներում. յոյներն ըս կապած դաշնադրութեան իրաւունք չունեին հայերին օգնելու:

Վերջապէս քրիստոնեայ կուսակցութիւնը Ներսէս կաթողիկոսի հետ միասին խորհրդակցելով՝ պատգամաւորութեամբ դիմեցին Վաղէս կայսեր, ներկայացրին Հայաստանի դրութիւնը, քրիստոնէութեան վտանգութիւնը և օգնութիւն խնդրեցին: Կայսը զօրք տուաւ և Պապ յունական և հայկական զօրքի աջակցութեամբ թագաւորեց Հայաստանում: Նրա աջակիցն էր Վասակ սպարապետի որդի Մուշեղ. նա ևս հօր նման քաջ էր և հմուտ պատերազմական գործին: Շապուհ բողոքեց յոյների դէմ, որ նրանք հակառակ կապած դաշնաքին օգնում են հայերին, սակայն յաղթութիւնը մնաց յոյների կողմը:

Պապ (368-373) Մուշեղի ձեռքով Հայաստանը մաքրեց պարսիկներից, ատրուշանները կործանեց և եկեղեցիները նորոգել տուաւ, Ներսէսին վերստին կաթողիկոսութեան կոչեց, որն իր նորոգութիւններն սկսեց: Շապուհ տեսնում էր իր ծրագրի անյաջող ելքը. նա միքանի անգամ փորձեց կազմակերպուող Հայաստանի ոյժը ջլատել, սակայն Մուշեղ միշտ էլ կարողացաւ նրա արշաւանքների առաջն առնել: Այնուհետև Շապուհ փորձեց իր կուսակից նախարարների միջոցով դաւագրութիւն կազմել

հայերի ու յոյների միացեալ ոյժերի դէմ, բայց
ապարդիւն. դաւազըռութիւնը բացուեցաւ և
յանցաւորները տուժեցին: Մուշեղ երկրի զա-
նազան կողմերն ևս արշաւանքներ կազմակեր-
պեց և անջատուած մասերը կրկին միացնելով
չայստանին՝ հարկատու դարձրեց:

Պապ հոգ տարաւ չայստանի ոյժը մե-
ծացնելու վրայ. վերջին արշաւանքները և երկ-
րից հանած գաղթականութիւնը խախտել էին
այդ ոյժը և տնտեսապէս քայքայել մնացող-
ներին.

Ներսէս շինել էր այրիների, որբերի և
կոյսերի համար յատուկ ապաստարաններ և ա-
ռատ ոռճիկ էր նշանակել իւրաքանչիւր գաւա-
ռի ժողովրդից: Պապ հրամայեց աւերել այդ
հաստատութիւնները և այդ տեղերում բուն
դրած ծոյլերի խմբերը քշել, որովհետեւ նրանք
տէրութեան ծառայութիւնից խուսափողներն
էին: Ներսէս մեծի հիմնած ապաստարանները,
որքան էլ անհրաժեշտ լինէին մի թշուառացած
ժողովրդի համար, այնուամենայնիւ նպաստում
էին ձրիակերների և ծոյլերի ու դասալիքների
բազմանալուն, դրա համար էլ Պապ հրամայեց
նոյն իսկ մուրացկաններին ողորմութիւն չտալ:
Ներսէս արգելել էր ամուսնալուծութիւնը, Պապ
ընդհակառակն ժողովրդի նուազման առաջն
առնելու նպատակով տղամարդկանց թոյլ տու-

աւ ըստ ցանկութեան իրանց կանանց թողնել և
ուրիշներն առնել: Լուսաւորչից սկսած՝ եկե-
ղեցիներն ունեին եօթնական հող կամ կալու-
ածք, որոնց եկամուտներով ոչ միայն հոգեո-
րականներն էին կերակրում, այլև նրանց մեր-
ձաւոր և հեռաւոր ազգականները: Արքունի
գանձարանի եկամուտները բոլորովին նուազել
էին, որովհետև բոլոր բերդերը և նրանց մէջ
պահուած գանձերը կողոպաւել էին. հարկաւոր
էր եկամուտների նոր աղբիւրներ գտնել, և
Պապ եկեղեցական կալուածքներից հինգը յար-
քունիս գրաւեց, իւրաքանչիւր եկեղեցու թող-
նելով միմիայն երկ-երկու հող: Արքունի ծա-
ռայութիւնից խուսափողները խմբւում էին եկե-
ղեցիներում և վանքերում, և վերջին ժամա-
նակներն այդպիսիների թիւը սարսափելի բազ-
մացել էր. Պապ իւրաքանչիւր եկեղեցու հա-
մար թողեց միայն մի-մի քահանայ՝ մի սար-
կաւագով, իսկ մնացածներին արքունի ծառա-
յութեան վերցրեց: Ժողովրդի տնտեսապէս քայ-
քայուած վիճակն 'ի նկատի առնելով Պապ վե-
րացրեց հնուց դրուած այն կարգը, որի հա-
մաձայն երկրի պտղից տասանորդ էին վճարում
եկեղեցիներին: Միւս կողմից նա ցանկանա-
լով Հայաստանը միանգամայն անկախ դարձնել,
իր հօր օրինակով վճռեց հայ եկեղեցին ազա-
տել արևմտեան եկեղեցու իրաւասութիւնից.

Նա Ներսէս Մեծի մահուանից յետոյ Յուսիկ ա-
նունով մէկին կաթողիկոս նշանակեց՝ առանց
Կեսարիայի յոյն եպիսկոպոսապետի հանու-
թիւնն ստանալու, որով մեծ գծութիւն ընկաւ
հայերի եւ յոյների մէջ:

Պապի այդ բոլոր կարգադրութիւնները, որ-
քան էլ օգտակար լինէին մի այնպիսի քայքայ-
ուած երկրի համար, ինչպիսին Հայաստանն էր,
սակայն դրանք բայոն էլ դէմ էին նոզեւորա-
կանութեան շահերին. Վերջին հանգամանքը
մանաւանդ սաստիկ գրգուց թէ յոյն և թէ
յունասէր հայ հոգեորականութեանը. դաւա-
դրութեան համար հողը պատրաստ էր. Հայաս-
տանում կար յունական մի վաշտ. նրա զօրա-
պետները խաբէութեամբ հրաւիրեցին Պապին
հիւր և ճաշի ժամանակ սպանեցին 373 թ.:

VII.

Վերջին Արշակունիներ. Պարսիկների ձգտումը՝
Հայաստանի անուանական անկախութեանը վերջ տա-
լու. Հայերի քաղաքական տհասութիւնը. Հայաստա-
նի բաժանումը երկու մասի (384 թ.). Վասմշապուհ
և Արշակունեաց տոհմի անկումը:

Պապի եղերական մահուամբ Շակուհ մա-
սամբ հասաւ իր նպատակին. հայերի եւ յոյնե-
րի մէջ ատելութիւն էր ստեղծուած. Նա մտա-
ծեց վերջին հարուածը հասցնել Հայաստանի

անուանական անկախութեանը. յոյներն զբա-
ղուած էին գոթերի դէմ պատերազմով: Առի-
թից օգտուելով նա դիմեց Արևմտեան կայ-
ութեանը և առաջարկեց՝ երկու մեծ պետու-
թիւնների մէջ շարունակ պատերազմի պատճառ
եղող Հայաստանն ընդմիշտ բաժանել երկու
մասի եւ միանգամայն ջնջել Հայաստանի բա-
զաւորութիւնը: Որքան էլ յոյներին ձեռնտու-
չինէր պարսիկների անմիջական հարկանու-
թիւնը, այսուամենայնիւ նրանք հնարաւորու-
թիւն չունէին դիմադրելու այդ ծրագրին և
Շապուհի առաջարկութիւնն ընդունուեցաւ. ա-
րեւմտեան փոքրիկ մասը տրուեցաւ յոյներին, իսկ
արեւելեան մեծ մասը՝ պարսիկներին:

Հայերն իրանց քաղաքական տհասութեան
պատճառով ոչ մի դիմադրութիւն ցոյց չտուին
այդ բաժանմանը. ընդհակառակն յունաց մասի
իշխաններն ուրախ էին, որ յոյներից աստիճան-
ներ ու ոռձիկ կըստանան. պարսից բաժնի շատ
իշխաններ ևս թողեցին երկիրն ու հեռացան
յունաց բաժինը: Հայերն ուշ հասկացան այդ
քաղաքականութիւնը. մի քանի ապստամբական
փորձեր արին մանաւանդ պարսիկների դէմ.
Մուշեղ Մամիկոնեանի որդին՝ Մանուէլ սպա-
րապետը խնամակալ և սպաշտապան կանգնեց Պա-
պի երկու որդիներին՝ Արշակին և Վաղարշակին,
որոնք անչափահաս էին: Մանուէլ կարողացաւ

մի քանի տարի դեռ ևս Հայաստանը կիսանկախ գրութեան մէջ պահել նա նոյն իսկ կարողացաւ իր կեանքի վերջին տարիները համոզել յոյներին, որպէսզի Արշակին, որ արդէն չափահաս էր դարձել, թագաւորեցնեն բովանդակ Հայաստանի վրայ։ Սակայն այդ բանը ժամանակաւոր էր, որովհետեւ Մանուէլի մահուանից յետոյ կրկին գժտութիւն ընկաւ նախարարների մէջ, շնորհիւ պարսիկների խարդախութեան և Շապուհ կրկին տիրեց Հայաստանին։ Որովհետեւ առանց նախարարական տոհմերի համաձայնութեան՝ Հայաստանին վերջնականապէս տիրելն անկարելի էր, ուստի նրանց ինքնասիրութիւնը շոյելու նպատակով՝ Շապուհ Գ. յոյների հետ վերջնական համաձայնութեան գալով 384 թ. Հայաստանն ընդմիւտ բաժանեցին Երկու մասի, և պարսից բաժնի վրայ Արշակունի կառավարիչ կարգուեց։ Թէև վերջինս թագաւոր տիտղոսն էր կրում, սակայն նա ոչ մի անկախութեամբ չէր օգտուում։

Յոյները նոյնպէս իրանց բաժնի Հայաստանը կառավարեցին Արշակունի թագաւորներով, սակայն շուտով երկիրը բաժանեցին զինուրական շրջանների և այդ մասի հայերի յարաբերութիւնը Պարսից բաժնի հայերից միանգամայն կտրելու նպատակով՝ մինչեւ անդամ թոյլ չէին տալիս որ նրանք ենթարկուեն հայոց

կաթողիկոսին, որը նստում էր արևելեան Հայաստանում։

Թէև յոյների բաժինը փոքր էր, սակայն շնորհիւ բնական յարմարութիւնների՝ հեշտ էր պաշտպանելը պարսից արշաւանքների դէմ։ Նրանք կանգնեցրին և մի շարք անմատչելի բերդեր։

Արքայից արքան սկզբում փորձեց Հայաստանում պարսիկ կառավարիչ նշանակել, բայց երբ այդ մասի հայ իշխաններն իրանց գանձերով անցան յունաց բաժինը, այն ժամանակ հարկադրուած Արշակունի թագաւոր նշանակեց, մանաւանդ որ քուշանների դէմ մղած նոր պատերազմում պարսիկները պարտութիւն էին կրել։

Շապուհ Բ. չկարողացաւ իր կենդանութեան ժամանակ իրագործել այն, ինչ որ ծրագրել էր Հայաստանի նկատմամբ, սակայն սկսածը շարունակեցին իր յաջորդները նոյն յամառութեամբ։ Վերջին Սասանեանների ամբողջ ջանքն էր Պարսկաստանին վերադարձնել Դարեն Մեծի շրջանը, առանց ժողովրդի կեանքի մէջ որոշ յառաջադիմական քայլ անելու։ Մինչդեռ քրիստոնէութիւնն ահագին յառաջադիմութիւն էր արել և կեանքի նոր եղանակ ստեղծել նոր քաղաքակրթութեամբ։ Եթէ պարսիկ ժողովուրդը՝ շնորհիւ իր մտաւոր անշարժու-

թեան կարիք չէր զգում վերանորոգութեան, և Սասանեանների ծրագիրը ընական կարող էր համարուել, նոյնը չէր կարելի ասել հպատակ քրիստոնեայ ազգերի համար, որոնք արդէն սկսել էին քրիստոնէական քաղաքակրթութեամբ ապրել: Վերջիններիս հայեացքը կեանքի վրայ, տնտեսական պահանջները այլ էին, քան թէ պահանջում էր այդ Արևելեան հին քաղաքակրթութիւնը: Վերջ՝ ի վնրջոյ այդ երկու հակադիր ոյժերը պէտք է ընդհարուէին. կիսակիրթ ու բարբարոս Ասիայում որքան էլ անըպաստ այդ մրցումը քրիստոնեայ քաղաքակրթութեան համար, այնուամենայնիւ նա երիտասարդ և կենսունակ էր և աւելի իրաւունք ունէր ապրելու: Նա ապրեց, թէև թանգ նստեց իրեն փարած ազգերի համար: Այդ ազգերից մի քանիսը անյայտացան, մնացածները կորցրին իրանց քաղաքական կեանքը, բայց փրկեցին նոր քաղաքակրթութիւնը: Այդպիսինների թուին են պատկանում հայերը: Նախընթաց գէպքերը ցոյց տուին հայերի տուած զոհերն այդ կռւում: Այդպիսի պայքարի համար պէտք էր մտաւոր և հոգեկան կրթութիւն. նոր քաղաքակրթութեան պաշտպան մողովուրդը պէտք է զինուած լինէր նրա զէնքերով: Եւ հայերը Դ. դարուց սկսած ուսանում էին նոր քաղաքակրթութեան դպրոցում. նրա ուսուցիչները հոգեկորականներն էին,

որոնց ձգտումների հետ վերևում ծանօթացանք: Այդ դպրոցն աւելի իրական հողի վրայ դրուեց և զարգացաւ Ե-րդ դարու սկզբներից սկսած՝ Վուամշապուհի (391-414) թագաւորութեան օրով՝ Արևելեան Հայաստանում:

Ցունաց բաժնի Հայաստանում արդէն վերջ էր տրուել քաղաքական կեանքին և հայերը զրկւել էին թագաւոր ունենալու արտօնութիւնից. նոյնը տեղի ունեցաւ և արևելեան բաժնում Վուամշապուհի մահուանից քիչ յետոյ: Որքան էլ ժամանակի բանիմաց հոգեկորականութիւնը ցանկացաւ կանգնեցնել այդ կողծանումը, սակայն ժողովուրդն ու իշխաններն արդէն նախընթաց գէպքերից նախապատրաստուած էին, և 428 թուին Արշակունեաց ցեղից թագաւորութեան վերջնական բարձումը ոչ մի բողոք ու շարժում չառաջացրեց հայերի մէջ:

Վուամշապուհ քսան և երեք տարի թագաւորելով մեռաւ, թողնելով մի տասնամեայ որդի՝ Արտաշէս անունով: Այն ժամանակ Սահակ մհծը գնաց պարսից Յազկերտ արքայի գուսը և ինդրեց թագաւորեցնել բանտարկուած Խոսրովին, որը Վուամի մահուանից յետոյ Անյուշ կոչուած բերդում արձակ պահուում էր: Յազկերտ համաձայնելով կատարեց նրա ինդիրը՝ ազատ թողեց Հայաստան և նրան յանձնեց տէրութիւնը: Խոսրով ինդրեց Գաղաւոնի որդուն՝ Հրահատին ևս արձակել. նա իր հօր մահուանից յետոյ համուելով անյիշելի բերդից՝ Սագաստանից էլ այն կողմն էր քը-

ուել: Խոսրով չկարողացաւ նրան տեսնել, որովհետեւ
մի տարի վերստին թագաւորելով մեռաւ:

Այդ ժամանակ Տիգրոնի քրիստոնեաների եպիս-
կոպոսը մի ատրուշան այրել տուաւ, որ պարսից
օրէնքով քրէական յանցանք էր համարւում. դրա հա-
մար Յազկերտ մեծ հաւածանք հանեց ամենուրեք
քրիստոնեաների դէմ:

Խոսրովից յետոյ Յազկերտ այլևս հայերից չնշա-
նակեց թագաւոր, այլ իւր որդի Շապուհին թագաւո-
րեցրեց նրանց վրայ. այդպիսով նա հնար էր վնասում
նախարարներին Մազլեցանց կրօնին ընտելացնելու.
իբր թէ նրանք շարունակ նրա մօտ գնալ-դալ կ'ու-
նենան, խօսակցութեան, առեւտի, քէֆերի և որսոր-
դութեան միջոցով մտերմութիւն կըհաստատուի, հնա-
րաւոր կըլինի նրանց իրանց կրօնին մօտեցնել, որով
ընդմիշտ կըբաժանուեն յոյներից: Մի առ ժամանակ
նրան այդ բանը յաջողուեց, որովհետեւ Համալասպի
մահուան պատճառով Սահակ մեծ սգի մէջ էր, դրա
համար մէկը չկար, որ հայերին միաբան պահէ, և Շա-
պուհ հեշտութեամբ մտաւ Հայոց աշխարհը: Նա իր
հետ բերաւ Հրահատին և բոլոր աքսորուածներին: Սա-
կայն նա չկարողացաւ նախարարների ուշադրութիւնը
դրաւել. ամենքը նրան ատում էին և որսի ու խաղի
ժամանակ արքայական պատիւ չէին տալիս:

Մի անգամ վայրի էշերի երամակների յետեկց
յանդինաբար արշաւելիս ընկան խորդուքորդ և քար-
քարուտ տեղեր. Շապուհ սկսեց յետ մնալ: Ատովմ Մո-
կացին նրան ծաղլելով ատում էր. «Գնա, գնա», պար-
սից աստուածորդի, եթէ տղամարդ ես, գնա»: «Ի՞նք
գնա, որովհետեւ քարքարուտ տեղերում դիերը կարող
են արշաւել»: Մի ուրիշ անգամ էլ եղեգնուաւ տեղե-
րում կրակով կինձ (վայրի խող) էին որսում: Շապուհ

չկարողացաւ խիստ տեղերով սրարշաւ անցնել, և
կրակը շրջապատեց նրան: Նա շփոթուած սկսեց այս
ու այն կողմ նայել և ձին դէս ու դէն դարձնել: Ատովմ
այս անգամ էլ ասաց. «Պարսից աստուածորդի, ահա-
ւասիկ քո հայրը և աստուածը, էլ ինչո՞ւ ես վախե-
նում»: Իսկ Շապուհ ասում է, «Կատակը մի կողմ.
դու անցիր, որպէսզի ես էլ անցնեմ, որովհետեւ երբ
առաջ եմ ընկնում, ձիս խրտնում է»: Այն ժամանակ
Ատովմ նրան ծաղրելով ասում է, «Միթէ այստեղ էլ
քարեր կան, որ ես առաջ ընկնեմ, և որովհետեւ գու
մոկացիներին դիւազգի ես անուանում, ես Սասան-
եաններիդ կնամարտի եմ անուանում»: Նա իր երի-
վարը մտրակելով անցաւ ինչպէս ծաղկաւէտ հովիտ-
ներով ու աղատեց Շապուհին: Դրանից յետոյ Ատովմ
իմանալով որ Շապուհ լուռ չպիտի մնայ, անցաւ գնաց
Մոկաց աշխարհը:

Մի անգամ էլ մականախաղի ժամանակ Շաւասպ
Արծրունին երկու անգամ գնդակը խլեց Շապու-
հից: Շապուհ ջրիգով (մականով) խիելով նրան ա-
սաց. «Ճանաչիր քեզ»: Նա էլ պատասխանեց նրան
և ասաց. «Այն, ճանաչում եմ, գիտեմ, որ Սանասարի
սերնդի արքայորդին եմ, և իրաւունք ունեմ քո
եղբայրների հետ թագաւորի բարձը համբուրել, ինչ-
պիսի անուն էլ հէնց ինձ տալիս են»: Այս բանն ասե-
լով՝ մեծ արհամարհանքով ձիարշաւի տեղից սլացաւ
գնաց:

Շապուհ չորս տարի անարգաբար թագաւորելուց
յետոյ՝ լսեց հօր հիւանդութիւնը և շտապից գնաւ
Պարսկաստան: Նա իր տեղակալ-զօրապետին հրա-
մայեց բանել հայոց մեծամեծներին և Պարսկաստան
տանել: Երբ Շապուհ Տիգրոն հասաւ, նրա հայր Յազ-
կերտ 20 տարի թագաւորելուց յետոյ մեռաւ: Նոյն

օրը Շապուհին էլ պալատի մարդիկ գաւաղբութեամբ
սպանեցին:

Հայոց միաբան նախարարները ժողովուելով քաջ
և յաջողակ Ներսէս ծիծարակեցու առաջնորդութեամբ
պատերազմ տուին պարսից գնդի դէմ, զարկեցին
նրանց զօրքին և Ապրսամ Սպանդունի զօրապետին
սպանեցին, իսկ իրանք ինքնազլուխ ցրուեցին լեռնոտ
և ամուր տեղեր. այդ պատերազմում բոլոր վանան-
դեցիք մեծ քաջութիւն ցոյց տուին: Դրա համար աղմը-
կուեց մեր աշխարհը և մեծ խովութիւն ընկաւ. երեք
տարի այսպէս անիշխանութեան մէջ մնալով՝ աւերուեց
և ամայացաւ, որի համար և արքունի հարկերը պա-
կասեցին, ուամիկների (զիւղացիների) ճանապարհները
փակուեցին և ամեն կարգ-կանոն խանգարուեց:

Այդ ժամանակ պարսից վրայ թագաւորեց Վռամ.
Նա հալածանք համելով քրիստոնէութեան դէմ՝ գոռո-
զաբար պահանջեց յոյներից Յունաստան փախած քրիս-
տոնիայ պարսկիկներին: Յոյները մերժեցին: Այդ մեր-
ժումը մի կողմից, միւս կողմից էլ առևտրական վէ-
ճերը՝ պատերազմ զրգուեցին նրանց մէջ: Երկու կողմն
էլ ոչինչ չշահեցին: Վռամ իր վրէժը հայերից հանեց.
Նա յոյների հետ խաղաղութիւն էր կատեր դրա հա-
մար էլ ձեռք չտուեց այն բաժնի հայերին:

Երբոր Սահակ մեծը պարսից բաժնում այս բո-
լոր չարութիւնները տեսաւ, գնաց մեր աշխարհի արև-
մբանակ կողմը՝ յունաց բաժինը, բայց իր կոչմանն
արժանավայել ընդունելութիւն չդատաւ. դրա համար
Մեսրովին և իր թոռ Վարդանին ուղարկեց Բիւղան-
դիա՝ թէոդոս կայսեր մօտ: Այդ մասի հայերը համար-
ւում էին կեսարիայի աթոռի վիճակ, դրա համար յոյ-
ներն արգելեցին Մեսրովին գպրոցներ հիմնել և հա-
յերէն գրերով ուսուցանել հայ երեխաններին, այնտեղ

յունական գոլրութեամբ պէտք է ուսանէին: Այս բո-
լորի պատճառն այն էր, որ Սահակ կեսարիայի մետ-
րազօլտից չէր ստացել ձեռնադրութիւնը: Սահակ
Մեսրովին և Վարդանի միջոցով բոլոքեց կայսրին և
պատրիարքին յոյների այդ վարմունքի դէմ: Նրա
ինդիրը յարգուեց:

Այն ժամանակ Սահակի մօտ եկան պատգամա-
ւորներ և յայտնեցին, որ շատ նախարարներ հրաւի-
րում են նրան, որպէսզի միաբանութիւն հաստատէ
իրանց մէջ: Պարսից թագաւոր Վռամ տեսնելով որ
առանց հայոց նախարարների անկարելի է աշխարհը
հպատակութեան մէջ պահել, Սմբատ ասպետի մի-
ջոցով հաշտութիւն խնդրեց: Դրա համար Սահակ ա-
րևմտեան կողմի համար Մեսրովին թողեց ուսուցա-
նելու, իսկ ինքն անցաւ եկաւ Այրարատեան գաւառը:

Համելով Այրարատեան գաւառը՝ հաւաքեց բո-
լոր նախարարներին և Սմբատ ասպետին ու իր թուր
Վարդան ստրատելատին ուղարկեց Պարսից արքայի
գուսլը: Վռամ հաշտութիւն հաստատելով՝ նրանց յան-
ցանքների ներման թուղթ կնքեց, նրանց ինքրի հա-
մաձայն՝ Վռամշապուհի որդի Արտաշէսին թագաւոր
կարգեց և նրա անունը փոխելով Արտաշիր՝ Հայոց
աշխարհը նրան հաւատաց՝ առանց պարսիկ վերա-
կացուի: Նա թագաւորեց վեց տարի:

Սակայն հայոց Արտաշիր թագաւորն սկսեց սաս-
տիկ անառակ կեանք վարել, այն աստիճան՝ մինչ նա-
խարարները ձանձրացան: Նրանք եկան Սահակ մեծի
մօտ բոլոքեցին և նրան ևս հրաւիրեցին իրանց հետ
միանալու և պարսից արքային գանգատառելու, որ-
պէսզի նրան թագաւորութիւնից զրկէ և պարսիկ իշ-
խան ուղարկէ: Բայց նա ասում էր. «Զեղնից թագ-
ցնելու ոչինչ չունիմ. այդպիսի ամօթալի բաներ ես

էլ եմ լսել և շատ անգամ յանդիմանել, բայց նա ուրացաւ: Սակայն հարկաւոր է մի փոքր համբերել և տանել մարդու պակասութիւնները, մինչև Յունաց Թէռոդոս կայսեր հետ զործերի եղի նախին մասձենի, այլ ոչ թէ անօրէններին յանձնենք ծաղրելու: Բայց նըրանք չէին կամենում, այլ աշխատում էին նրան էլ իրանց համախոն դարձնել: Այն ժամանակ նա ասաց «Քառ լիցի. ես իմ մոլորուած ոչխարին գայլերի ձեռքը չեմ մատնիլ, փոխանակ կոտրածին և հիւանդացածին պատսպարելով՝ դահավէժ չեմ անել ես: Եթէ քրիստոնեայ թագաւորի մօտ լինէր, չէի ուշանալ, կըշտապէի, որովհետեւ յոյս կ'ունենայի գլորուածին կանգնեցնել իսկ հեթանուների մօտ, որպէսզի աւելի ևս կործանեմ, յանձն չեմ առնիլ, որովհետեւ առուած է. «Գաղանների ձեռքը մի մատնիր հաւատացեալին»: Թէպէտ անառակ է, բայց աւազանում մըկըրտուած է, անբարոյական է, բայց քրիստոնեայ է, մարմնով տկար է, սակայն հոգով անհաւատ չէ, վարքով շռայլ է, բայց կրակապաշտ չէ... եւ ի՞նչպէս կարելի է, որ իմ հիւանդ ոչխարը փոխեմ առողջ գաղանի հետ, որի առողջութիւնն է հէնց մեղ վնաս»: Նախարարները կարծելով, որ նա խարելով ցանկանում է իրանց գործն ուշացնել, որպէսզի թագաւորին նախապատրաստէ, ամենքը միասին ասացին. «Որովհետեւ դու մեղ հետ չհամաձայնեցիր, որ նրան թագաւորութիւնից զցենք, արդ՝ մենք էլ կըցանկանանք, որ գու կաթողիկոս չլինես»: Եւ ամենքը միաբանելով՝ Սուրմակ անունով արծկէացի մի փառամոլ երէց հետները՝ անցան գնացին պարսից վոամ արքայի մօտ, որպէսզի չարախօսեն իրենց Արտաշիր թագաւորի և Սահակ մհծի վրայ, որպէս թէ յունաց խորհրդովն են շարժուում:

Այն ժամանակ պարսից Վոամ թագաւորը Հայոց Արտաշիր թագաւորին և Սահակ մհծին կանչեց դուռը: Սահակ մհծին խնդրում էին, որ նա ամբաստանէ Արտաշիր թագաւորին, բայց նա հրաժարուեց որեւէ չար կամ բարի բան նրա մասին ասելու: Ապա Վոամ հրամայեց Արեաց հազարապետին, որ Սուրէննեան պահաւ էր, որպէսզի Սահակ մհծին, որպէս իր ցեղակցին, համաձայնացնէ: Հազարապետը քաղցր խօսքերով ասում էր. «Դու իմ արիւնն ու հարազատն ես, քո բարին ցանկանալով եմ ասում. եթէ միայն այժմ նախարարների հետ համաձայնիս, պարսից արքայից պատիւներ կըստանաս, և քո թոռ Վարդանին թագաւորի հաւասար իրաւունք և պատիւ կըտայ հայերի վրայ»: Բայց նա յանձն չառնելով ասում էր. «Ի՞նչո՞ւ ես պէտք է մնափառութեան կամ իշխանութեան համար չարախօսեմ ընկերոջ մասին. կամ ի՞նչո՞ւ էք դուք համաձայնում Արտաշիրին զցել, քանի որ նրա ապստամբական խորհրդի մասին ոչինչ չգիտեմ... դուք ինձնից ոչինչ չէք լսելու նրա մասին»:

Այն ժամանակ Վոամ զայրանալով միծ հրապարակում քննութիւն նշանակեց և չմելով Արտաշիրին՝ յօժարութեամբ լսում էր չարախօսներին՝ առաւել ևս Սարմակի կեղառա խօսքերը. որովհետեւ թշնամի և ոխակալ նախարարները նրան էին խոստացել կաթողիկոսական աթոռը, գրա համար էլ նա իր լեզուն եսամոլութիւնից զրգուած պատրաստեց՝ ի՞նչպէս մահացու առևել: Վոամ հրամայեց Արտաշիրից իսկեւ թագաւորութիւնը և բանտարկել. նրա ցեղի բոլոր կայքը յարքունիս գրաւեց. նոյնպէս վարուեց և Սահակ մհծի հետ. կաթողիկոսական տունը յարքունիս գրաւեց և նրա փոխարէն կաթողիկոսական աթոռը Սուրմակին տուաւ: Նախարարներին էլ մհծ պարգևներով արձակեց մի պարսիկ մարզպանի հետ, որի անուն էր Վեհմիհրշապուտ:

ՊԱՐԵԵՒ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՐՍՈՒԹԻՒՆՆ.

Տիրիտ Ա. կամ Տրդատ-Արտաշէս	.	.	58—59
Տիգրան Ե.	.	.	59—62
Տրդատ-Արտաշէս երկրորդ անգամ	.	.	62—107
Եքսիդարէս	.	.	107—114
Պարթամազիրիս, Աքեմենիս, Բակուրոս,			
Սօհեմոս	.	.	? —178
Մանաւրուկ	.	.	178—217
Վաղարշ	.	.	217—227
Խոսրով Ա.	.	.	222—252
(Մասանեան սատրապ)	.	.	?
Տրդատ փախստական	.	.	276—
Տրդատ վերջնականապէս	.	.	297—336
Խոսրով կարճահասակ (Կոտակ) Բ.	.	.	336—343
Տիրան	.	.	343—353
Արշակ Բ.	.	.	353—368
Պապ	.	.	368—373
Մանուչէլ սպարապետի խնամակալութ.	377—383		
Արշակ Գ.	.	.	383—384
Հայաստան բաժանւում է երկու մասի		—384	
Խոսրով Գ. արևելեան Հայաստանում	.	384—391	
Արշակ Գ. արևմտեան Հայաստանում	.	384—386	
Վասմշապուհ արևելեան Հայաստանում	.	391—414	
Խոսրով Գ. երկրորդ անգամ.	.	414—416	
Շապուհ պարսիկ	.	416—419	
Անիշխանութիւն	.	419—421	
Արտաշէս կամ Արտաշիր	.	422—428	

Բ.

Ո Ա Լ Է Ռ Ա Ր

Քրիստոնէութեան մուտքը որպէս սկիզբն հայերի մտաւոր շարժման. Առաջին դպրոցները. Թարգմանչական գործունէութիւն. Սահակ Պարթէս կաթողիկոս և Մեսրովը թարգմանիչ. Հայ տառերի գիւտը և նոր դպրոցներ. Գրականութեան սկզբնաւորութիւնը:

Քրիստոնէութեան տարածմամբ սկսւում է հայերի մտաւոր շարժումը. Առաջին դպրոցներն այն գաղտնի եկեղեցիներն էին, ուր հաւատացեալները ծածուկ հաւաքւում էին քարոզ և աւետարանի ընթերցանութիւն լսելու. Առաջին ուսուցիչները քրիստոնեայ քարոզիչներն էին: Քրիստոնէութիւնը, հակառակ հեթանոսութեան, արտաքին ծէսեր շատ քիչ ունէր. աւելի շուտ նա հոգեկան ու մտաւոր կրթութիւն էր. դրա համար նրա հետևողները նախ քան ընդունելը՝ պէտք է մտքով ըմբռնէին այդ ուսմունքը: Այդ է պատճառը, որ քրիստոնէութիւնը զարկ տուալ մտաւոր շարժման: Այդ շարժումը զգալի և նշանաւոր պէտք է լինէր մանաւանդ ասիական ազգերի համար, որտեղ մուտք չէր գործում արևմտեան գիլիսովաների ուսմունքը:

Հայոց առաջին կաթողիկոսները հիմնեցին հայերի համար առաջին դպրոցները՝ եկեղեցու սպասաւորներ պատրաստելու համար, այդ դըպրոցներում ուսուցանում էին յոյն և ասորի լեզուները հաւասարապէս, որովհետև կրօնական գըրքերը՝ Աւետարան և Աստուածածառնչ այդ լեզուներով էին: Եկեղեցիներն ու դպրոցները միենոյն նպատակին էին ձգտում. նրանք քրիստոնէական վարդապետութիւնը մատչելի էին դարձնում ժողովրդին: Սկզբում ահագին դժուարութեան էին հանդիպում, որովհետև ժողովուրդն այդ լեզուներին անտեղեալ էր, իսկ հոգեորականները՝ մեծ մասամբ յոյն և ասորի հայոց լեզուին չտիրապետելով, չէին կարսղանում նոր վարդապետութեան էութիւնը հասկանալի դարձնել ժողովրդին. այդ է պատճառը, որ հայերի մեծ մասը առ անի կամ ձևականօրէն էին ընդունել այն:

Այնուհետև պարսկական քաղաքականութիւնը, որ վտանգել կարող էր քրիստոնէութեան գոյութիւնը, հայ կաթողիկոսներին ստիպեց միջոցներ որոնել՝ այդ չարիքի առաջն առնելու համար: Առաջին դպրոցներում և յունական ու ասորական կրթութեան վայրերում ուսած հայ երիտասարդներ պատրաստուեցին, որոնք եկեղեցում Աւետարանից կտորներ էին կարդում օտար լեզուներով. դրանք վերծանող-

ներ էին կոչւում: Այնուհետև կային և ուրիշ պաշտօնեաներ, որոնք հէնց եկեղեցում ժողովրդի ներկայութեամբ թարգմանում էին կարդացածը և բացատրում. դրանք կոչւում էին թարգմանիչներ. սրանց պաշտօնն էր նաև մայրենի լեզուով ժողովրդին բացատրել ծիսական աղօթքներ, անգիր սովորեցնել արտասանել սաղմոններ և աղօթքներ:

Այսպիսով այդ երկու դասակարգերի շնորհիւ քրիստոնէութիւնը կամաց-կամաց հասկանալի և մատչելի էր դառնում ժողովրդին և նրա միտքը այդ ուղղութեամբ կրթում: Այնուհետև սովորութիւն դարձաւ՝ հայ երիտասարդներին Յունաստանի և Ասորիքի զանազան վայրերն ուղարկել վերծանողներ և թարգմանիչներ պատրաստելու: Թարգմանիչները՝ բացի այն, որ պէտք է լաւ տեղեալ լինէին թէ օտար և թէ մայրենի լեզուներին, այլև պէտք է վարժուէին այդ արհեստի մէջ, այսինքն արագ, առանց դժուարութեան թարգմանէին. շնորհիւ իրանց պաշտօնին՝ նրանք պէտք է և մայրենի լեզուի դարձուածքները հարստացնէին: Յոյն և ասորի լեզուներն իմանալն անհրաժեշտութիւն դարձաւ հայ հոգեորականների համար: Այդ շրջանի թարգմանական լեզուն պէտք է որ շատ ազդուէր այդ լեզուներից:

Որքան խելացի միջոց էր թարգմանչական

գործը, այնքան էլ դժուարութիւնների հետ էր կապուած. ամբողջ Հայաստանի համար քանի վերծանողներ և թարգմանիչներ էին հարկաւոր, և այն ժամանակուայ պայմաններն ՚ի նկատի ունենալով՝ արդեօք հնարաւոր էր պահանջուած թիւն ունենալ. մինչդեռ, մանաւանդ ծայրագաւառների համար, քրիստոնէութիւնը մնացել էր լոկ մի ձեւական արարողութիւն, իսկ քաղաքական պայմաններն ամենսին էլ նպաստաւոր չէին նրա համար. Ահա այդ դժուարութիւնն ստիպեց ելք որոնել, միակ ելքը հայերէն լեզուվ գրեթեր կարող էին լինել, սակայն այդ ժամանակ գոյութիւն չունէր ոչ հայերէն զիր և ոչ դպրութիւն։ Քաղաքական կեանքի անկումը Հայաստանում և արտաքին վտանգաւոր հանգամանքներն շտապեցրին այդ կարիքի լրացնելը։

Երդ դարու սկզբներին հայերն ունեցան սեպհական զիր, որից յետոյ և ստեղծուեց գլրականութիւն. Այդ մեծ գործի հետ կապուած են Մեսրովը վարդապետ Մաշտոցի և Սահակ Պարթե կաթողիկոսի անունները։

Մեսրովը Տարօն գաւառի Հացեկաց զիւղիցն էր. հօր անունը Վարդան էր. Նա ծնուել է 361 թ., աշակերտել է ներսէս Մեծին. հըմուտ էր յոյն, ասորի և պարսիկ լեզուներին. Նա սկզբում զինուորական պաշտօն ունէր և

շատ սիրելի էր զօրքին. ապա իբրև հմուտ լեզուագէտ Վուամշապուհի նախորդ՝ Խոսրով Գիօրգի օրով նշանակուեց արքունի քարտուղար։ Նա Վուամշապուհի թագաւորութեան առաջին տարին թողեց արքունիքը և դարձաւ թարգմանիչ Գողթն գաւառում։ Հայաստանի այդ մասում գեռ ևս մնում էին հեթանոսական սովորութիւններ. Նա ունէր և աշակերտներ. Թարգմանչական գործի դժուարութիւնն ստիպեց նրան մըտածել հայերէն տառեր գտնելու մասին, և նա իր այդ միտքը յայտնեց ժամանակի կաթողիկոս Սահակ Պարթևին։

Սահակ Պրիգոր Լուսաւորչի սերնդից էր՝ նոյնպէս հմուտ յոյն և ասորի լեզուներին. Նա ազգասէր մարդ էր. Մեսրովի յայտնած միտքը նա համակրանքով ընդունեց և յայտնեց Վուամշապուհ թագաւորին։ Վերջինս յայտնեց, որ Միջագետքում եղած ժամանակ Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ տեսել է հայերէն զրեր։ Մարդ ուղարկեցին Միջագետք՝ տառերը սովորելու և բերելու։ Տառերն ստանալով Մեսրովը Սահակի հրամանով սկսեց ուսուցանել՝ գասաւորելով յունական այբուբենի ձևով։ Մեսրովը ստացաւ վարդապետական աստիճան և կարգուեց ընդհանուր հայ գլուցների ուսուցիչ տեսուչ։ Երկու տարուայ փորձից յետոյ Մեսրովը զգալով այդ գրերի թերութիւնը՝

Եր աշակերտներից մի քանիսին վերցրեց և
գնաց Դանիէլի մօտ՝ յուսալով գտնել նրա մօտ
աւելի գրեր կամ ծանօթութիւններ։ Այստեղ
աւելին չգտնելով՝ անցաւ Ասորիք. Եղեսիայում
թողեց իր աշակերտներից մի քանիսին զանա-
զան դպրոցներում՝ յոյն և ասորի լեզուներն ու-
սումնասիրելու, իսկ ինքը ճանապարհորդեց ու-
ժիշտ վայրերում, որտեղ կային յոյն և ասորի
գիտնականներ՝ յուսալով նրանց օգնութեամբ
ձեռք բերել իր ցանկացածը։ Սակայն բոլոր
գիմումներն ապարդիւն անցան, Վերջապէս եր-
կար ջանքերից յետոյ իր սեպհական աշխատու-
թեամբ կարողացաւ լրացնել անհրաժեշտ տա-
ռերը։ Ապա տառերը յանձնեց այնտեղի լաւ
գրչագիրներին ընդօրինակելու, որոնք և Մես-
րովքի աշակերտներին սովորեցրին վայելուչ դը-
րելու ձեր։ Դրանից յետոյ Մեսրովք վերադար-
ձաւ Հայաստան. նրան մեծ պատուով դիմա-
ւորեցին Կոռամշապուհ և Սահակ կաթողիկոս։
Այդ դէպքը տեղի ունեցաւ 406-412 թ.

Այդ տառերը կոչուեցան Դանիէլեան կամ
Մեսրովքեան, որ գործ ենք ածում մինչև այժմ։

Մեսրովք արևելեան Հայաստանում ամե-
նուրեք մտցրեց նոր տառերը, ապա դիմեց ա-
րևմուտք՝ Յունաց բաժինը։ Յոյներն արգելեցին
իրանց բաժնում մտցնել։ Այն ժամանակ Սա-
հակ կաթողիկոս պատգամաւորներ ուղարկեց

Թէոդոս կայսեր մօտ միջնորդելու։ Պատգամա-
ւորներն էին ինքը՝ Մեսրովք և Սահակի թոռն
Վարդան, Նրանք իրանց հետ աշակերտներ ևս
տարան, որոնց տուին Մելիտինէ՝ յունական
դպրոցում ուսանելու։

Թէոդոս կայսրը հարցրեց՝ թէ ինչու յու-
նական գրերը թողած՝ ասորական աղբեւրներին
են դիմել։ Պատգամաւորները բացարեցին, որ
գրերը Աստուծոյ օգնութեամբ են գտնուած։
Կայսրը համոզուելով թոյլատրեց, այլ և իր
բաժնի դպրոցների ծախքը ինքը հոգաց։

Մի տեսնդային աշխատանք սկսուեց Հա-
յաստանի կենտրոնում՝ Այրարատեան երկրում։
ըստոն ոգևորութիւն էր տիրում հոգեորակա-
նութեան շարքերում. դպրոցներում ամենուրեք
սկսեցին ուսուցանել հայերէն գրերով. ընդու-
նակ թարգմանիչներին սովորեցնելուց յետոյ,
ուսուցիչներն իրանց օգնականներ ընտրեցին
նրանցից և անմիջապէս ձեռնարկեցին Աստու-
ծաշնչի և Սւետարանի թարգմանութեանը։ Այդ
թարգմանութիւնները կատարեցին ամենանշա-
նաւոր թարգմանիչները՝ Սահակ կաթողիկոս և
Մեսրովք Մաշտոց։

Այժմ այլևս վերծանողներ պէտք չէին, այլ
հարկաւոր էին միմիայն թարգմանիչներ։ Եւ
ահա հայ անդրանիկ դպրոցներն աւարտած ըն-
դունակ երիտասարդներին ուղարկում են Յու-

նաստան և այլ վայրել՝ օտար լեզուների մէջ կատարելագործուելու։ Վանքերն ու դպրոցները մի-մի արհեստանոցներ դարձան. աշխատանքը եռում էր նրանց մէջ. մի տեղ մելան էին պատրաստում, միւս տեղը՝ կարեսը դեղերը. յաջող գրիչներն ընդօրինակում էին գրքերը, ծաղկում մագաղաթը և այն։

Արտասահմանից վերադարձող ուսանողները յունական գիտութիւնների պաշարով՝ շարունակեցին իրանց ուսուցիչների սկսած դորձը. նրանցից դուրս եկան առաջին հայ հեղինակները, որոնք ընդհանուր անունով կոչում են թարգմանիչներ։ Նրանք հիմք դրին հայ գրականութեան երկու ճիւղերին. կրօնական-եկեղեցական և ազգային-պատմական։ Նրանք հետեւում էին յոյն գրողներին և նրանց մի քանի գրուածքները թարգմանեցին։ Այսպիսով՝ Երդ դարու սղբներին մինչ հայերը վերջնականապէս կորցնում էին քաղաքական անկախութիւնը, Ասիայի բարբարութիւն, որով աւելի ևս մեծանում էր այն վիճը, որ նրանց բաժանում էր արևելեան-պարսկական կուլտուրայից։

Գիր ու գրականութիւն առաջ գալուն նպաստեց քրիստոնէութիւնը. նրա մշակողներն ու ուսուցիչները հոգեորականներն էին, և դրա համար հայերի կրթութիւնը միակողմանի ուղ-

դութիւն ստացաւ. այդ ուղղութիւնը մինչև այսօր էլ շարունակում է. հայերը երբէք աշխարհիկ դպրոց չունեցան։

Երդ դարու հեղինակները վերակենդանացնելով հին հայերէն տառերը՝ գրականութեան համար էլ ընտրեցին հին ոստանիկ բարբառը՝ գրաբառը և մշակելով ու զարգացնելով՝ ամենաբարձր աստիճանի հասցըին։ Հայի մտաւոր—հոգեկան կրթութիւնը յետակայ ոչ մի դարում այդ աստիճան չբարձրացաւ. դրա համար էլ այդ դարը կոչւում է Ոռկէ դար։

Երկրի հազարապետութիւնը՝ ներքին գործերի վերահսկողութիւնը հայ իշխանի ձեռքին էր. արքունի կոչուած հեծելազօրքի սպարապետը հայ նախարար էր. իսկ իւրաքանչիւր նախարար ունէր և իր գունդը: Հայերը պարսից իշխանութեան տակ օգտառում էին այդ արտօնութիւններով, որի փոխարէն պահանջւում էր նրանցից հաւատարմութիւն:

Թագաւորսւթեան անկումից յետոյ ժողովրդի աչքում միակ դեր խաղացող մարմինը մնացել էր հոգևորականութիւնը: Հոգևորականութիւնը ուժեղ մասը (բարձր հոգևորականութիւնը) իր կրթութիւնն ստացել էր յունական վայրերում և հոգով կապուած էին արևմտեան քաղաքակրթութեան հետ: Յսւնաստանն իբրև քրիստոնեայ պետութիւն՝ նրանց համար միակ յենարանն էր հեռու արևելքում և նրանք ամբողջ հոգով ձգտում էին Հայաստանը դնել կայսրների իշխանութեան տակ:

Հոգևորականութեան յունասիրութիւնը ծածուկ չէր պարսիկներից. դրա համար հայերի ինքնավար դրութիւնը և հոգևորականութեան աղղեցութեան մեծանալը լուրջ մտահոգութիւն էր պատճառում պարսից կառավարութեանը, թէ միգուցէ այդպիսի օահաւէս երկրից զրկուի:

Հայաստանում կային և ասորական կրթութեամբ հոգևորականներ, որոնք ատելութեամբ

Գ.

Կրօնական պատերազմներ

I.

Արևելեան Հայաստան. Մարզպան և նախարարներ. Հոգևորական կուսակցութիւն. Սասանեանների ձգտումը. Հայերի յունասիրութիւնը. Յաղկերտ Բ. և հալածանք քրիստոնէութեան դէմ. Տնտեսական ճրգանաժամ. Հայերի ապստամբական խորհուրդը և Վասակ մարզպան. Հոգևորական կուսակցութեան միջամբտութիւնը և պառակտումն. Աւարայրի ճակատամարտը:

Արշակունեաց հարստութեան անկումից յետոյ արևելեան Հայաստանը կառավարւում էր մարզպաններով: Մարզպանը (երկիրը պահպանող) արքայից արքայի ներկայացուցիչն էր. նա հսկում էր երկրի իշխանների վրայ, որպէսզի նրանք ապստամբական փորձեր չանեն, տուրքերը ժողովում և ուղարկում էր Պարսկաստան: Հայ նախարարներին գրաւելու և նրանց ինքնասիրութիւնը շոյելու նպատակով առաջին պարսիկ մարզպանից յետոյ, այդ պաշտօնը յանձնուեց հայ նախարարի: Նախարարներն առաջուայ պէս կառավարում էին իրանց երկիրը.

Էին վերաբերում յունական կրթութիւն ստացած իրանց պաշտօնակիցներին և յաճախ մեղադրում էին նրանց ազատամտութեան համար։ Պարսից կառավարութիւնը շատ անդամ էր օգտում նրանցից՝ նշանակելով իր կողմից ներկայացուցիչ՝ իսկական կաթողիկոսի գործունէութեանը հսկելու համար։

Սասանեան հարստութիւնը երևան եկաւ Պարսկաստանում, որպէս հակադիր ոյժ արեմբան քաղաքակրթութեանը և այդ քաղաքակրթութեան նուաճումներին։ Այդ քաղաքակրթութիւնն այժմ գալիս էր քրիստոնէութեան միջոցով։ Այդ ոյժը նիւթական չէր, որ կարելի լինէր զէնքով ոչնչացնել. աւելի վտանգաւոր էր այդ։ Այդ քաղաքակրթութեան ուժի տակ հայերը հողով բաժանուեցին իրանց դարաւոր բարեկամ-գերիշխողից՝ Պարսկաստանից։ Հայերի ահազին գաղթականութեամբ նախորդ միապետները խորտակել ցանկացան այդ քաղաքակրթութեան առաջխաղացութիւնը։

Քրիստոնէութեան դէմ հանած հալածանքներին միակ ուժեղ դիմադրողը արևմտեան կայսրութիւնն էր. յոյների ուժեղանալով խանգարում էր պարսիկների ծրագիրը։ Յոյները պատերազմով ստիպեցին դադարեցնել Սասանեանների հանած հալածանքը և 421 թուին հարիւրամեայ դաշնադրութեամբ պարտաւորեցըին

յետ կանգնել իրանց ծրագրից։ Վոամ Ե. Սահակ մեծին հրաւիրելով իր մօմ՝ «Երգուեցրեց նրան իր իսկ հաւատով, որ հաւատարիմ հպատակ կըլինի և ապստամբական մտքեր չի մտածիլ՝ խաբուելով յոյների հետ մոլար հաւատակից լինելուց, որ նա հայոց աշխարհի Պարսկաստանից անջատուելու պատճառ չի դառնալ»։

Սակայն Վոամի յաջորդ Յազկերտ Բ. (442-460) գրգոռած պալատականներից և մոգերից՝ մտածեց կըակապաշտութիւնը տարածել հպատակ քրիստոնեայ ազգերի մէջ։ Այդ նպատակին հասնելու համար նա հետևեալ միջոցներին դիմեց։

Նախ՝ հակառակ իր նախորդի կապած դաշնագրութեան յանկարծակի յարձակուեց Միջագետքի յունաց բաժնի վրայ, աւերեց շատ տեղեր և հարկադրեց՝ Յունաստան ապաւինած քրիստոնեայ պարսիկներին իր ձեռքը մատնել։ Նոր դաշնագրութիւն կնքուեց, որի համաձայն յոյներն իրաւունք չունէին վտանգաւոր ըոպէներին հայերին օգնել։ Դաշնագրութեան այդ կէտը միանգամայն յուսահատեցնում էր յունասէր հայերին։

Ապա Սասանեաններին ատելի և հակառակորդ Արշակունիներին վերջին հարուածը հասցընելու և իր երկիրը միանգամայն յարձակումներից ազատելու նպատակով պատերազմ սկսեց քու-

շանների դէմ. այդ պատերազմը երկար տևեց և միւս կողմից էլ կորստաբեր եղաւ հալատակ ազգերի համար։ Հպատակ ազգերը, որոնց թւում և հայերը, պարտաւոր էին արքունի հեծելազօրքն ամբողջովին փոխադրել հեռու պատերազմի վայրը. նորանոր թարմ ոյժեր դուրս տալով՝ երկիրն ուժասպառ էր լինում։

Այսուհետեւ պարսիկ զօրքով բռնեց հայոց միջնաշխարհը, նոր աշխարհագիր անել տուաւ և հարկերն ու տուրքերը կրկնապատկուեցին։ Պարսիկ զօրքն ամենայն խստութեամբ ժողովում էր այդ տուրքերը, շատ տեղեր աւազակաբար թալանում էին. հոգեորականներն ու եկեղեցիներն անգամ հարկի տակ դրուեցին։ Ժողովրդի համար տնտեսական ծանր կացութիւն ստեղծուեց։ Իրանք պարսիկներն անգամ զարմանում էին, որ այդքան տուրքերն ստանալուց յետոյ այդ աշխարհը դարձեալ շէն է մնում։

Հայ մարզպանի կողքին նշանակեցին և պարսիկ իշխան, որին յանձնարարուած էր խոռվութիւն սերմանել հայ նախարարների մէջ և նրանց մէջ իրանց աջակիցներ որսալ։ Թատերը, որ մինչ այդ վճռում էին եկեղեցական օրէնքների համաձայն՝ հայ հոգեորականների ձեռքով, այնուհետև արքունի դատարաններում պէտք է քննուէին մոգերի ձեռքով։

Այդ բոլոր ճնշումները լուրջ խլրտումներ ա-

ռաջացրին հայերի մէջ։ Հոգեորականութիւնն այդ բոլոր միջոցների մէջ մի նպատակ էր միայն տեսնում. — հալածանք քրիստոնէութեան դէմ. դրա համար նա պատրաստեց ժողովրդին՝ դուրս գալ և իր արիւնով փրկել եկեղեցին։

Մարզպանն էր Սիւնեաց Վասակ իշխանը. Նա մի ընդունակ և քաղաքագէտ մարդ էր և Յազկերափ վստահութիւնն էր գրաւել։ Նա ջերմ աջակիցն էր եղել Մեսրովք Մաշտոցին, երբ վերջինս գնացել էր Սիւնեաց կողմերը՝ դեռ ևս գոյութիւն ունեցող կռապաշտական հետքերը ջնջելու և դպրոցներ հիմնելու։ Վոամ Ե-ի հրատարակած գահնամակի համաձայն հայոց նախարարների մէջ առաջին բարձն էր գրաւում նա։ Նա ցանկացաւ օգտուել Հայաստանում տիրող տրամադրութիւնից և իր դիրքից ու հայոց թագաւորութիւնը վերականգնել։

Դրա համար նա աշխատում էր նախարարներին իր կողմը գրաւել, հոների հետ բարեկամական դաշն էր կապել և օգնելու խոստում ստացել, արքունի գանձերի մի մասն իր մօտ էր պահում՝ պատերազմական ծախքերը հոգալու համար ու յոյս ունէր աջակցութիւն գտնել և յոյներից։

Սակայն անակնկալ դէպքերը և հոգեորականութեան միջամտութիւնը խանգարեցին նրան։

Յազկերտ քուշամաց դէմ պատերազմն ա-

աւարտելուց յետոյ, արգելեց հայոց հեծելազօրքի վերադարձը հայրենիք։ Ապա Միհրներսեհ հազարապետը նրա հրամանով թուղթ գրեց Հայաստան և պահանջեց որ մոգական կրօնն էլ ճանաչուի իբրև պետական կրօն։ Հայերը մերժեցին, որի համար և նախարարները հրաւիրուեցին Պարսկաստան։ Յազկերտ նոյն առաջարկութիւնն արաւ նրանց։ Նախարարները լաւ համարեցին առ երեսս ուրանալ, վերապառնալ հայրենիք և ապստամբութեան ծրագիրն իրագործել։ Նրանք մեծ պատիւներով և մոգերով վերադարձան հայրենիք, նրանց հետ էին վրաց և աղուանից իշխանները ևս։ Բաղդակից ազգերը գաղտնի գաջն էին կապել իրար օգնելու։

Հոգեորական դասը լսելով նախարարների վարմունքի մասին՝ նախապատրաստեցին ժողովը վրդին նրանց չընդունելու, Միւս կողմից ընկան մոգերի վրայ ու քշեցին։ Վասակ աշխատում էր բոնկուած կրքերը հանգստացնել՝ բացատրելով բոպէի լրջութիւնը, սակայն հոգեռականութիւնը ոչ մի խոհեմութեան մասին լսել անգամ չէր ուզում։ Վասակ նախ սպառամատութիւն ուղարկեց Յուսուց կայութից օգնութիւն խնդրիլու, ապա հրաւէր կարգաց յունաց բաժնի հայ նախարարներին, որ օգնեն իրանց։ Սակայն Վասակի անձնական թշնամիներն էլ մի կողմից միացած հոգեորական կու-

սակցութեան հետ՝ շարունակ գրգռում էին ապստամբութիւնը շուտ սկսել, նրանք մտածում էին, որ եթէ Վասակ կրմիանայ, նրա որդիքը, որոնք պատանդ էին Պարսկաստանում, կըսպանուէին, իսկ եթէ չի միանալ, հոգեորական կուսակցութիւնը նրան կըսպանէ։

Արևմտեան կայսրութիւնը ճգնաժամի մէջ էր և հարկ չէր գտնում խառնուելու պարսիկների գործերի մէջ, որպէսզի նոր պատերազմ չգրգռուի։ Ազգերի մեծ գաղթականութիւնները մի կողմից, կրօնական վէճերը միւս կողմից նեղ գրութեան մէջ էին դրել յոյներին։

Գործերն այդ դրութեան մէջ էին, երբ Աղուանքից լուր եկաւ, որ պարսիկները մեծ զօրքով մտել, աւերում են երկիրը։ Կազմուեցաւ զինուորական խորհուրդ, Վարդան սպարապետ մի գնդով գնաց օգնութեան, իսկ մացած զօրքը երկու մաս բաժանեցին։ մէկը Հայաստանի հարաւային սահմանները պաշտպանելու, միւսը՝ միջնաշխարհը։

Յունաստանից սպասուող օգնութիւնը չըստացուեց, հայերը թողնուած էին իրանց բաղդին, Վասակ մորդուան և հայիարարութեան խոր մասը նախատառուր պայմաններ չգտան սկսած ապստամբութիւնը շարունակելու, միւս մասը, որի զլուխ կանգնած էր Յանեկուանը, թիւնը, վճուեցին շարունակելու Հուր հասաւ Վար-

դանին Վասակի և իր համախոհների հրաժարութելու մասին:

Վարդան աճապարեց Սիւնեաց երկիրը Վասակից հաշիւ պահանջելու, որովհետեւ նրան լուր էին տուել, որ քրիստոնէութիւնն ուրացել է: Վասակ երդմամբ հաւատացրեց իր քրիստոնեայ լինելը, միւս կողմից քահանաների միշոցով համոզում էր հոգեորականութեան ծրագրին յարած նախարարներին, որ կրօնափոխութիւն չէ պահանջում Յազկերտ, իսկ ապրատամբութեան համար ըովէն նպաստաւոր չէ:

Չուր էր այդ բոլորը, հոգեորականութիւնն առաջարէզ էր նետուել իր որոշ ծրագրով և ժողովրդի աչքում միակ դեր կատարողը ինքը ցանկացաւ լինել: Ամենուրեք քարոզիչներ ցըռւեցին, ժողովրդին հասկացրին, որ նրանց վրայ եղած ձնշումը կրօնի պատճառով է, որ նրանք պէտք է արիւնով փրկեն եկեղեցին, որ մանուանից չվախեցողներն անման են, որ նախարարների մի մասը, որոնք հեռատեսութիւնից դըրդուած չեն ցանկանում մասնակցել ապստամբութեանը, արդէն սրտով ուրացել են քրիստոնէութիւնը, ուրացողներ են, որ նրանք հայ եկեղեցին մատնում են հեթանոսների ձեռքը, նրանք մատնիչներ են, իսկ նրանց գլուխը կանգնած է երկրի մարդարանը՝ Վասակ, որը

ցանկանում է եկեղեցին կործանելով Յազկերտից Հայաստանի թագն ստանալ:

Պարսից հազարապետ Միհրներսէն, որ Հայաստանի արևելեան սահմաններից հսկում էր անցած դարձածին, մեծ զօրք ուղարկեց ապրատամբութիւնը ննչելու: Ապստամբութեան յարած նախարարներն, ուսեպուհներն իրանց կամաւորների գնդերով ժողովուեցին Արտաշատ, որտեղ Վարդան սպարապետ ընդհանուր հրամանատարութիւնն իր վրայ յանձն առաւ: Հոգեորական դասը նրանցից անբաժան էր նոյն իսկ պատերազմի դաշտում: Այդտեղից նրանք աճապարեցին պարսիկներին գիմաւորելու: Հայ հոգեւորականութիւնն ուղարկեց Երանց ոչ քէ յաղթութիւն տանելու եւ աշխարհային փառք վաստակելու, այլ մեռնելու եւ իրանց արխիւնով եկեղեցին փրկելու: Հայ եկեղեցին անկախ լինելու համար պարտաւոր էր զոհ տալ:

Ճակատամարտը տեղի ունեցաւ 451 թուին Աւարայրի դաշտում, որտեղ Վարդան և իր նիշղակակիցներից շատերն ընկան:

Ճակատամարտից յետոյ պարսից զօրքն անարդել մտաւ երկրի ներսը՝ ապստամբութիւնը ձնշելու. սկսուեցին մի շարք մանր կոփւներ, որոնց շնորհիւ երկիրն աւերռւեց: Վերջապէս Յազկերտ հրամայեց պատերազմական գործողութիւնները դադարեցնել, որովհետեւ արքունի

գանձարանն ահազին վլասներ էր կըում: Ապրա-
տամբութեան գլուխ կանգնած նախարարներն
ու հոգևորականները բռնուեցին և ուղարկուե-
ցան Պարսկաստան, իսկ Հայաստանում ոչ մի աս-
տոււան չկանգնեցրուեց: Վասակ մարզպան էլ
կանչուեց դուռը:

Յազկերտ ատեան կազմեց, որտեղ հոգեո-
րականներն ու ուխտապահ նախարարներն ամ-
բողջ յանցանքը բարդեցին Վասակի վրայ, որ-
պէս թէ իրանց դրդողը նա է եղել: Նրանք Վա-
սակի և նախարարների կազմած ապստամբու-
թեան ծրագիրն ամբողջովին հաղորդեցին Յազ-
կերտին: Յազկերտ այդ բոլորը լսելով՝ զար-
մացմամբ գոչեց. «Դու ժամ վրայ էիր յոյս կա-
պել, որ այդ ամենը մտածեցիր»: Ապա Վասա-
կին բանտարկեց, իսկ ուխտապահներին աք-
սորեց:

Հայ եկեղեցին անմահացրեց Վարդանանց
յիշատակը՝ տօն հաստատելով և նահատակների
թոււմ դասելով նրանց: Նրանց պատմութիւնը
գրեցին և յետնորդ սերնդին թողեցին. այնտեղ
փառաբանում է նրանց գործը և պախարակ-
ում հակառակ կուսակցութեան վեհերուտու-
թիւնն ու ուխտանենգութիւնը: Այնուհետեւ Վա-
սակի անունը նախատական բառ դարձաւ:

II.

Նոր միջոցներ հայերին կրօնափոխ անելու. Պե-
րող և նրա քաղաքականութիւնը. Գիւտ՝ հոգեորական
կուսակցութեան պարագլուխ. Նրա ջանքերը. Պարսիկ-
ների անյաջողութիւնը և վրացիների ու հայերի ապլա-
տամբութիւնը. Ժամանակաւոր կառավարութիւն. Յա-
ջողութիւններ և անյաջողութիւն. Մաքառումն. Պար-
սկաստանի յեղաշրջումը. Վաղարշ և Վահանանց վերջ-
նական յաղթութիւնը:

Աւարայրի ճակատամարտից յետոյ քսան և
երեք երկար տարիներ Հայաստանում շարունա-
կուեցին բռնութիւնները. Երկրում զինուորա-
կան դրութիւն էր տիրում և ժողովուրդը հե-
ծում էր այդ բռնութիւնների տակ:

Յազկերտին 460 թուին յաջորդեց իր կա-
տաղի որդին Պերող, որը գահը խլեց իր անդ-
րանիկ եղբօրից: Նա հայերի վերաբերմամբ
շարունակեց իր հօր քաղաքականութիւնը՝ դի-
մելով աւելի խորամանկ միջոցների: Հայ նա-
խարարներից, ով ցանկանում էր որեէ պատիւ-
կամ պաշտօն ստանալ, պէտք է ուրանար քրիս-
տոնէութիւնը: Հասարակ մարդիկ նոյն իսկ կրա-
կապաշտութիւն ընդունելով պատուի և իշխա-
նութեան տէր էին լինում. կրակապաշտութիւնն
ընդունելը մի սովորական երևոյթ դարձաւ: Ըն-
դունակ, խելացի և ազնիւ մարդիկ, որոնք չէին

գանձարանն ահագին վսասներ էր կըում։ Ապլսուամբութեան գլուխ կանգնած նախարարներն ու հոգևորականները բռնուեցին և ուղարկուեցան Պարսկաստան, իսկ Հայաստանում ոչ մի ասրոււան չկանգնեցրուեց։ Վասակ մարզպան էլ կանչուեց դուռը։

Յազկերտ ատեան կազմեց, որտեղ հոգեուրականներն ու ուխտապահ նախարարներն ամբողջ յանցանքը բարդեցին Վասակի վրայ, որպէս թէ իրանց գրդողը նա է եղել։ Նքանք Վասակի և նախարարների կազմած ապստամբութեան ծրագիրն ամբողջովին հաղորդեցին Յազկերտին։ Յազկերտին յայդ բոլորը լսելով՝ զարմացմամբ գոչեց. «Դու ում վրայ էիր յոյս կապել, որ այդ ամենը մտածեցիր»։ Ապա Վասակին բանտարկեց, իսկ ուխտապահներին աքսորեց։

Հայ եկեղեցին անմահացըեց Վարդանանց յիշատակը՝ տօն հաստատելով և նահատակների թւում դասելով նրանց։ Նրանց պատմութիւնը գրեցին և յետնորդ սերնդին թողեցին. այնտեղ փառաբանում է նրանց գործը և պախարակւում հակառակ կուսակցութեան վեհերոտութիւնն ու ուխտանենգութիւնը։ Այնուհետև Վասակի անունը նախատական բառ դարձաւ։

II.

Նոր միջոցներ հայերին կրօնակոլիս անելու. Պերող և նրա քաղաքականութիւնը. Գիւտ՝ հոգեուրական կուսակցութեան պարագլուխ. Նրա ջանքերը. Պարսիկների անյաջողութիւնը և վրացիների ու հայերի ապըստամբութիւնը. Ժամանակաւոր կառավարութիւնն. Յաջողութիւններ և անյաջողութիւնն. Մաքառումն. Պարսկաստանի յեղաշրջումը. Վաղարշ և Վահանանց վերջնական յաղթութիւնը։

Աւարայրի ճակատամարտից յետոյ քսան և երեք երկար տարիներ Հայաստանում շարունակուեցին բռնութիւնները. Երկրում զինուորական դրութիւն էր տիրում և ժողովուրդը հեծում էր այդ բռնութիւնների տակ։

Յազկերտին 460 թուին յաջորդեց իր կատաղի որդին Պերող, որը գահը խլեց իր անդրանիկ եղբօրից։ Նա հայերի վերաբերմամբ շարունակեց իր հօր քաղաքականութիւնը՝ դիմելով աւելի խորամանկ միջոցների։ Հայ նախարարներից, ով ցանկանում էր որեէ պատիւկամ պաշտօն ստանալ, պէտք է ուրանար քրիստոնէութիւնը։ Հասարակ մարդիկ նոյն իսկ կրակապաշտութիւն ընդունելով պատուի և իշխանութեան տէր էին լինում. կրակապաշտութիւնն ընդունելը մի սովորական երևոյթ դարձաւ. Ընդունակ, խելացի և ազնիւ մարդիկ, որոնք չէին

կեղծում, հալածում էին, որովհետեւ կառավարութեանը դուր գալու և իշխանութիւն ստանալու տենչով վառուած մարդիկ մասնութիւնն ու բամբասելը արհեստ էին դարձրել։ Ճշմարտութիւնը միանգամայն վերացաւ, կեղծիքը տիրապետեց ամենուրեք և բարոյական այլանդակութիւնը հայի յատկանիշը դարձաւ։ Պերոզն ինքն իսկ դասապարտում էր իր քաղաքականութեան հետևանքը։ «Եթէ իմ իշխանութեան տակ անպիտան մարդ և յետնեալ գունդ կայ, ասորին է, բայց ասորուցն էլ աւելի յետինն ու անպիտանը հայն է»։

Մի երկրի բարոյական ակումն է ապացուցանում այդ։

465 թուին կաթողիկոսական աթոռը բարձրացաւ յունական կրթութիւն ստացած Գիւտ, որ իր վրայ վերցրեց թէ առաջին կրօնական պատերազմում նահատակուած և թէ աքսորուած նախարարների որդոց կրթութիւնը։ Միւս կողմից տեսնելով հայերի բարոյական անկումը՝ նա շարունակ խրատում և յանդիմանում էր թուլասիրներին և զգուշացնում պարսիկների հրապոյըներից։ Նա ծածուկ ապստամբութեան համար էր պատրաստում ժողովրդին։ Նա յոյսունէր օգնութիւն ստանալ Բիւզանդիայի Լեռն կայսրից։ Սակայն արևմտեան կայսրութիւնը հազիւ էր կարողանում իր վրայ տեղացող հա-

րուածներին դիմանալ. Նրա օրով վանդալները ոչնչացրին հովվմէական և բիւղանդական միացեալ նաւատորմիղը։

Հայ նախարարների մէջ առաջնակարգ տեղն էր բունում կրակապաշտութիւն ընդունած Գաղիշը Խոռխոռունին։ Նա չարախօսեց Գիւտի մասին Պերոզին. «Այն մարդիկ, ասում էր նա, որոնք ցանկանում են ձեր կրօնն ընդունելով ձեր կամքը կատարել և ձեզ սիրել, յանդիմանութեան են ենթարկուած։ Նա (Գիւտ) ոմանց խիստ խօսքերով, ոմանց քաղցր խօսքերով յետ է կանգնեցնում։ Շատերն ինձ մօտ են եկել և համաձայնուել են ձեր կրօնն ընդունել, բայց նա կանչել է իր մօտ և խարէութեամբ հեռացրել ու արհամարհել տուել իրանց մտածածը։ Մինչեւ անգամ ես, որ քեզ սիրում և հնագանդելով կրակին ու արեգակին եմ երկրպագում, ատելի եմ նրան։ Նա կայսեր հետ յարաբերութիւն ունի, մեծամեծ ընծաներ տալով նրան և նրա դրան իշխաններին է հնագանդում»։

Գիւտ կանչուեց Պարսկաստան և զրկուեց կաթողիկոսական աթոռից։

Պերոզ, հակառակ իր նախորդի կապած դաշնքի, յարձակուեց հեփթաղների վրայ, սակայն սաստիկ պարտութիւն կրեց. իր անձը ազատելու համար հարկադրուեց նրանց առաջարկած խաղաղութեան պայմանն ընդունել. Նա խոստա-

ցաւ այլես չյարձակուել նրանց վրայ։ Այդ պատերազմում հայերն ևս մասնակցում էին։ Շատ ազնուականներ ևս ընկան նրանցից։

Պարսիկները ձանձրացել էին երկարատև արշաւանքներից, մանաւանդ որ այդ արշաւանքները շատ թանկ էին նստում նրանց։ Երկիրը տնտեսապէս քայքայուել էր, հանգստութիւն էր հարկաւոր։

Պարսիկների այդ անյաջողութիւնը և աքսորուած նախարարների վերադարձը նոր ոգի ներշնչեց ասպարէզից անյայտացած և լրուած հոգևորական կուսակցութեանը։ Այդ կուսակցութիւնը կենդանութեան նշաններ ցոյց տուեց և աւելի ուժեղ թափով երևան եկաւ այն ժամանակ, երբ նրա շարքերում կանգնեցին նահատակուած նախարարների երիտասարդ և նոյն ոգով կրթուած որդիքը՝ Վարդանի եղբօր որդին Վահան իր եղբայրներով և Կամսարական եղբայրները։ Այս անդամ այդ կուսակցութեանը միացել էին Բագրատուննեաց և Սիւնեաց իշխաններն ևս։

Հայաստանի ապստամբութեան ազդանշանը վրացիների ապստամբութիւնը եղաւ. պարսիկների անյաջողութիւնը լրախուսում էր հպատակներին։ Մինչ հայոց արքունի հեծելազօրքը, որ Աղուանքում էր, իրեւ սահմանապահ, սպասում էր, որ իրեն պէտք է Պարսկաստանից

պահանջեն, հրաման եկաւ գնալու Հայաստան, որպէսզի արշաւեն վրացիների վրայ։ Զօրքը հասաւ Շիրակ, որտեղ Հայաստանի պարսիկ մարզպանն ու հազարապետն էին բանակած։ Մի գիշեր ծածուկ զինուորական խորհուրդ կազմեցին և առաջարկեցին Վահանին օգտուել հանգամանքից, ապստամբական դրօշակ բարձրացնել։ Վահան համաձայնուեց և 481 թ. անցաւ ապստամբ զօրքի գլուխը։

Պարսիկ պաշտօնեաները և կրակապաշտութիւն ընդունած հայ նախարարները փախան հիւսիսային Պարսկաստան և քանի հայերը անկազմակերպ վիճակի մէջ էին, շտապով զօրք պատրաստեցին ու եկան նրանց վրայ։ Հայերը յաղթեցին և քշեցին նրանց։ Այդ յաղթութիւնը մեծ ոգեսորութիւն պատճառեց և ապստամբների թիւն ստուարացաւ։ Կազմուեցաւ ժամանակաւոր կառավարութիւն։ զօրքերի հրամանատարութիւնը յանձն առաւ Վահան և երկրի հազարապետութիւնը՝ Սահակ Բագրատունին։ Վահան հրաւէր կարդաց Արծրունեաց, Անձնացեաց և Մոկաց նախարարներին՝ միանալու ապստամբութեանը։

Հայերը գիտէին, որ պարսիկներն ուժեղ են և այդ առաջին պարտութիւնը նրանց յետ չի կանգնեցնիլ. նրանք եռանդուն պատրաստութեան մէջ էին։ 482 թուի գարնան լուր հա-

սաւ, որ պարսիկները մեծ ուժով դալիս են իրանց վրայ։ Ազստամբների գունդն էլ Վահանի առաջնորդութեամբ աճապարեց նրանց դէմ։ ճակատամարտը տեղի ունեցաւ նոյն Աւարայր դաշտում։ Հայերը կրկին յաղթեցին և մեծ ողերութեամբ վերադարձան Հայաստան։ Ուրացեալ նախարարների համար այդ յաղթութիւնը մահացու հարուած կարող էր լինել, եթէ նրանք չաշխատէին ապստամբների ոյժը կոտրել։ Ժողովուրդն ամբողջովին կ'անցնէր նրանց կողմը և իրենց դէմ կըզինուէին, միւս կողմից կառավարութեան շնորհներից կըզրկուէին։

Հայերը և վրացիները ուխտ հաստատեցին՝ միահամուռ ոյժերով ժողովուրդների ազատազրութեան գործն առաջ տանելու։ Միւս կողմից պարսիկներն ու ուրացեալ նախարարները մի նենգաւոր ծրագիր կազմեցին։ Նրանք ծածուկ հրապուրեցին վրացիներին, որոնք լուր ուղարկեցին Հայաստան, որ պարսիկները մեծ զօրքով մտել են իրենց երկիրը, իրենք և հոները պատրաստ են և սպասում են հայերին՝ պարսիկներին վերջնական հարուածը հասցնելու։

Վահան առանց կասկածելու դիմեց Վրաստան. ապստամբ զօրքը և պարագլուխները երկրից հեռացան և թակարդի մէջ ընկան։ Հոներ չկային. հայ բանակի մէջ կային կեղծ ուխտապահներ, որոնք վրացիների հետ միասին

վճռել էին կոփուը տանուլ տալ։ Մինչ Վահան ստիպուեցաւ իրանցից աւելի ուժեղ թշնամու հետ կոռուի բոնուել, դաւադիրներն սկսեցին փախչել և իրանց աղաղակներով շփոթութիւն ձգեցին հայոց բանակի մէջ։ Այդ շփոթութեան միջոցին հայ պարագլուխներից մի քանիսն սպանուեցին, մի քանիսը գերի ընկան, իսկ մնացած զօրքը ցըռուեց։

Բարոյապէս ընկած ժողովրդին բաւական էր և այդ անյաջողութիւնը, որ նա յետ կանգնէր ու կազմալուծուէր։ Սակայն Վահան իր ապամական ընդունակութիւններով և ճարպիկութեամբ զեռ կենդանի էր։ Նա ցոյց տուեց հազուազիւտ կամքի ոյժ, տոկունութիւն և քաջութիւն։ Մի շարք մանր կոփուներով այնքան աշխատեցրեց ու յոգնեցրեց պարսիկների մէկը միւսի յետեկից ուղարկած մի քանի բանակները, որ նախապաշարուած պարսիկ զինուորների մէջ համոզմունք ստեղծուեց՝ որպէս թէ Վահան անխոցելի է։ Պարսիկներն ու նրանց հետ միացած հայերի հակառակ կուսակցութիւնը չկարողացան ոչ խոստումներով, ոչ մեքենայութիւններով և ոչ ուժի ահագին առաւելութեամբ բռնել կամ սպանել Վահանին։ Վերջին ծայր ձնշուած հայ ժողովրդի սիրաը նրա հետ էր։ Նա իր փոքրաթիւ անձնուրացների խմբով երկում էր այստեղ, որտեղ չէին սպասում, ան-

յայտացած էր լինում այնտեղից, որտեղ յոյս
էին ունենում բռնել:

Միւս կողմից Վահան պատգամաւորների
բերանով պարսիկ կառավարութեան երեսովն
էր տալիս, որ այս մեծ աշխարհում չկայ մէկը,
որ իր լաւութեան համար լինի պատիւ ստա-
ցած, որ պատուի են արժանացել զանազան
աւազակներ, անպիտաններ, հայկատակներ, ան-
պատիւ տոհմից սերուածներ, որոնք պարսիկ-
ների մօտ կրակին են երկրպագում, նրանց յե-
տեին նրա մէջ թքում. այնպիսի մարդիկ են
իշխանական բարձի արժանացել, որոնք լի են
ամեն մի աղտեղութեամբ, գերեզմաններ կո-
ղոպտող են, գողեր ու փախստականներ են,
խաբերաներ ու գաղտագողի շըջողներ են:

Մինչ պարսիկները Հայաստանի ապստամ-
բութիւնը ճնշելու վրայ էին, նոր պատերազմ
գրգռուեց հեփթաղների դէմ: Պերող ցանկացաւ
իր վրէժն առնել. սակայն ճակատամարտն աղե-
տաբեր եղաւ պարսիկների համար. նրանց մեծ
մասը ջարդուեց և Պերող սպանուեց: Այդ խայ-
տառակ պարտութեան լուրը մեծ յուզում ա-
ռաջ բերաւ Պարսկաստանում. Ժողովուրդն ապշտա-
մբուեց և Պերողի սերունդը ջնջեցին: Եր-
կիրը երկարատև պատերազմներից հիւծուել աղ-
քատացել էր. Վրաստան ապստամբուած, Հայ-
աստան բոլորովին աւերուած ու անջատուած,

երկրի ոյժը ջարդուած, ժողովուրդը տուրքերի
տակ ճնշուած. Նա երկարատև խաղաղութեան
էր կարօտ. այդպիսի խաղաղութիւն Պերողի
որդկերանցից չէին սպասում. նրա եղբօր Վա-
ղարշին ընտրեցին թագաւոր, որ մի խաղաղասէր
մարդ էր:

Վահան ազատ էր Հայաստանում և դիտում
էր Պարսկաստանում տեղի ունեցող յեղաշրջումը:

Վաղարշի առաջին գործն եղաւ դադարե-
ցնել բոլոր պատերազմական գործողութիւնները.
Նա իր մի պաշտօնեայի ձեռքով Վահանին հնա-
զանդութեան հրաւիրեց: Վահան իր նիզակա-
կիցներից ժողով գումարեց և հետեւալ պահանջ-
ներն առաջադրեց.

ա) Քրիստոնէութիւնն ազատ կրօն ճանա-
չուի Հայաստանում. կրակապաշտութիւնն ըն-
դունելու պայմանով ոչ ոք պատիւ չստանայ:

բ) Խւրաքանչիւր մարդ ըստ արժանւոյն
պիտի վարձատրուի. լաւին պիտի պատուել,
իսկ վատին արհամարհել. խելացի մարդկանց
պիտի լսել և անմիտներին հրապարակից քշել:

գ) Արեաց տէրն ինքը պիտի քննէ իւրա-
քանչիւրի արածը և լաւն ու վատն իմանայ. Նա
ուրիշների ասածներով չպիտի շարժուի. եթէ
երկրում արդարութիւնը տիրապետէ, հպատակ-
ներն էլ կ'աշխատեն օգտակար լինել:

Պարսիկների կողմից այս պայմաններն ըն-

դունուելուց յետոյ՝ Վահան հրատիրուեցաւ դուռը.
Վաղարշ զբով ու կնքով հաստատեց այդ բոլորը.
ապստամբութիւնը մոռացութեան տալով՝ ընդ-
հանուր ներումն չնորհեց և ապստամբութեանը
մասնակցած նախարարներին հաստատեց իրանց
հայրենական իրաւունքների մէջ։

Մեծ ոգեսրութիւն էր տիրում հոգեսրական
կուսակցութեան շարքերում։ Նրանց յաղթու-
թիւնը կատարեալ եղաւ մանաւանդ, երբ կարճ
ժամանակից յետոյ ստացուեց Վաղարշի երկ-
րորդ հրովարտակը, որով Վահան Հայաստանի
մարզպան էր կարգւում։ Այդպիսով երկարա-
տև պայքարից յետոյ Հայաստանի ինքնավար
դրութիւնը կրկին վերականգնեց 485 թ. և
քրիստոնէութիւնն ազատուեցաւ հալածանք-
ներից։

Դ.

Իմբնավար Հայաստան

Յունական բաժնի Հայաստանը և նրա կեանքի
պայմանները. Ներքին ինքնավարութիւնն խախտումն.
Հին տնտեսական կարգերի քայլայումն և նրա հե-
տևանքները. Կրօնական ատելութիւն. Պարսկական
Հայաստան. Հայ մարզպաններ. Տարօնի պատերազմ-
ները և պարսկական իշխանութեան վախճանը։

Արևմտեան Հայաստանը 384 թուին վերջ-
նականապէս միացաւ Հռովմէական կայսրու-
թեանը։ Հռովմայեցիք ունէին երեք տեսակ
հպատակներ. հայերն այն հպատակներից էին,
որոնք ներկայանում էին իբրև դաշնակիցներ.
Նրանք պահպանում էին իրանց ներքին ինքնա-
վարութիւնը. նոյն նախարարական կազմը,
նոյն արտօնութիւնները, ինչ որ ունէին մինչև
նրանց իշխանութեան տակ մտնելը. հայերն ա-
զատ էին մինչև իսկ հարկատուութիւնից. ընդու-
նուած սովորութեան համաձայն՝ իւրաքանչիւր
նոր կայսեր գահակալութեան առթիւ նրանք
ընծայաբերում էին ոսկէ թագ. դրանով էր ար-
տայայտում նրանց հպատակութիւնը. դատաս-
տանական իշխանութեան վրայ հսկելու համար

միայն նշանակում էր կոմս։ Տեղական դատարանից դժգոհ լինելու դեպքում նայերն իրաւունք ունեին վճռաբեկ բողոք ներկայացնելու դաշտի կայսեր։ այդ արտօնութիւնից զուրկ էին մնացած հպատակները։

Կայսրներն աշխատում էին ոչ միայն սիրաշահել իրանց բաժնի հայ նախարարներին, այլև շոյելով նրանց ինքնասիրութիւնը՝ գրաւել Պարսկական բաժնի նախարարներին։ նրանք ուղարկում էին հայ նախարարներին ոսկէ կոճակներով քղամիդ, իրաւունք էին տալիս կարմիր կօշիկ և այլ պատուանշաններ կրելու։ այդ պատիւները վերապահուած էին թագաւորներին։ Հայ նախարարները յաճախ տիտղոսներ էին ընդունում յունաց կայսրից, որոնք կապուած էին ոսոձկի հետ։ դրանք բոլորն էլ գրաւիչ էին հողային տնտեսութեամբ ապրող հայ նախարարների համար։ այդ է պատճառը, որ պարսկական բաժնից յաճախ նախարարներն անցնում էին յունական բաժինը։

Յունական բաժնի հայերի այդ արտօնեալ և ինքնավար դրութիւնը շարունակուեց՝ քանի արեւելքում գոյութիւն ուներ Յունաստանի սիփական նահանգներին սպառնացող Սասանեանների ոյժը։

Սակայն հայերի այդ արտօնեալ դրութիւնը միանգամայն փոխուեց Յուստինիանոս Ա-ի գա-

հակալութիւնից սկսած (518թ.): Նոր կայսրը ցանկացաւ մի միապաղաղ ուժեղ միապետական կառավարութիւն ստեղծել դրա համար նա մի շարք օրէնքներով վերացրեց հայերի ինքնավար դրութիւնը։ Նախ մի շարք բերդերով ամրացրեց կայսրութեան արևելեան սահմանները պարսիկների ներս խուժումից, ապա արձակեց նախարարական գնդերը և հոռվմայեցի գորապետների հակողութեան տակ սահմաննեց հայկական նոր գնդեր, որոնք վարժեցնւում էին ընդհանուր կանոններով։ հայերը պարտաւոր էին տարեկան 400 ֆունտ ոսկի վճարել, որ հաւասար էր 200000 ոռուրլու։ հիմնուեցին հոռվմէական դատարաններ իրանց օրէնսդրութեամբ, նախարարները զրկուեցին իրանց վայելած իրաւունքներից։ Հայերը բողոքեցին այդ դրութեան դէմ և արիւնահեղ ընդհարում տեղի ունեցաւ, սակայն շուտով կարգ ու կանոնը վերականգնեց։ նոր միացած հայկական դաւառները բաժանեցին չորս զինուորական շըջանների (թեմերի), որոնք կոչւում էին Ա. Բ. Գ. և Դ. Հայք։ Ամեն մի շըջան կառավարւում էր կայսրից նշանակուած զինուորական նահանգապետի ձեռքով, որին ենթարկւում էին և դատապետի ձեռքով, որին ենթարկւում էին և դատապետանական հիմնարկութիւնները։

Հայկական նախարարական կազմը տիրող էին զինուորական կարգերի ծնունդ էր. զի-

նուռական մասը նրանցից խլելով՝ այդ կազմին առաջին հարուածը հասաւ։ Որովհետեւ զօրքի առաջնորդ միայն տղամարդը կարող էր լինել, դրա համար էլ նախարարական կալուածների ժառանգ միայն տղաներն էին համարւում։ Յուստինիանոս մի օրէնքով ջնջեց «այդ բարբարոս սովորութիւնը» և քոյրելին էլ իրաւունք տուաւ եղբայրների հետ հաւասար բաժին ստանալու։ Այս օրէնքը միանգամայն քայլայեց նախարարների հին տնտեսական կացութիւնը։ Նախարարներին մնում էր միայն կայսրութիւնից նշանակուած ոռձկով փոխադրուել Բիւզանդիա և այստեղի արիստոկրատ դասակարգի հետ մասնակցել մայրաքաղաքի շոայլ կեանքին։ Շուտով այդ կեանքն այնքան գորաւիչ դարձաւ, որ ամեն մէկն էլ ցանկանում էր մայրաքաղաքում լինել։ Հայ ազնուականները մեծ թուով փոխադրուեցին Բիւզանդիա, մտան տէրութիւնան ծառայութեան, շինեցին իրանց սեպհական տները և զանազան ասպարէզներում նշանաւոր դարձան։ Այսպիսով յունական բաժնի հայերի տընտեսական և քաղաքական կեանքում մեծամեծ փոփոխութիւններ տեղի ունեցան։ Տնտեսական այդ յեղաշրջման հետևանքն էր, որ հայերը մեծամեծ խմբերով թողեցին իրանց հայրենիքը և կամովին ցըռուեցին Փոքր Ասիայի արևմտեան կողմերում ու Կիլիկիայում։ Այդ դադիւական-

ները նուիրուեցին իրանց նոր հայրենիքի բարգաւաճմանը և շատ օգտակար եղան։ այդ է պատճառը, որ կայսրներն իրանք էլ մի կողմից էին աշակցում այդ բանին։

Սակայն զրանով առևեց հայերի հայրենիքը, և այդ բանն ամենից լաւ ըմբռնում էին մայրաքաղաքում խմբուած հայ ազնուականները։ Երկու Արշակունիներ՝ Արշակ և Արտաւանդաւագրութիւն կազմեցին Յաստինիանոսի կեանդիմ, բայց չյաջողուեց։ Այնուհետեւ յոյները նայում էին հայերին իբրև նուաճուած հպատակների վրայ և ամենալայն չափով հարստահարում նրանց՝ թէ հարկերի ծանրութեամբ և թէ զինուորական ծառայութեամբ։ Հայերի դրութիւնը ծանր էր։

Նրանց ծանր կացութեանը նպաստում էր և այն կրօնական ատելութիւնը, որ սկիզբն առաւ Երդ գարուց։ 451 թ. Քաղկեդոնում տեղի ունեցաւ մի եկեղեցական ժողով, որին չըմասնակցեցին հայերը, որովհետեւ զբաղուած էին կրօնական պատերազմով։ Այդ ժողովում մի շարք կրօնական հարցերի հետ քննուեց և եկեղեցիների գերիշխանութեան խնդիրը, որի պատճառով պատակտումն առաջացաւ Հռովմի և Բիւզանդիայի եկեղեցիների մէջ։ հայոց եկեղեցին ոչ մէկին էլ չենթարկուեցաւ և դրա համար հալածանքներ կրեց թէ մէկից և թէ միւ-

սից։ Կրօնական հալածանքները շատ սուր կերպարանք ստացան և աղետաբեր եղան մասնաւրապէս հայերի համար։ Տիրող ծանր պայմաններից դժգոհ շատ նախարարներ անցան պարսից բաժնի Հայաստանը։

Միւս կողմից յունական բաժնի հայերը մօտիկ շփուելով աւելի կրթուած միջավայրի հետ՝ ազդուեցին նրանց գիտութիւններից։ Հայ լեզուն և գրականութիւնը յունականի ազդեցութեան տակ զարգացան. արևմտեան և արևելեան հոգեորականութեան մէջ սկսուեց մի պայքար, որն իր օգտակար կողմերն ունեցաւ։

485 թուից սկսած՝ արևելեան Հայաստանը (Պարսկահայաստանը) կառավարում էր հայ մարզպանների ձեռքով։ Նախարարական կազմը և ժողովրդական անտեսական զարգացումը մնացին էին։ Նրանք ստացան կրօնական ազատութիւն, և պարսից իշխանութիւնն այնուհետեւ ապահովուեց, որ հայերը որևէ քաղաքական ձգտումն չունին։ Հայ ժողովուրդը շնորհիւ նախարարների և հոգեորական գասի՛ բաւական մնաց իր դրութիւնից. նախարարներն 'ի նկատի առնելով իրանց արևմտեան ազգակիցների դրութիւնը՝ դժգոհութեան նշան չէին ցոյց տալիս. հոգեորականութիւնն օգտուելով իր դրութիւնից՝ եկեղեցու մէջ ձուլեց ժողովրդի ցանկութիւններն ու ձգտումները և կրօնական գոյն տու-

աւ։ Այնուհետեւ ժողովրդի աչքում միակ գլխաւոր դեր խաղացողը դարձաւ հայ հոգեորականութիւնը։ Այդ բանին շատ նպաստեց այն կըրօնական կրթութիւնը, որի սկիզբը դրուեց երդ դարում տառերի գիւտից յետոյ։ Գրականութիւնն մշակողներն ու նրա ներկայացուցիչները հոգեորականներն էին. ժողովրդին մտաւոր ու հոգեոր կրթութիւն տուողները նրանք էին, և հայերի կրթական գործը միակողմանի՝ կրօնական ուղղութիւն ստացաւ։ Այնուհետեւ օտար իշխաններն ու հարևան ժողովուրդները հայերին համարում էին մի կրօնական համայնք։ Հայը մինչև այսօր էլ տիրող պետութեան կողմից համարում է կրօնական համայնք։ Հայ եկեղեցին շնորհիւ իր ստանձնած գերի՛ ազգային բնոյթ ստացաւ՝ հակառակ նախնական եկեղեցու տիպին։ Շատ անգամ հայերի քաղաքական խնդիրները վճռում էին հայ հոգեորականների ժողովներում կամ հայ կաթողիկոսների ձեռքով։ Նախարարներն ընտելացել էին այդ կարգերին, որովհետեւ, եթէ հայ եկեղեցականութիւնը դէմ էր անկախ քաղաքական իշխանութեան, նա դէմ չէր նախարարական կազմին. Եկեղեցու կառավարութիւնն եւս նոյն ձեւն ունէր։

Արևելեան Հայաստանի այդ ինքնավար դրութիւնը շարունակուեց մինչև երդ դարը.

երկու անգամ միայն խաղաղութիւնը վրդովուշեց, երբ պարսիկները ցանկացան տիրող դրութիւնը խախտել: Առաջին անգամ, երբ պարսիկները փորձեցին պարսիկ մարզպան նշանակել և Դուխնում ատրուշան կանգնեցնել, հայերըն ապստամբուեցին, որի շնորհիւ յունապարսկական պատերազմ դրդուեց և հայերը կրկին ստացան իրանց արտօնութիւնը. երկրորդ անգամ պարսիկ իշխանութեան և Տարօնի Մամիկոնեանների մէջ ծագեց մեծ պատերազմ, երբ պարսիկները յաղթահարուած յետ քաշուեցին: Պարսիկներն ընդմիշտ հրաժարուեցին իրանց ծրագրից Հայաստանի նկատմամբ. այդ փորձերն ապացուցին, որ ինքնավար խաղաղ դրութիւնն ՚ի զուր չէր անցել: Հայ մարզպանների իշխանութիւնը վերականգնեց:

Պարսից իշխանութիւնն իր օրհասին էր մօտեցել. մի ուժեղ հարուած էր հարկաւոր, որպէսզի նա ընդմիշտ անյայտանար ասպարէզից: Այդ հարուածը հասցըին արաբները:

Տարօն Մամիկոնեան տոհմի սեպհականութիւնն էր. նա բաժանում է երկու մասի. դաշտային՝ մի վերին աստիճանի պատղաւէտ և հացառատ երկիր, որ դիո հին գարում նկարագրել է Քսենոֆոն, և լեռնային, որ կոչում է Սասուն:

Սասունի մասին հետեալն է պատմւում.

Այդ լեռան բնակիչները ծանր աշխատանքով և սաստիկ չարչարանքով են ապրուստ և այլ կարևոր

պէտքեր հոգում. Նրանք ապրում են լեռների խորածորերում և վապարներում, մայրիների պուրակներում և լեռների գաղաթներին: Նրանք ապրում են առանձին-առանձին տոհմերով. այնքան իրարից հեռու են, որ եթէ մի ուժեղ մարդ բարձր կանչէ, հազիւ թէ մէկը կարողանայ նրա ձայնի բումբիւնը հասկանալ որովհետև կըկարծէ թէ ժառերի արձագանդ է: Նրանց մի մասն իրենց բուն հայրենի լեզուից շեղուած է, որովհետև իրարից հեռու են ապրում. միմեանց թշնամաբար են հանդիպում. իրար հետ խօսում են այսուղից այնաեղից մուրացած և կարկատած բառերով: Նրանք այնքան խրթին և միմեանց անհասկանալի բարբառներ ունին, որ շատ անգամ թարգմանչի կարեք են զգում: Նրանք կերակրում են մի տեսակ սերմով առաւել կորեկ կոչուած սերմով, որը ոմանք սով ժամանակ հաց են անուանում: Միևնոյն սերմը անտառակների մէջ ցանում են՝ երկերանանի քրոնկով գեախնը փորերով: Նրանք մերկ մարմնի վրայ հազնում են ըրգէ հագուստ. ոտնամանները (արեխները) քարքարոս տեղերին յարմար են: Նրանք այծի կաշուց են պատրաստուած: Ամառ և ձմեռ միևնոյն կերակրով և միևնոյն հագուստով են բաւականանում. միշտ աէդ (աշտէ) են կրում իրանց վրայ՝ լեռներում գաղաններից պաշտպանուելու համար:

Երբ թշնամիները՝ յարձակւում են նրանց երկրի վրայ, լեռնականները գալիս միաբանում են՝ իրանց իշխաններին օգնելու, որովհետև տիրասէր են: Իսկ երբ ամպերից բաւականին ծիւն է տեղում, սահուն լինելու պատճառով փայտեայ օղակներ են անցկացնում ոտներին և չուաններով կապում. այն ժամանակ հեշտութեամբ են քայլում՝ ինչպէս ցամաք երկրի վրայ: Նրանք գաղանաբարոյ և արիւնաբարու մարդիկ

են, մինչև անգամ հարազատ եղբայրներին և իրանց սպանելը ոչինչ բան են համարում: Սրանք կոչւում են աղաս (ինքնազլուխ) զինուած սուրհանդակներ, որոնք բնակւում են լեռների վրայ: Այդ լեռները Աղձնիքն ու Տարօնը իրարից բաժանում են: Դժուարհանկանալի և դժուարըմբոնելի լեզուի ու բարքերի պատճառով էլ խութ են կոչւում, որից սարն էլ Խոյթ անունն է ստացել: Նրանք զիտեն հայոց հին վարդապետների թարգմանած սաղմոսը, որ միշտ բերան ասում են: Սրանք այն գունիիներն են (հասարակ մարդիկ), որոնք եկել են Ադրամելիք և Սանասար արքայորդիների հետ: Աղբամելիքն ու Սանասարն Ասուրիստանի և Նինուէի թափաւոր Ահնեքերիմի որդիքն էին: Նրանց անունովն էլ այդտեղի բնակիչներն անուանում են իրանց Սանասանեայք, նրանք հիւրասէր, օտարներ հիւրընկալող և յարգանք իմացող մարդիկ են:

Սրանք էին Տարօնի լեռնականները, որոնց վրայ իշխում էին Մամիկոնեանները:

Էրդ գարում Բիւղանդիայում և Տիսբոնում թագաւորող տների համար ճգնաժամ էր սկսուել: Թագաւորների շուրջը շարունակ տեղի ունեցող դաւադրութիւնները նրանց անհաստատ էին դարձրել զահի վրայ: Նախկին թշնամի երկու հզօր՝ այժմ բաղդակից հարևանները բարեկամացել էին, որպէսզի կարողանան զահի վրայ մնալ: Երբ պարսից Խոսրով թագաւորը մեծ զօրքով զնում էր յունաց Մօրիկ կայսեր օգնութեան, որ զահընկեց էր եղել իր զօրապետի ձեռքով, կարգադրեց, որ Տարօնի իշխան Մուշեղ Մամիկոննեանն էլ գնայ իրեն օգնելու. Մուշեղ չցանկանալով յոյների զայրոյթը զրդուել մերժեց զնար որը և առիթ տուեց մի երկարատե պատերազմի. Տարօնն

անընդհատ տասներկու տարի պատերազմի ասպարէզ էր գարձել: Այդ պատերազմներում իր քաջութիւններով և հնարագիտութեամբ մեծ հոչակ ստացաւ Մուշեղի ազգական Վահան Մամիկոնեան, որ Գայլ էր կոչւում, և իր որդի Սմբատ: Պարսիկները չկարողացան ընկճել նրանց և յետ քաշուեցին մեծամեծ կորուստներ տալով:

Արաբներ եւ Մահմեդականութիւն.

Պարսից ծոցի և կարմիր ծովի մէջ ընկած է մի թերակղզի, որ շատ հնուց կոչւում էր Արաբիա: Երկրի մեծ մասը ծածկուած է աւազով. տեղ-տեղ միայն երևում են օազիմներ: Թերակղզու մի մասը մտնում է պարբերական անձրեների շրջանը, բուսականութիւնն այստեղ ճոխ է և կոչւում է Երջանիկ Արաբիա. այդ-տեղից ստացւում են զանազան համեմներ և անուշահութիւններ: Իսկ հարաւային մասը կոչւում է Գագրամանտ (Մեռելութեան երկիր): Արաբիայում ապրում են փոքր թուով նստակեաց, իսկ մեծ մասամբ թափառական ցեղեր, որոնք կոչւում են բեղաւներ՝ բեղուիններ (անապատի որդիք): Նրանք սեմական սերընդին են պատկանում:

Արաբները սակաւապետ, եռանդու և ընդունակ մարդիկ էին: Նրանք բաժանուում էին մանը ցեղերի. ցեղերի զլխաւորները շեյխներ կամ էմիրներ էին կոչւում: Նրանք առանց ծերերի ոչինչ չէին անուում: Ցեղերը հաշտ չէին իրար հետ. մարդկանց կեանքն ու գոյքն ապահով չէր, զարգացած էր արեան վրիժառութիւնը. անձեւնմիելի էր համարւում միայն հիւրը: Արաբացին չպէտք է տանէր մինչև անգամ ամենաշնչին վիրաւորանքը. իւրաքանչիւր ընտանիք, տոհմ, ցեղ վրէժխնդիր էր լինում իր սպանուած անդամների

համար՝ մինչև որ հակառակորդ կողմից էլ նոյն թուով զոհեր էին ընկնում:

Այդպիսի անհամաձայնութիւններից օգտուեցին պարսիկներն ու բիւզանդացիք. Զ-րդ դարում արաբները կորցրին իրանց անկախութիւնը. արեելահիւսիսյին մասին տիրեցին Սասանիանները, իսկ հիւսիսարևմտեան մասին՝ բիւզանդացիք:

Արաբները պաշտում էին երկնային մարմինները, որոնք ծնունդ են առնում մի գերազոյն ուժից: Մարդկանց բաղդը կախուած է աստղերից և ողիներից՝ ջիներից: Ազգային վաղեմի սրբարանն էր Քաարը (Քեար)՝ Մէքքայում: Սրբարանին հակում էին Խորէյշիոների ցեղը: Այդ ցեղը առանձին արտօնութիւն էր վայելում արաբների մէջ. նրա անդամներն անձեռնմխելի էին. այդ հանգամանքը նպաստեց նրանց մէջ վաճառականութեան զարգանալուն: Այդ ցեղի վաճառականների շնորհիւ թէ մովսիսականութիւնը և թէ քրիստոնէութեան ուսմունքը մտաւ Արաբիա: Միասսուածութեան զաղափարը կամաց-կամաց մուաք գործեց արաբների մէջ:

Հստ աւանդութեան 571 թ. խորէյշիոների ընտանիքում ծնուեց մի մանուկ, որ պէտք է յետոյ դառնար մահմեղականութեան և արաբական միացեալ պետութեան հիմնադիրը. դա Մահմէդն էր (աւելի ձիշտ՝ Մուհամէդ՝ թանկարժէք): Նրա պապը նշանաւոր հոգևորական էր, իսկ հայրը՝ աննշան վաճառական: Նա ծնուեց հօք մահուանից յետոյ: Հօրեղբայրն էր հովանաւորում: Մահմէդը հէնց փոքրուց հօրեղբօր հետ վաճառականական գործերով ճանապարհորդում էր զանազան երկիրներ, մանաւանդ Հրէաստան և Ասորիք: Նա ամուսնացաւ մի հարուստ այրի կնոջ հետ և հաստատուեց Մէքքայում:

Արաբների անհամաձայնութեան գլխաւոր պատճառ նա համարում էր նրանց տնտեսական կացութիւնը. ուստի ողորմածութեան գաղափարը քարոզելով ցանկացաւ տնտեսական միատեսակ կացութիւն ստեղծել և հակառակութիւններին վերջ տալ: Նա հարուստներին քարոզում էր, որ աղքատներին բաժին հանեն իրենց ունեցածից, որով նրանք կըթեթեանային իշրանց մեղքերից և տեղ կըպատրաստէին արքայութեան մէջ: Այսուհետեւ Մահմէդի իր գաղափարներն աւելի լաւ մշակելու համար քաշուեց անապատ. երբ վերադարձաւ, սկսեց քարոզել. «Աստուած մէկ է և Մահմէդը նրա մարգարէն է»: Նա իր Աստուծոյ գաղափարը փոխ առաւ հրէական և քրիստոնէական կըրօններից:

Սկզբում Մահմէդին շատ քչերն էին հաւատում: Նա իր քարոզութիւններն աստուածային պատգամների (սուրա) նման էր յայտնում, որոնք յետոյ ժողովեցին մի զրքի մէջ: Այդ գիրքը կոչում է Ղուրան:

Մահմեդականութիւնը կերպարանափոխուած հրէութիւնն է, աւելի կոպացրած և յարմարեցրած արաբների (աւազակաբարոյ խաջնարած ժողովուրդ) ըմբռնողութեանը: Մահմէդը փոխ առաւ հրէաներից միաստուածութեան գաղափարը (Ալլահ), որ անտեսանելի կերպով կառափարում է ամբողջ տիեզերքը: Նրա մարգարէններն են եղել Աբրահամ, Մովսէս և Քրիստոս: Ամեն բան Աստուծուց է կախուած, ոչ մի բան առանց նրան չէ կատարում: Այդ հաւատը արաբներին ներշնչում էր քաջութիւն և դամար-ի հասկացողութիւնը: Այդ ուսմունքը կոչուեց իալամ (հպատակութիւն). նրան հետևողները կոչուեցին մուլեմներ՝ մուսուլմաններ (Աստուծոյ հպատակներ): Հաւատացեաները պարտաւոր էին իրանց ուսմունքը տարա-

ծել. նրանք պէտք է օրական հինգ անգամ լուսացուեն, աղօթք արտասանեն, ուրբաթ օրուայ ասօթքն ամենաւընդունելին է: Արգելում է ոգելից խմիչքներ, խողի և շան միս ուտելը. բամազանի ժամանակ ամենքը պարտաւոր են ծոմ պահել մինչև արեի մայր մտնելը: Իւրաքանչիւր հաւատացեալ իր կեանքի ընթացքում գոնէ մի անգամ պարտաւոր է ուխտի գնալ Մեքքա: Այս պատուէրները կատարողը մահուանից յետոյ կըգնայ արքայութիւն, այնտեղ ծաղկափթիթ ծառերի տակ, բուրմունքներով տոգորուած օգում կ'ապրէ նա՝ մետաքսէ զգեստների մէջ. Նա իր սպասին պատրաստ կ'ունենայ սեաչեայ հիւրիներ, որոնք կըմատուցանեն նրան օշարակ և պտուղներ:

Ղուրանը ոչ միայն կրօնական գիրք գարձաւ, այլև նրա մէջ նշանակուեցին առօրեայ կեանքի կանոններ և օրէնքներ. այսպէս օրինակ՝ այնտեղ կան դասավարութեան, ամուսնութեան, ժառանգութեան և այլ օրէնքներ:

Մահմէդ քառասուն տարեկան էր, երբ սկսեց քարոզել. սկզբում նրան բացի իր կնոջից և հօրեղբօրից՝ ոչ ոք չէր հետեւում, և նրանց մահուանից յետոյ նրան սկսեցին հալածել: Նա աստանդական կեանք էր վարում, մերթ փախչում էր մէկ, մերթ միւս քաղաքը. միաժամանակ նա քարոզում էր: Երբ բաւական մեծացաւ իր հետեւողների թիւը, այն ժամանակ հակառակորդների դէմ նա ուղղակի գէնքի դիմեց. ասացին յաղթութիւնը և աւարն իր հետեւողներին բաժանեն իր կողմը զրաւեց արաբների մեծ մասը և մի քանի արիւնահեղ պատերազմներից յետոյ ամբողջ Արաբիան ընդունեց նրա ուսմունքը: Եւ նա այդ թշնամի ցեղերից կաղմակերպեց մի կրօնազինուորական միացեալ պետութիւն: Նա մեռաւ 632 թուին:

Մահմեդի յաջորդները կոչւում էին խալիֆներ. խալիֆը ներկայանում էր և հոգեոր և քաղաքական պետ հաւատացեալների: Տիրապետած երկիրները համարւում էին ընդհանուրի սեպհականութիւն. զինուորականներն իրաւունք չունէին նուաճած երկիրներում կալուածներ ունենալ. ընդհանուրի հայրենիքը Արաբիան էր, զօրքը ոգեորուած էր ընդհանուր հայրենիքի փառքով: Զենիի ուժով իրանց կրօնը տարածելլ եւ պատրազմից սացած աւարն աւազակաբարոյ արարների մէջ զարբեցրեց երկիրներ սիրելու ձգուում: Երդ գարու սկզբներից նրանք ընկան աշխարհակալութեան յետեցից: Առաջին յաջորդութիւնները ոգեորեցին նրանց: Աշխարհակալական ամենամեծ արշաւանքները տեղի ունեցան Օմար խալիֆի օրով (634—644). նա նուաճեց 36000 քաղաք և աւաճ, կործանեց 4000 տաճար և շինեց 1400 մզկիթ: Սասանիանների և Բիւզանդիայի անընդհատ մրցումը և Հոռմէտական կայսրութեան մէջ տեղի ունեցող ներքին կրօնական երկպառակութիւնները յաջողեցին արաբների գործը. Յաղկերտ Գ. սոսկալի ջարդ կրեց երեք անգամ: Տիզրոն մայրաքաղաքը կործանուեց. արքայից արքայի անհամար հարստութիւնն ընկաւ արաբների ձեռքը և Պարսկաստանը դարձաւ Արաբիայի մի նահանգը (642): Արևմտեան կողմից արաբները հասան Եգիպտոս, ապա Աֆրիկայի հիւսիսային կողմով Սպանիա, արևելեան կողմից հասան Թուրքեստանի վրայով Բուխարա, իսկ հիւսիսում նրանց իշխանութիւնը տարածւում էր մինչև Կովկասեան լեռները:

Այդպիսի լայնածաւալ պետութիւնը կառավարելու համար խալիֆն իր երկիրը բաժանեց մասերի և ամեն տեղ նշանակեց փոխարքաներ՝ ամիրաներ. սրանց մէջ կային աստիճանով մեծերը և փոքրերը:

Փոխարքաններն անկախ խալիֆից կառավարում էին իրենց երկիրը: Երբեմն այդ անկախութիւնը նրանք ՚ի յարն էին զործադրում.

Հպատակների երկիրը պատկանում էր պետութեանը. սակայն բնակիչները մնում էին իրանց բնակած վայրերում. դրա փոխարքն նրանք բացի հողային տուրքից և գլխանարկից վճարում էին և բերքերից մաս: Հարկատութիւնը կանոնաւոր սահմանների մէջ չէր. մի քանի տեղերի նկատմամբ շարունակ աւելացնում էին, իսկ այլ տեղերում նոյն քանակն էր մնում: Բացի այդ տուրքերից՝ արքունի գանձարանի՝ ղիւանի եկամուտներն էին կազմում և հանքերի ու արօտների հնգանորդը, ապրանքների մաքսը, այլև պետական կալուածների եկամուտները: Մնձախանակ տուրքերն ու եկամուտներն սկսեցին ամեն կողմից բախուել պետական ղիւանը: Հպատակների ներքին կեանքի մէջ նրանք չէին խառնուում. ոչ մահմեդական ժողովուրդների մէջ դատաւորները նրանց հոգեոր պետերն էին, մինչեւ անգամ աշխարհական խնդիրներ քննելիս. Արաբական սիրապետուրեան շրջանում հպատակ ազգերի հոգեւորականները մեծ հշանակութիւն սացան: Այդպիսի ներքին ազատութեան հետ միասին արաբները մի քանի ազգերի արգելեցին զինի կրել:

Այդքան երկիրներից ստացած մեծաքանակ տուրքերը և կուլտուրապէս աւելի զարգացած ազգերի հետ շփուելն ապարդիւն չանցաւ արաբների համար. նրանք շնորհիւ իրանց բնածին ընդունակութեան շատ լաւ բաներ փոխ առին օտարներից և զարգացրին ու տարածեցին իրանց հպատակների մէջ:

Պետութեան ընդարձակման հետ հեշտ կառավարելու համար հարկ եղաւ զանազան հիմնարկութիւններ ստեղծել. դրանք էին. հարկերի բաշխման ատեան

(Ելեմտից նախարարութիւն), խալիքի անձնական դիւնատունը, ուր խմբագրուում էին նրա հրովարտակներն ու հրամանները. պետական օրէնքները տարածող վարչութիւն, հարկերի ատեան, վերաստուգիչ ատեան. վարձկան զօրքի վարչութիւն (զինուորական նախարարութիւն). պոստային վարչութիւն, արդարադատութեան վարչութիւն և այլն:

Ազգբում զօրքը կազմուած էր բացառապէս արաբներից, և զինուորականները ժառանգական դասակարգ էին կազմում. բայց քանի պետութիւնը մեծանուում էր, հարկ էր լինում զօրքի թիւն աւելացնել, և այնուհետև գնում էին ստրուկներ և մահմեղականացնել աւելացնում զօրքի թիւը, կամ ընդունում էին կամաւորներ: Այդպիսով նրանց զօրքը մեծամեծ չափերի հասաւ:

Զանազան երկիրներից նրանք ընդօրինակեցին գեղեցիկ շինութիւնների ձևեր և յարմարեցնելով իրանց ճաշակին ու դուրանի ցուցմունքներին՝ զարգացրին ճարտարապետութիւնը և գեղազարդուած շէնչքերով զարդարեցին իրանց մայրաքաղաքները: Նրանք ճարտարապետութեան մէջ մտցրին իրանց ոճը, որ կոչում է արաբական, նրա մէջ նկատում է Սասանեանների, հնդկաց և բիւզանդական ոճերի ազդեցութիւնը: Պատկերագրութիւնը, որ իրանց կրօնին գէմ էր, չգործածուեց. դրա փոխարէն զարգացրին ծաղկաքանդակները և զարդանկարները:

Պարսկաստանում զարկ տուին երկրագործութեանը՝ անցկացնելով մի շարք ջրանցքներ և ճանապարհներ:

Առևտրի զարգացմանը նպաստեց և պոստային հաղորդակցութիւնը, որից միայն պետութիւնը չէր օգտում. վոստատարներն էին արագընթաց հետիոտ

կամ ձիաւոր սուլհամագակներ. ամեն մի փոխարքայութիւն իր փոստն ունէր:

Արհեստների զարգացմանը նպաստեցին արհեստական միութիւնները՝ համքեարութիւնները: Միքանի արհեստներ իրանց ծաղկման զարգաթնակէտին հասան: Զինական օրինակով նրանք սկսեցին բամբակից և վուշից թուղթ պատրաստել, պատրաստում էին նուրբ աղալիէ անօթներ, սրեր և այլն:

Մի քանի օգտակար բոյսեր տարածեցին Եւրոպայում. բրինձ, բամբակ, թթենի և պապիրուս:

Շնորհիւ այն հանգամանքի, որ Ասիայի մեծ մասը մի կրօն (մահմեղական) և մի լեզու (արաբական) ունէր, այդ բոյսը արդիւնքներից յետոյ յարմար միջավայր ստեղծուեց վաճառականութեան համար. վաճառականութիւնը մեծ մասամբ կենտրոնացած էր արաբների ձեռքում և Բաղդադ մայրաքաղաքը ամենամեծ շուկաներից մէկն էր:

Արաբներն առանձին ուշը զարձրին ուսման և գիտութիւնների վրայ. յունական և ասորական լեզուներից շատ զբքեր թարգմանուեցին. զարգացաւ աստղաբաշխութիւնը, իրաւաբանութիւնը, բանաստեղծութիւնն ու պատմազրութիւնը, աշխարհազրութիւնն ու ազգագրութիւնը, մաթեմաթիկան՝ մասնաւորապէս հանրահաշիւը (ալգեբրան), բնախօսութիւնը (քիմիան). հիմնուեցին զրադարաններ. ընդօրինակւում էին ձեռագիրներ և տարածում: Երեք կարգի գալրոցներ կային, տարրական, միջնակարգ (մեղրեսէ) և ճեմարան: Դուրանը ուսուցման իբրև հիմք էր ընդունուած:

Հպատակ ազգերը, ինչպէս և քրիստոնեաներն ու հրէաները, նրանց ազգեցութեան տակ էին, և արաբա-

կան կուլ'տուրան հետզհետէ մուտք գործեց և նը-
րանց մէջ:

Թ-րդ դարուց սկսած արաբների պետութիւնն
սկսեց կամաց-կամաց դէպի անկումն դիմել. դրան
նպաստեցին մի շարք հանգամանքներ. գահակալու-
թեան շուրջը բարձրացած խռովութիւնները, որոնք
մեծամեծ արիւնհեղութիւնների պատճառ էին դառ-
նում. հպատակ ազգերի ազգային դիտակցութեան
զարթնումն և ծանր հարկերից ստիպուած ապստամ-
բութիւնները. փոխարքաների անկախութիւնը և շա-
րունակ ապստամբութիւնները. կրօնական հերձուած-
ները. Սիւննի և Շիա դաւանութիւնների երեան
գալը. հարստութեան հետևանք շուայլ կեանքը, որ
հետզհետէ մեոցքեց պատերազմական ողին և կո-
րովը. այդ բոլորը նպաստեցին նրանց անկմանը, և
Հ-րդ դարուց սկսած կազմուեցին հետևեալ մահմեդա-
կան պետութիւնները. Բուխարան՝ Թուրքեստանում,
Պարսկաստանը, Թունիսը, Եգիպտոսը և Մաւրիտանիան՝
Աֆրիկայում, Սպանիան՝ Երոպայում, իսկ 945 թուին
վերջացաւ խալիֆների աշխարհական կառավարու-
թիւնը և նրանք միայն կրօնի ներկայացուցիչ էին
մահմեդականների համար:

Ե.

Հայաստանն Արաբական իշխանութեան տակ.

Արաբները Հայաստանում. Յոյների և արաբների
մրցումը Հայաստանի համար. Հայաստան արաբացոյ
իշխանութեան տակ. Հարկաւութիւն. Փողովրդի արն-
տեսական քայլայումը և ապստամբութիւններ. Արա-
բացոյ արշաւանքները և նրանց հետևանքը:

640 թուին արաբներն առաջին անգամ
մտան Հայաստան։ Մինչև Հայաստան հասնելը՝
արդէն նրանց լուրը հասել էր հայերին և հա-
րեան ազգերին։ Վրացիք և հայերը միացած
դուրս եկան նրանց առաջ։ Պատերազմը տեղի
ունեցաւ Տարօնում։ Կռուի միջոցին վրացիք և
մի քանի հայ նախարարներ թողեցին Տիրան
Մամիկոնեանին միայնակ և հեռացան, կամ մի-
ացան արաբների հետ։ Տիրան 3000 կռուղնե-
րի հետ ընկաւ պատերազմի դաշտում և արաբ-
ներն անարգել արշաւեցին դէպի հիւսիսային
Հայաստան։ Կործանեցին Դուին մայրաքաղաքը,
թալանեցին ազգաբնակութիւնը և 35000 գե-
րիներով վերագրածան Արաբիա։

Սասանեանների ոյժն արդէն ոչնչացրուել

էր այդ արշաւանքից առաջ, դրա համար Ասիայի քրիստոնեայ ազգերը, մասնաւորապէս հայերը, որոնք առաջ պարսից գերիշխանութեան տակ էին, առաջիկայ վտանգի առաջն տոնելու համար դիմեցին Բիւզանդիայի կայսրութեանը և նրա հպատակութիւնն ընդունեցին՝ ինքնավար դրութեան մէջ մնալու պայմանով։

Սակայն յոյները բաւականանում էին միայն հայերից տուրք վերցնելով՝ առանց իրական օգնութիւն հասցնելու նրանց. և երբ արաբները կրկին արշաւեցին Հայաստանի վրայ, հայերը հարկադրուած էին նրանց իշխանութեան տակ մտնել. դրան նպաստում էր յոյների կրօնական ատելութիւնը, որ տածում էին դէպի հայերը Քաղկեդոնի ժողովից յետոյ։ Յոյները, փոխանակ նոր տիրողների դէմ դուրս դալու, հայերին էին պատժում՝ նրանց երկիրն աւերելով։

Արաբները տիրելով Հայաստանին ծանր հարկերով սկսեցին ճնշել նրանց. սկզբում նրանք կրօնը (քրիստոնէութիւնը) վաճառեցին հայերին, այսինքն՝ իրանց կրօնն ազատ դաւանելու համար իւրաքանչիւր տուն պարտաւոր էր վճարել 4 դրամ, երեք չափ մաղած (մաքրած) ցորեն, մի ձիու տոպրակ, մի մազէ պարան և մի ձեռնոց (անձեռոցիկ)։ Այսպիսով սկիզբ դրուեց հայերի տնտեսական քայքայման։ Երկիրը աըն-

տեսապէս քայքայուելով՝ քայքայում էր և նախարարական կազմը։ Սակայն այդ հարկերը տեսկան չէին. ամեն մի արաբացի զինուորական-կառավարիչ իրաւունք ունէր իր քմահաճոյքի համաձայն հարկերն աւելացնել՝ օգտուելով իր տրամադրութեան տակ գտնուած զինուորական ուժից։

Յոյների պահանջները մի կողմից, ծանր հարկերը միւս կողմից՝ իրար թշնամի նախարարներին միառժամանակ միացրին ընդհանուր թշնամու դէմ. սակայն նրանց ջանքերն ապարդիւն անցան. արաբները նորանոր ուժերով արշաւեցին ու ճնշեցին ապստամբութիւնը, և զգուշութեան համար նրանք հայերից պատանդներ էին վերցնում։

Այսուհետեւ հայերի բնակած երկիրը գնահատեցին, և որպէսզի հայերն իրաւունք ունենային իրանց երկրում ապրել, պարտաւոր էին սարեկան հինգ հարիւր դահեկան հարկ վճարել։ Յետոյ հարկն սկսեցին առնել ըստ մարդաթուի. հարկ ստանում էին մինչև անգամ մեռածների համար. դրա համար քահանաները պարտաւոր էին մեռածների ցուցակը ներկայացնել, որպէսզի նրանց փոխարէն ընտանիքը վճարէ։ Զօրապետ-ոստիկանը զօրքով շրջում էր երկրում և ժողովում հարկը. ով վճարում էր, նրա վզից կնքած կապար էին կախում։

Յիսուն տարի տևեց յոյների և արաբների մըցումը: 692 թուին արաբները Յուստինիանոս Բ. կայսրին վերջնականապէս յաղթելով՝ Հայաստանն ու հարեան երկիրներն առան իրանց իշխանութեան տակ: Ծանր նստեց այդ մըցումը հայերին: Նրանք երկու կողմից էլ տուժում էին: Այնուհետև Հայաստանում նստում էին զօրապետ-ոստիկաններ, որոնք հսկում էին երկրին, որպէսզի հպատակութեան մէջ պահեն, և հարկերը ժողովում ուղարկում էին խալիֆներին:

Տնիսական ծանր կացութիւնն առիթ էր սալիս մեծամեծ արիւնիեղութիւնների: Ժողովուրդը նախարարների առաջնորդութեամբ մի քանի անգամ սպանեցին իրանց հարստահարող ոստիկաններին ու ջարդելով արաբական զօրքը քշեցին: Այդ բոլորից յետոյ արաբները պարզ տեսնում էին՝ քանի Հայաստանում գոյութիւն ունին նախարարները, երկիրը կատարեալ հպատակութեան մէջ պահել անկարելի է, ուստի վեռեցին իշխանական տօնմերը ջնջել եւ հայերին զինարափ անել:

Դրա համար էլ մէկը միւսից դաժան ոստիկաններ էին ուղարկում Հայաստան:

704 թուին Հայաստան եկաւ կաշմ, որը նախարարներին խարէութեամբ հրաւիրեց նախիջնանի և Երնջակի եկեղեցիները՝ իրը թէ Տուտարութեան երդումն առաւ։ Նա ամեն-

քին կապելով բանդ դըաւ, նախ ահագին ոսկի և արծաթ պահանջեց իրեկ փրկանք, իսկ երբ նրանք իրանց թագցրած թէ ոսկին և թէ արծաթը տուին, այն ժամանակ նրանց ամենքին էլ այրել տուաւ:

Արաբները երբ իրանց մայրաքաղաքը փոխագրեցին Բաղդադ և ցանկացան զարդարել շքեղ շինութիւններով, հայերին այնքան նեղեցին հարկերով, որ Հայաստանում արծաթը միանգամայն հատաւ: Ժողովուրդն ստիպուած էր գերեզմանները նոյնիսկ փորել և մեռեալների հետ թաղած ոսկին ու արծաթը հանելով տալ ազահ ոստիկաններին: Հարկերի ծանրութիւնից ժողովուրդն ընկաւ յետին չքաւորութեան մէջ, որից ստիպուած մեծամեծ խրմբերով թողեցին իրանց երկիրը և ցրուեցին ամենահեռաւոր տեղեր: 150 տարի տևեց այդ դրութիւնը: Հայերը մի քանի անգամ ապստամբութիւն բարձրացրին: սակայն նիւթապէս և բարոյապէս քայլքայուած ժողովուրդն անկարող էր յետ մզել նոր կազմակերպուած մի ահռելի կրօնա-զինուորական կատաղի բանակ: Մէկը միւսի ետից վայրագ ոստիկաններ էին արշաւում: Վերջին դիմագրութիւնը 849 թուին էր, որը զսպելու համար ուղարկուեց Բուզանունով մի կատաղի ոստիկան: Նա միանգամայն աւելրակ զարձրեց երկիրը: Զէնի կրելը

հայերին միաևզամայի արգելուեցաւ. Խալիքը
հրամայել էր. «Ով սուր էր կրում ազդրին, կամ
զէնք շարժել զիտէր, ով ապստամբութեանը
մասնակցել և զէնք էր վերցրել, ամենքին սպա-
նել»: Եւ այդ հրամանն ամենախիստ կերպով
գործադրուեցաւ. Շատ իշխաններ ձերբակալու-
ելով ուղարկուեցան Արաբիա՝ կառավարութեան
զօրքի մէջ ծառայելու. Նախարարների որոց
ուղարկում էին արաբական դպրոցներում ու-
սանելու. բազմաթիւ գերիներ, մանաւանդ՝ ով-
քեր չեին կարողանում պահանջուած հարկը
վճարել քշում էին Ասորիք և Արաբիա, ուր
ծառայում էին իբրև սարուկներ՝ փայտ կտրա-
տում, ջուր կըում և կամ հաւատափոխ լինե-
լով՝ արաբական զօրքի թիւը մեծացնում:

Մի համատարած մեռելութիւն էր տիրում
ամբողջ երկրում:

Զ.

Բագրատունեաց հարստութիւն I.

Արաբական պետութեան տկարանալը և հպատակ
ազգերի գրութիւնը. Բագրատունեաց տոհմի ձգտու-
մը. Աշոտ Ա. Բագրատունի. Հայաստանի ինքնավա-
րութեան վերականգնումը. Մաքառման շրջան. Ամրատ
Ա. (892—913) և Աշոտ Բ. Երկաթ (914—928):

Բագմաթիւ կործանիչ արշաւանքներից յե-
տոյ արաբներն ստիպուեցան հաշտուել այն
մտքի հետ, որ առանց տեղական իշխանների
անկեղծ հաւատարմութեան անկարելի է այդ-
պիսի հեռաւորութեան վրայ մի երկիր հպա-
տակութեան մէջ պահել և օգտուել նրանից:
Այդ է պատճառը, որ Թարդ գարուց սկսած
նրանք իրանց քաղաքականութիւնը շատ ազգե-
րի նկատմամբ փոխեցին. նրանց թոյլ տուին
ինքնավար դրութեան մէջ մնալ, շատ իշխանների
մագաւորական տիտղոս չնորհեցին, միայն թէ
շարունակեն հարկ տալ, որ այնքան անհրաժեշտ
էր շուայլութեան մէջ ընկած արար խալիֆնե-
րին: Այդ բանին նպատառում էին մանաւանդ

այն մի շարք կրօնական և քաղաքական խոռվութիւնները, որոնք սկսուել էին Բ.-րդ դարու վերջերին և որոնց չնորհիւ խալիֆների հզօր պետութիւնը դէպի ակնյայտնի անկումն էր դիմում։ Պարզ է՝ այդպիսի պայմանների մէջ նըրանք պէտք է գրաւէին հպատակների սիրտը։

Բուղալի աւերիչ արշաւանքից յետոյ Աշոտ Բագրատունի իշխանը իր հաւատարմութեամբ կարողացել էր գրաւել խալիֆի սիրտը։ Հայոց նախարարների մեծ մասը գերուած էին և տառապում էին Բաղդադի բանդում։ Հայաստանում այլևս ոչ մի խլրտում չկար։ Աշոտ հարկերը կանոնաւոր ուղարկում էր Բաղդադ։ Այդ բոլորի փոխարէն 859 թուին Աշոտ Բագրատունին կարգուեց իշխանաց իշխան։ Այսպիսով վերականգնեց Հայաստանի վաղուց խախտուած ինքնավարութիւնը։ Հայաստանի հարկը ժողովելու համար այլևս հարկ չէր լինում արաք ոստիկաններին արշաւել և երկիրը քարուքանդ անել։ Աշոտ ժողովում էր նշանակուած հարկը և ուղարկում։ Երկիրը վերջապէս ազատ շունչ քաշել սկսեց և Աշոտի հոգածութեամբ աւերուած տեղերն սկսեցին վերաշնուել։

Աշոտ հեռատես մարդ էր, նա տեսաւ այն մահացու հարուածը, որ կրեցին հայ նախարարական տօհմերը նախընթաց արշաւանքների միջոցին։ Նա տեսնում էր և արաքական պե-

տութեան անկումը և այդ հանգամանքներից օգտուելով՝ ցանկացաւ Հայաստանի թագն ստանալ, որի համար այնքան աշխատել էին Արծրունեաց և Սիւնեաց նախարարութիւնները։

Այդ բանում նրան կարող էին օգնել կոտորածից ազատուած նախարարները, որոնք գեռ բանդումն էին. հարկաւոր էր նրանց համակրութիւնը վաստակել. նա միջնորդից եւ զերութիւնից վերադարձեց նախարարներին, այլև նրանցից երկու նշանաւոր տոհմերի (Արծրունեաց և Սիւնեաց) ներկայացուցիչների հետ խնամէական կոպերով կապուեց։ Նա իր հոգածութեամբ եւ ոսիկանելիքի կամայականութիւններին վերջ տալով գրաւել էր ժողովրդի համակրութիւնը, զին էր մի բանի նախարարութիւնների կալուածներ, ուներ բաւականաչափ կանխիկ դրամ, որով միշտ կարող էր ցանկացած բուով պատրասի զօրք ունենալ. նա բարեկամական կապ էր պահպանում եւ Յիշանդիայի կայսեր նետ։

Նա ինեւացի հեռատեսութեամբ այդ բոլոր յարմարութիւններն ստեղծելուց յետոյ, երբ առիթը ներկայացաւ, իր ոյժն էլ ցոյց տուարաբներին։ Պարսիկ իշխաններից մէկն ապրստամբել էր։ Աշոտ հրաւէր ստացաւ խալիֆից նրա դէմ արշաւելու։ Պարսիկ իշխանը յաղթուեց, որի փոխարէն Աշոտ թագաւորական տիտղոս

ստացաւ խալիքից։ Ատրպատականի ոստիկանը թագ և թաղաւորական զգեստ բերաւ նրա հմար 885 թ.։ Այդ արտօնութան հետ խալիքը Աշոտի գերիշխանութեանը ևնթարկեց թէ հայ նախարարներին և թէ, չըջակայ սահմանակից իշխաններին։ Հայ նախարարներն ու օտար իշխանները պարտաւոր էին արաբների նշանակած հարկը վճարել Աշոտին, այլև վերջինս իբրև նրանց զլիստուր՝ իրաւունք ունէր իր օգտին ևս որոշ առորք ստանալ ու իր երկրի սահմաններն ընդարձակել ՚ի հաշիւ միւսների։ Այդպիսի յարաբերութիւնն ամենամեծ պառակտումների և ապստամբութիւնների առիթ կարող էր լինել։

Միւս կողմից՝ Ատրպատականի փոխարքայ ամիրանները զրկում էին իրանց նշանաւոր ուղուաններից։ Քանի հարկն իրանք էին ժողովում, քանակութիւնն իրանք էին նշանակում և միայն մի մասն էին ուղարկում տէրութեան զիւանը, միւս խոշոր մասն իւրացնում էին։ Բացի այդ ձեռվ նշանակած կամայական տուրքերից, այլև հպատակները պարտաւոր էին նրանց ընծաներ տալ։ Հայաստանում ինքնավարութեան վերականգնելով՝ վերջ էր տրում այդ բոլոր արտօնութիւններին։ Այդ է պատճառը որ Հայաստանի այդպիսի զրութիւնից ամենից շատ դժգոհ պիտի լինէին հէնց Ատրպատականի ոստիկանները։ Այդ բոլոր աննպաստ հանգամանք-

ները երևան եկան անմիջապէս Աշոտի յաջորդների օրով։

Սկսուեց մի ուժեղ մաքառման շրջան, որ տևեց 891—928 թիւը։

Մի կողմից՝ թէ հայ և թէ հարևան ազգերի իշխանները, որոնք ենթարկուում էին Բագրատունիներին, օգտուելով արաբների թուլութիւնից և չցանկանալով երկու տեսակ հարկ վճարել՝ իրանց անկախ հրատարակեցին, մի քանից նոյն իսկ թագաւոր տիազոսով։ մինչև անգամ Բագրատունիների տոհմի մէջ պառակտումն ընկաւ և Կարսում նոր թագաւորութիւնն հիմնուեց, և Աշոտի յաջորդները՝ Սմբատ Ա. և Աշոտ Բ. Երկաթ իրանց զէնքն ուղղեցին այդ ներքին թշնամինների գէմ։ ոկտոեց ներքին արիւնհեղութիւնների մի շարք։

Միւս կողմից՝ Ատրպատականի ոստիկանները, որոնք միանգամայն անկախ էին գործում, մեծ զօրքով մտան Հայաստան խալիքի զես նոր շնորհած ինքնավարութիւնը ջնջելու։ Տեսնելով Բագրատունիների կարձ ժամանակում կազմակերպած ուժեղ զօրաբանակը, նրանք էլ մի կողմից էին խրախուսում երկրորդականութանակից իշխաններին ապստամբելու թագաւորի գէմ, թագ էին խոստանում։ Այդ ձեռվ շատերն անջատուեցան Բագրատունիներից և փոքր ու մեծ թագաւորութիւններ կազմեցին։

Իսկ արաբացոց իւսուփ սատիկանն օգտուելով
այդ անիշխանութիւնից՝ հայոց քաղաքները մէկ-
մէկ առաւ, նրանց միջի հարատութիւնը թալա-
նեց, բնուկիչներին կամ որի մասնեց կամ գե-
րեց և վերջն էլ Ամրատ Ա., թագաւորին մի-
րելում պաշարելով՝ ստիպեց անձնատուր լի-
նել, որին իր խոստման հակառակ սպանեց (914
թ.): Դեռ զրանից առաջ նա նշանակուած հար-
կի հնդապտափիլը՝ 60000 դահեկան էր ստացել,
որի համար շատ իշխաններ ապստամբել էին
Ամրատի զեմ. զերել էր շատ իշխանների և կա-
թողիկոսին ու մեծամեծ փրկանքներ ստանա-
րով արձակել: Իսկ այժմ՝ այդ բոլորից յետոյ նա
զօրքով անցաւ երկրի մի ծայրից միւսը, նա-
խորարներին և ընդհանրապէս՝ ով ռսուր էր
կրում ազգըին», կոտորել տուաւ: Այդ աւերա-
ծից յետոյ Հայաստան այնպէս էր ամայացել,
որ կարծես մարդ չէր բնակուել այնտեղ: Այդ
զբութեանը հետեւեց սովը, որի պատճառով
երկրը կամաց-կամաց դատարկուեց ազգաբնա-
կութիւնից:

Սմբատի սպանութիւնից յետոյ արաբները
ոչնչացած համարեցին Հայաստանի ինքնավա-
րութիւնը, նրա հետ և Բագրատունեաց իշխա-
նութիւնը, երբ յանկարծ յայտնուեց Սմբատի
գերութիւնից փախած Աշոտ որդին: Աշոտ մի
եռանդոտ, աներկիւդ և քաջ մարդ էր: Նա փոք-

րաթիւ զօրքով նախ արաբներից վրէժխնդիր
եղաւ հօր մահուան համար, ապա խիստ պատ-
ժեց այն իշխաններին, որոնք դաւադրութիւն
էին կազմել իր կեանքի դէմ: Արաբները նոր
ուժով հեղեղեցին Հայաստան: Աշոտ ստիպուած
եղաւ թափառական կեանք վարել: Հայաստան
նոր սրածութիւնների ասպարէզ զարձաւ, որին
կրկին անդամ հետեւեց սովը: Աշոտ զիմեց յոյ-
ների օգնութեան, բայց այնտեղից ստացած
փոքրիկ օգնութեամբ զգալի հարուած հասցել
արաբներին չէր կարող: Եւ նա ստիպուած
եղաւ մի շարք մասն կուներով յոզնեցնել ա-
րաբներին, որոնք հարկադրուեցան յետ քաշուել
Հայաստանից:

Երկիրը վերջին ծայր քայրայման էր հա-
սել: Կեանքի և զոյրի ապահովութիւն միան-
գաման բացակայում էր, երկարատե սրածու-
թիւնները և յափշտակութիւնները անտեսապէս
աղբատացրել էին ժաղավրդին: Այդպիսի պայ-
մաններում կուլառուրական կեանք ստեղծելու
մասին մտածել անդամ անկարելի էր: մի հա-
մատարած խաւր էր տիրում երկրում: Նոր
կեանք ստեղծելու համար հարկաւոր էր երկա-
րատե խաղաղութիւն: Արաբների թուլանալը և
Բագրատունեաց իշխանների զերիշխանական
ձգումներից հրաժարուելը սկիզբն եղաւ այդ

իսպաղութեան, որ սկսուեց Աշոտ Բ-ի մահուանից յետով (928 թ.):

II.

Խաղաղ գարգագման շրջան (928-1030) Աշոտ Գ. Աղործած, Գողիկ Ա. Վերածնունդ, Արաբական ազգեցութիւնը, Արևելաներ և վաճառականութիւն. Ճարտարապետութիւն, Վանքեր և վանական կեանք. Գըրաբանութիւն:

Թ-րդ գարու վերջերին սկսուած կրօնական երկպառակութիւնները խալիֆների աշխարհական իշխանութեանը մահացու հարուած էին հասցրել: Զ-րդ գարուց սկսած Բիւզանդական գահը բարձրացան մի շարք Արշակունի, Արծրունի և այլ հայկական տոհմերից կայսրներ, ուրոնք իրենց յաջող արշաւանքներով կայսրութեան ընկած վարկը բարձրացրին: Այդ արշաւանքներն Ասիայում ուղղուած էին արաբների դէմ. Ժ-րդ գարում յոյները մեծ յաջողութեամբ նրանց քշեցին Փոքր Ասիայից: Արաբական լայնածաւալ պետութեան մէջ կազմուեցին զանազան անկախ մահմեդական իշխանութիւններ:

Արաբական պետութեան քայքայումը հպատակ ազգերի վերածնուելու և ուժեղանալու ազգանշանը եղաւ: Եւ արաբ ամիրապետները հնարաւորութիւն չունէին խանդարելու հպատակ քրիստոնեայ ազգերի անկախութիւն ձեռք

բերելուն: Իւրաքանչիւր ազգ, իւրաքանչիւր նոր կազմակերպուող պետութիւն զբաղուած էր իր ներքին բարեկարգման խնդրով:

Այդ գրութիւնից օգտուելով առաջ եկան մի քանի մեծ ու փոքր անկախ իշխանութիւններ, որոնց պարագլուխները «թագաւոր» տիտղոսն էին կրում. այսպէս օրինակ՝ Վասպուրականի, Կարսի, Բաղաց (Ալինիքում), Աղուանից և Դարբանդի թագաւորութիւնները:

Այդ խաղաղ զարգացման շրջանը տեսեց մի դար:

Այդ խաղաղութեանը նպաստում էր և այն հանգամանքը, որ Բագրատունիները հրաժարուել էին իրանց զերիշխանական ձգտումներից, համոզուելով որ Հայուստանում, որտեղ արժմատացած է հին նախարարական տոհմերի գոյութիւնը, անկարելի է ուժեղ միտպետական կառավարութիւն ստեղծել:

Հայ ժողովուրդն ամենալայն չափով օգտուեց այդ խաղաղութիւնից. Նա միանգամ ևս ցոյց տուեց իր կենուուակութիւնը և յառաջազիմելու բնուուակութիւնն ու ձգտումը: Եւ սկսուեց մի կուլտուրական աշխատանք Հայաստանի կենտրոնում՝ Շիրակում, ուր կարճ միջոցում իրեկ այդ աշխատանքի յուշարձան կանգնեց Ենի մայրաքաղաքը իր փառահեղ շինութիւններով, հպարտ պարիսպներով ու աշտա-

բակներով, վայելուչ ոգարատներով ու ձոխ տաճարներով։ Այդ ըստ ջանակի կույտուրային մեծապէս նպաստեցին Աշուա Գ., Ազորմած, Սմբատ Բ. և Գողիկ Ա. Նրանց հետ և շատ անուանի իշխաններ ու նարուաններ։

Հայկական հին քաղաքակրթութեան միայն հետքերն էին միացել, ամեն բան նորից պիտի սկսվին, նոր կենուքը զարգանում էր տիրող պարմանների տակ։ Այդ պայմաններն ստեղծել էին արարները։

Այս միջոցին, Երբ խաչնարած աւագակարուց արարները նոր քաղաքակրթութիւն էին առ զգացմ նպաստակներից յափշտակած ահազին նիւթեական միջոցներով, իրանց կործանիչ արշաւանութերով տասնեակ տարիներ կանգնեցնում էին նրանց յառաջաղիմութիւնը։ Այդ ազգերն իրանց վերածնութեան արշալոյսին ամեն բան ովտք է փոխ առնէին արդէն կուլ'տուրապէս առաջ անցած արաբներից և մշակէին նրանց օրինակով, այժմ արաբներն էին նրանց ուսուցիչները։

Արաբական կրօնն աշխարհային վայելքներից հեռանալ չէր քարոզում՝ հակառակ քրիստոնէութեան։ նա նոյն խոկ հանդերձեալ կեանքում ճշմարիտ հաւատացեալին խոսանում էր ձոխ կեանք, վայելքներ։ Բնական է, որ նոյն պիսի կեանք արաբներն աշխատէին ստեղծել և

իրական կեանքում։ Դրա համար նրանց միջոցներ չէին պակասում։ Նրանք իբրև խիզախ մարդիկ արտաքին վառքով ու վայրով դրաւում, շլանում էին։ Եւ նրանք աշխատեցին ձոխ կեանք ստեղծել։ Նրանք կեանքի երեսյիներին ու իրանց արտազրութիւններին արտարին վայլ էին տալիս։ Ամեն քայլափոխում աչքի էր ընկնում շքեղութիւնը։ Նրանց առօրեայ ապրուստն արդէն շահայլութեան էր հասնում։ Պրականութեան մէջ տիրում՝ Եր «բարձր» ոճ, շինութիւններն աչքի էին բնկում՝ գեղեցիկ օրնամենտացիաներով, զարդարանիրներով և այլն։ Շքեղ կեանքի սպահանքը զարդացրեց արհեստաները և արակեսար։ Անի քաղաքում պեղումներից հանած շատ անոյին իրեր իրանց նրբութեամբ ապացուց են, որ մի քանի արհեստներ իրանց զարդացման բարձր տատիճանին էին հասել. այդ իրերը համարեա առանց բացցառութեան նկարագրուած են. այնուհետ կան նուրբ կառել, և ապակե, ամանեղին, երկաթե, և այլ մետաղներից իրեր, զենքեր, հագուստի մնացորդ՝ նուրբ մետարուկ, կաորից տակնագործած, զարդարանիրներ և այլն։

Կեանքի սպահանչները մի կողմից, նորանոր արտազրութիւնները միւս կողմից զարդացրին տակեաւուրու հայտատանն ընկում է, այն ձանապարհների վրայ որոնց միջոցով արևմտեան

քաղաքակրթութեան արտադրութիւնները փոխադրում էին արևելք և ընդհակառակն. այդ է պատճառը, որ արաբական շրջանում առաջ եկան մի շարք «օահաստան» քաղաքներ, ինչպիսիք են՝ Անի, Դուին, Արծն, Կարս, Բաղէշ, Մելիտինէ (Մալաթիա) և Փոքր Ասիայի այլ հայաշատ ու զուտ հայաբնակ քաղաքներ։ Վրաստանից, Պարսկաստանից, Եւրոպայից և մինչև Հնդկաստանից ու Բաղդադից այդ շահաստան քաղաքներն էին բերում ոթերում ամեն տեսակ ապրանքներ և ապա փոխադրում զանազան վայրեր։ Հայերի մէջ առևտրի զարգացմանը նպաստեց և արաբների ու յոյների լարուած յարաբերութիւնը. շնորհիւ պատերազմական գործողութիւնների երկար ժամանակ մէջ խցուած էր առևտրական անմիջական յարաբերութիւնը, և հայերն ամենալայն չափով օգտուեցին այդ հանգամանքից։ Բացի դրսից ներմուծուող ապրանքներից՝ Հայաստանից էլ արտահանում էին ոսկի, արծաթ, որդան կարմիր, զանազան տեսակի մարմարին, ցորեն, աղ, վուշ, մեղք, մոմ, ոչխարի և այծի մորթ, բժշկական բոյսեր և այլն։ Ապրանքները փոխադրում էին կարաւաններով մինչև ծովափնեայ քաղաքները, իսկ այնտեղից նաւերով հեռաւոր վայրեր։

Մի քանի տեղերում կային վաճառականական միութիւններ. արգելուած էր վաճառման

ժամանակ խարէութիւնը և ապրանքների փոխանակութեան ժամանակ՝ խարդախութիւնը. վաշխառութիւնը և տոկոսներից ստացած շահը պախարակում էր, և այդ միջոցներով շահած փողով զոհ և եկեղեցական նույիրաբերութիւն անելն անարգւում։

Շատ հին դարերից սկսած՝ շինարարութիւնը հայերի բնական հակումն էր. հայը որտեղ բնակուել, աշխատել է հաստատուն օթևան շինել. այդ հակումը զարգացրել էր ճարտարապետական արուեստը։ Բագրատուննեաց շրջանում ճարտարապետութիւնը փայլում է իր փառահեղութեամբ, գեղեցկութեամբ, նուրբ զարդանըկաններով (հիւսուածքներով) և քանդակներով, որոնք հիացմունք են պատճառում։ Բագրատուննեաց շրջանի ճարտարապետութիւնը մի հիւսուածք է հին յունա-հուվմէական, պարսկական, հին հայկական և ապա արաբական ոճերի. այդ բոլորն 'ի մի ձուլելով հայերը կարողացան իրանց պահանջած ձեւ տալ և ուրոյն՝ հայկական ոճ ստեղծել՝ հայացնել։ Ներկայումս դեռևս կիսականդուն շատ գեղարուեստական կոթողներ Բագրատուննեաց ոճի վեհութիւնն են ապացուցանում. իբրև այդպիսի նմոյշ նշանաւոր է նըրանց մայրաքաղաք Անին։

Ճարտարապետութեան զարգացմանը նպաստեց և կրօնասիրական զգացումը, որ շատ

զարգացաւ արաբական տիրապետութեան շրջանում: Այդ շրջանում վերաստեղծուեց վանական կեանքը:

Արաբներն իբրև կրօնա-զինուորական պետութիւն՝ առանձին ուշադրութիւն էին դարձնում մզկիթներ բազմացնելու վրայ. նրանց մէջ հոգևորական դասը մեծ նշանակութիւն ունէր՝ իբրև պետութեան հիմնադիր և նրա ամբողջութիւնը պահպանող. նրանք որքան դէմ էին հպատակ ազգերի քաղաքական իշխանութեան ներկայացուցիչներին, այնքան կարեռութիւն էին տալիս նրանց հոգևորականութեանը. այդ է պատճառը, որ հայերի մէջ հոգևորականութիւնը մեծամեծ արտօնութիւններ ստացաւ և նրա նշանակութիւնը շատ բարձրացաւ ժողովրդի աչքում. իսկ նախընթաց քաղաքական դէպքերը նրա դիրքն արդէն բաւականաչափ ամրապնդել էին: Հոգևորական դասի ուժեղանալուն նպաստեց և վանական կեանքը:

Վանական կեանքն սկիզբն էր առել քրիստոնէութեան առաջին շրջանից: Գ. և Դ. դարերում հոռվայրացիների հանած հալածանքները շատ քրիստոնեաների քշեցին Եղիպատոսի և Ասորիքի լեռներն ու անապատները: Դրանք կոչւում էին անապատականներ: Նրանք այնտեղ ուսումնասիրում էին նոր վարդապետութիւնը, ապա պատրաստուած դուրս գալիս քարոզելու: Այդ անապատականները քրիստոնէութեան տա-

րածման գործում մեծ դեր կատարեցին: Նրանք իրար «եղբայր» էին անուանում, իսկ նրանց ապաստարանները եղբայրանոցներ կամ վանքեր էին կոչւում: Իրեւ ձշմարիտ քրիստոնեաններ նրանք կատարում էին նոր ուսումնաքի բոլոր պահանջները. միանգամայն պարզ ուսակաւապետ կեանք էին վարում: Ամենքն էլ զբաղմունք ունէին. նրանց մէջ կայլն ջուլհակներ, հիւսներ, բրուտներ, խաղախորդներ, ուրիշներն զբաղում էին կրօնական ուսումնասիրութիւններով: Որոշ ժամերին դադարում էին աշխատանքները և ամենքը հաւաքում էին քարոզ և աղօթք լսելու: Գրագէտները կարդում էին, անգրագէտները՝ լսում: Նրանք իրանց մարմինն ընտելացնում էին խիստ կեանքի՝ ծովապահութեան, նեղութիւնների և չարքաշ ապրուստի. նըրանք աշխատում էին իրանց մէջ մեղնել աշխարհային՝ մարդկայինը և զարգացնել աստուածայինը՝ հոգին ու միտքը: Շատ վանքեր ծառայում էին իբրև որբանոցներ, հիւսնագանոցներ և անկելանոցներ, և վանականները գնում էին այնտեղ կարօտեալներին խնամելու իրանց քրիստոնէական պարտքը կատարելու:

Յաճախ Յունաստանից գիտնականներ էին գալիս այդ անապատները և իրանց հետ բերում հին յունական ուսման արտադրութիւնները: Նոր վարդապետութիւնը հին մատար աշխարհից ընտրեց ինչ որ լաւ էր, հարստացըրեց իր մատար ու հոգևոր աշխարհները նրանով:

Երբ եղբայրների թիւը բաւականաչափ բազմացաւ, այն ժամանակ նրանք ցրուեցին դէպի Արարիա, Ասորիք, Փոքր Ասիա և Հայաստան: Վանական կեանքն էլ նրանց հետ փոխազրուեց այդ երկիրները:

Առաջին անգամ Գր. Լուսաւորիչը զարկ տուաւ Հայաստանում վանական կեանքի զարդանալուն և հիմնարկեց շատ վանքեր, կամ հին մեհենական շինութիւնները վերածեց քրիստոնէական եղբայրանոցների, 'ի հարկէ այդ շինութիւնները յարմարեցնելով նոր կրօնի պահանջներին։ Վանական կեանքի զարդացմամբ հարկ եղաւ որոշ կարգ ու կանոն սահմանել. նշանակուեցին վանական կառավարիչներ, որոնց ենթարկում և լսում էին մնացած վանականները. նրա կամքից դուրս եկողը Աստծուն էր արհամարհում, և այդպիսին ենթարկում էր ապաշխարանքի։ Թէև առաջնորդին ընտրում էին եղբայրները, բայց նա գործում էր անկախ և իւրաքանչիւրի պարաքն ինքն էր որոշում իր ցանկութեան համաձայն։ Այնուհետեւ վանքերում կար անտեսական մասի կառարարիչ՝ անտես, հիւրերին և կարօտեալներին ընդունող և մսուցանող՝ հիւրընկալ, հերթապահ վերակացու՝ շաբաթաւոր, վանքապատկան նախիրների, ոչխարների հօտերի և գրաստների տեսուչ և այն։ *

Ժամանակի ընթացքում վանքերն ահապին հարստութեան տէր դարձան. բայց անշարժ կալուածներից՝ նրանք ունեին հազարաւոր անասուններ, արջառներ, ոչխարներ, ուղարեր, ձիանց ջոկեր, բեռնակիր ջորիներ, էշեր և այլն։

Այդպիսի հարստութիւնը դէպ իրեն գրաւեց շատ-շատերին, և վանքերը լցուեցան վանականներով։ Վանականները շատ անգամ իրանց խիստ կեանքով իրար գերազանցում էին. կային այնպի-սիները, որոնք միայն չոր հացով և ջրով էին ապրում. շատերը օրական միայն մի անգամ երեկոներն էին անխօս ուտում. նրանք գօր ու գիշեր աղօթքի էին կանգնած։ Վանական կալուածները մշակելու համար կային հարիւրաւոր մշակներ, այգեպաններ, երկրագործներ. վանքերի հարստութիւնը յարձակումներից պաշտպանելու համար կային վանական վաշտեր՝ թէ հեծեալ և թէ հետևակ։

Հայ իշխանները դարերի ընթացքում կալուածներ էին նուիրել զանազան վանքերի, և հայ գիւղացիութիւնը դարձել էր նրանց սեպհականութիւնը։ Վանականները շատ անգամ դուրս էին գալիս շրջակայութեան՝ քարոզելու և ուսուցանելու. տարուայ որոշ ժամանակներին էլ նրանք գնում էին վանական տուրքերը ժողովելու. իրանց սեպհական գաւառների թուի համաձայն վանքերն ունեին գաւազաններ։

Վանքերի ազգեցութիւնը մեծ էր ժողովրդի վրայ. շատ անգամ աւագակները պատկառում էին վանականներից. կրօնական զանազան խնդիրների բացատրութեան համար գիւմում էին նրանց, նոյն իսկ կաթողիկոսները։

Իշխանները շատ անգամ դիմում էին նրանց
խորհրդին:

Վանքերը բացի կրօնաւորների կայան լի-
նելուց՝ զանազան նպատակների էլ էին ծառա-
յում. կային հիւրանոցներ, տնանկների և աղ-
քատների անկելանոցներ, ասպնջականոցներ և
ամենից շատ՝ դպրոցներ: Այդ դպրոցներից գուրս
եկան առաջին թարգմանիչները: Այդ դպրոց-
վանքերում էր զարդանում գրականութիւնն ու
գրելու ձևը: Կրօնական հալածանքների ժամա-
նակ վանքերի գործունէութիւնը որոշ չափով
դադարեց, սակայն արաքական շրջանում վա-
նական կեանքը կրկին վերածնուեց. այս շրջա-
նի վանքերը նշանաւոր էին իրանց վիլիսովիա-
ներով, աննման երաժիշտներով, բանիբուն վար-
դապետներով, անհամեմատ նկարիչ եւ գրող
արինսաւորներով: Վանքերում կային և գրա-
դարաններ:

Մշակուեց վանական նոր կանոնադրութիւն.
Նրա համաձայն՝ մանուկներին ուսուցանելու
համար վարձ չպէտք է ստանային, իսկ որբե-
րին պէտք է նաև խնամք տանէին. ծնողները
հոգում էին միայն հագուստն ու կերակուրը:
Ունեոր ծնողներն ուսուցիչներին կարող էին
ընծայ տալ, իսկ չքաւորներից չպէտք է պա-
հանջէին: Վանականի անմիջական պաշտօնն էր
ուսուցչութիւն, կամ «զաս ասել զանազան գըր-

քերի վրայ», նրանց մօտ ժողովւում էին ամեն
դասակարգի և հասակի աշակերտներ, որոնց
դաստիարակութիւնը կատարւում էր յայտնի ե-
ղանակով: Նրանք քարոզում էին եկեղեցում,
մշակում էին եկեղեցական բանահիւսութիւնը
և զանազան գիտութիւններ, ուսումնակրում
էին զանազան լեզուներ, պատմութիւն, աշխար-
հագրութիւն, տօմարագիտութիւն, քերականու-
թիւն, բժշկութիւն: Նրանք ծաղկեցրին հայ գե-
ղագրութիւնը, ընդօրինակում էին զանազան
գրքեր, ծաղկում էին մագաղաթը և պատրաս-
տում կարեոր գեղեր ու մելան. Նրանք մշակե-
ցին եկեղեցական երաժշտութիւնը:

Ոսկեղարեան շրջանից յետոյ գրաբար լե-
զուն ընկել էր. այս դարում նա կրկին մշա-
կուեց ու առաջադիմեց. այդ ժամանակուայ հե-
ղինակների ոճը փայլում է գեղեցիկ դարձու-
ածքներով և բառերով:

Վանական կեանքն էլ միւս կողմից նպաս-
տեց ճարտարապետութեան զարգացմանը և ա-
ռաջ եկաւ վանական ճարտարապետութիւն: Հայ
իշխաններն իրանց վանքերով կարծես մըցում
էին միմեանց հետ: Բացի նրանից, որ Հայաս-
տանում բազմանում էր վանքերի թիւը, հայ
իշխաններն իրանց տոհմերի յիշատակին վանքեր
էին կառուցանում և Հայաստանից գուրս՝ երու-
աղէմում և նրա շրջակայքում. ամեն մի իշ-

խան, նոյն իսկ ունեոր հայ աշխատում էր իր առանձին վանքը կամ եկեղեցին ունենալ, որտեղ իրանց տոհմի համար յատկապէս պատարագներ պէտք է մատուցանուէին։ Առաջ եկաւ պատարագ գնելու սովորութիւնը, որն իշխանական դասից անցաւ հասարակ ժողովրդին։ Միջին կարողութեան տէր հայր չէր կարող առանձին վանք կամ եկեղեցի կառուցանել, նա գնում էր որևէ եկեղեցում մի սեղան, դրա համար հարկ եղաւ սեղանների թիւը եկեղեցիներում բազմացնել, շինում էին նոյն իսկ երկյարկ սեղաններ։ Հաւատացեալները պատարագներ գնելու համար նուիրաբերում էին այգիներ, ծաղկոցներ, ձիթահանքեր և կրպակներ, որոնց եկամուտներով կերակրում և որոշ թիւ պատարագներ էին մատուցանում նուիրաբերողի տոհմի յիշատակին։

Կրօնական կրթութիւնն այնքան մեծ տեղ էր բռնում, որ թագաւորներն ու իշխաններն անգամ իրանց պատրաստութեամբ յետ չէին մնում հոգեսրականներից, նրանք էլ շատ անգամ մասնակցում էին կրօնական վիճաբանութիւններին ու ժամերգութեանը։

Քաղաքական խոշոր դէպքերից ազատ մնալով՝ Աշոտ Գ., Ռումանած, Սմբատ Բ. և Գագիկ Ա. իրանց մայրաքաղաք Անին զարդարեցին շինութիւններով ու ամբացըին պարիսպներով։

Այդ շինութիւնները բացառապէս շինուած են կարմրագոյն քարից, որոնք այնքան առատութեամբ ստացւում են Ախուրեանի ափերին բարձրացող քարահանքերում։

Արտաքին փայլը, շքեղութիւնն ամեն բանի մէջ երևում էր. զօրքն աչքի էր ընկնում իր զինավառութեամբ և զրահաւորութեամբ, զինուորական նուազածութեամբ և դրօշակներով. երաժշտական գործիքներն էին. փող, եղիւր, սրինգ, քնար և տաւիղ։

Թագաւորների և իշխանների յուղարկաւորութիւնը մեծ շքով էր կատարուում. դին զարդարում էին թագաւորական զգեստներով, արծաթապատ դագաղ, ոսկեսանձ ջորիք լծած, զօրքի վաշտեր՝ զինավառուած և դրօշներով, դագաղի առջեց եկեղեցական երգեր, խունկերի բուրմունք, բարեկամներ և սիրելիներ շըրջապատած, յետելից ողբերի փողեր, տաւիղներ ու քնարներ, ողբասաց կոյսեր, ողբերգական պարեր, ուամիկ բազմութիւն, սև հագած սպաւորներ և այլն։

III.

Անկման շրջան, Յովհաննէս-Սմբատ (1020-1040) և Աշոտ, Նրանց կոիւները գահի շուրջը. Սելջուկների արշաւանքը և տագնապ հայ իշխանների մէջ. Աղդային և յունասէրների կուսակցութիւններ, Գագիկ Բ. (1042-1045) և Բագրատունեաց թագաւորութեան վախճանը:

Գագիկ Ա. մեռնելով թողեց երկու որդի. Յովհաննէս-Սմբատ, որ թոյլ ու բարի մարդ էր, և Աշոտ, որ եռանդուտ և փառասէր էր: Գահակալական օրէնքի համաձայն անդրանիկը՝ Յովհաննէս-Սմբատ բարձրացաւ հօր գահը: Աշոտ իր մէջ աւելի արժանաւորութիւններ էր գտնում այդ պաշտօնի համար, դրա համար համակրողների աջակցութեամբ դիմեց Անիի վրայ. արիւնահեղ ընդհարումից յետոյ միայն իշխաններն ու կաթողիկոսը կարողացան նրանց հաշտեցնել, թէև դրանից յետոյ դարձեալ Աշոտ դաւադրութիւններ կազմեց եղօր կեանքի դէմ: Յովհաննէս-Սմբատ թագաւորում էր Անիի և շրջակայքի վրայ, իսկ Աշոտ՝ արևելեան մասի վրայ: Այսպիսով Բագրատունեաց թագաւորութիւնների ևս փոքրացաւ՝ մի ուժեղ և անկախ պետութիւն կազմելու համար:

Մինչ երկու եղբայր այդպիսի ներքին կը ուիւներով էին զբաղուած, Միջին Ասիայում տեղի ունեցաւ ազգերի մեծ շարժում:

Շատ վաղուց Ասիական անապատներում թափառում էին զանազան խաշնարած ցեղեր: Երբ արաբական ազգեցութիւնը տարածւում էր մինչև Ասիայի խորքերը, այդ ցեղերից մէկի առաջնորդը՝ Սելջուկ ընդունեց մահմեդականութիւն: Նրան հետևեցին իր ցեղակիցներից հազար հոգի: Այդ ցեղը նրա անունով էլ կոչուեց Սելջուկեան: Ասիայի խորքերում Սելջուկ հիմնեց արաբացիների օրինակով մի կրօնա-զինուորական պետութիւն: Արաբական պետութեան քայլայման շրջանում նրա յաջորդները բաւականին ուժեղացան և տիրեցին Պարսկաստանին: Սելջուկի թոռն Տուղրիլ բէյ իրեն անուանեց Արևելքի և Արևմուտքի թագաւոր (Էմիրալ Օմրա) և արշաւեց առաջաւոր Ասիայի վրայ: Հիւսիսային Պարսկաստանն ու Միջազգետքն աւերելով Տուղրիլ բէյ մատա Վասպուրական: Այդ ժամանակ Վասպուրականում թագաւորում էր Սենեքերիմ Արծրունին: Մինչև նրանց զան արդէն իրանց վայրագութեան լուրն էր հասել: Նրանք կործանում և աւերում էին բոլորը, ինչ որ սաեղծել էր արաբական և նրանց հպատակ ազգերի կուլտուրան: Նրանք դուրս էին եկել ընդգրածակ սակաւաբնակ անապատներից: Նրանք վրանաբնակ ու նախնական կուլտուրայով ապրած մարդիկ էին, և իրանց անցած ճանապարհն էլ անապատ էին դարձնում: Թէև Սենեքե-

ըիմ դիմագրեց, բայց սելջուկներն անարգել մտան Հայաստանի ներսը և բաւականին աւերելուց յետոյ վերադարձան Պարսկաստան։

Յովհաննէս-Սմբատ թոյլ ու պատերազմական ընդունակութիւնից զուրկ մարդ էր. նրա վրայ յոյս դնել անկարելի էր. մի ուժեղ ձեռք էր հարկաւոր Հայաստանի և հարկան երկիրների մանր ու անկախ իշխաններին միացնող, որ կարելի լինէր դիմագրել հետզհետէ մօտեցող փոթորիկներին, որոնցից առաջինը սելջուկներն էին դեռ ևս։ Այդպիսի ձեռք չկար, և այդ մասն իշխանների մէջ սկսուեց մի տագնապ։ Հայ իշխանական տոհմերը, որ այնքան սերտ կապուած էին իրանց կալուածների հետ, այդ տագնապի ազգեցութեան տակ հետզհետէ թողեցին իրանց հայրենիքը և շատերը բազմաթիւ հպատակներով գաղթեցին աւելի ապահով տեղեր, մեծ մասամբ յունաց մասը, կամ երկրի աւելի լեռնոտ վայրերը։ Այդ է պատճառը, որ յետակայում հայ իշխանական տոհմերի շառաւիզներ մենք գտնում ենք իրանց բուն կալուածներից շատ հեռու վայրերում։

Գաղթի առաջին նշանը տուողը Վասպուրականի Սենեքերիմ թագաւորն էր. նա իր Դաւիթ որդուն երեք հարիւր նժոյգի բարձած ընծաներով ուղարկեց Բիւզանդիա և բնակութեան տեղ խնդրեց Փոքր Ասիայում։ Վասիլ

կայսրն ուրախութեամբ ընդունեց այդ պատգամաւրութիւնը. Սենեքերիմին շնորհեց Սեբաստիան իր շրջակայքով, նրան անուանեց պատրիկ և զօրավար Կապադովկիայի և Վասպուրականը վերցրեց իր իշխանութեան տակ։ Յունաց զօրավարը եկաւ Վասպուրական, մասամբ համոզելով, մասամբ բունի ուժով երկիրը հպատակեցրեց և բազմաթիւ բռվղար գերիներ բնակեցրեց այնտեղ։ Սենեքերիմ փոխադրուեց Սեբաստիա 400,000 հպատակներով (1021 թ.)։

Նրա օրինակին հետեւեց վրաց Դաւիթ Կիւրապաղատը՝ մահուանից առաջ կտակելով իր երկիրը յունաց կայսրին։ Նրա յաջորդը չցանկանալով նախորդի կտակը կատարել՝ ապստամբեց յունաց դէմ։ Վրացիները յաղթուեցան և Յովհաննէս-Սմբատ վախենալով յոյների վրէժինդրութիւնից՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի խորհրդով Սնին իր ուջակայքով կտակեց յունաց կայսրին, որի համար նա գրաւոր խոստումն ուղարկեց։

Յունաց կայսրներն Արաբական ազգեցութեան անկումից յետոյ, Արեւելեան Հայաստանի հայ իշխաններին գրաւելու նպատակով նրանց զանազան տիտղոսներ էին շնորհում, և շնորհիւ այդ հանգամանքի բուն իսկ Բագրատունեաց իշխանութեան մէջ ստեղծուել էր յունասէրների մի ուժեղ կուսակցութիւն։ Թագաւորի մօ-

տիկ անձանց մէջ նոյն իսկ կային յունասէրներ. այդ կուսակցութեան պարագլուխներն էին հայոց Պետրոս Գետադարձ կաթողիկոսը և Սիւնեաց Սարգիս իշխանը, որը կայսրից ստացած վեստ (կայսերական հանդերձապետ) տիտղոսն էր կը-ըռում: Յովհաննէս-Մբատի խոստումն այդ կուսակցութեան թելադրութիւնն էր և միայն նը-րանց գիտութեամբ եղաւ:

Վասիլ Բ. մեռնելուց առաջ (1030թ.)
կանչեց Կիրակոս անունով հայ քահանային,
Յովհաննէս-Սմբատի հրիտակը նրան տուած
պատուիրելով վերադարձնել այն հայոց թագա-
ւորին։ Սակայն Կիրակոս երկար ժամանակ իր
մօտ պահեց և վաճառեց Մոնոմախոս կայսրին,
որը հայերից պահանջեց իրագործել իրանց մե-
ռած թագաւորի խոստումը։

Սուաջին անդամ հայերի մէջ երևան եկան
ազգային գիտակցութեամբ մարդիկ, որոնք ցան-
կացան ազգային պետութիւնը վրկել կործա-
նումից, մանաւանդ՝ ՚ի նկատի առնելով յոյների
գէպի հայերը տածած կրօնական ատելութիւնը:
Այդ կուսակցութեան զլուխ կանգնեց հայոց
զօրքերի հրամանատար Վահրամ Պահլաւունին:
Մարգիս Սիւնին, իբրև տէրութեան ինամակալ
պալատի ներկայացուցիչն էր, իսկ Վահրամ
Պահլաւունին՝ ժողովրդի Երկու կուսակցութիւն-
ների մէջ խիստ պայքար էր տեղի՝ ունենում:

Ազգային կուսակցութիւնն աւելի ուժեղ գտնուեցաւ և յոյներին մերժեցին Յովհաննէս-Սըմբատի «ապօրինի» խոստումը կատարել: Այդ խոստումից առաջ՝ երկու եղբայրների պայքարից յետոյ հաշտութիւն էր կայացել, որի համաձայն Յովհաննէս Սմբատի մտհուանից յետոյ գահն անցնում էր իր եղբօր Աշոտին, որը մեռել էր թողնելով Գագիկ անունով որդուն:

Յոյները դիմեցին զինուորական ռաժի և
մէկը միւսի յետեկից բանակներ արշաւեցին Հա-
յաստան։ Հայերն առաջին իսկ յաղթութիւնից
յետոյ թագաւորեցրին Գագիկին (1042թ.)։

Յունասէրների բոլոր մեքենայութիւններն
ի դերև ելան և Գագիկ օրինաւոր թագաւոր
ճանաչուեց: Այն ժամանակ նրանք զիմեցին
ուրիշ միջոցի: Նախ փոքրահասակ թագաւորի
վստահութիւնը գրաւեցին, ապա նրան միան-
գամայն իրանց աղքեցութեան տակ ձգեցին: Կայս-
րը յունասէրների խորհրդով Գագիկին հրաւի-
րեց Բիւզանդիա, որպէսթէ բարեկամական կապ
հաւատատելու: Ազգային կուսակցութեան զգու-
շացումները զուր անցան: Գագիկ հաւատալով
կաթողիկոսի և Սարգիս Սիւնու հաւաստիացում-
ներին, 1045 թուին գնաց Բիւզանդիա և այլես
չվերադարձաւ. կայսրը երկար ժամանակ նրան
արգելած պահեց, մինչև կաթողիկոսից և յու-
նասէրներից ստացաւ մայրաքաղաքի բանալի-

ները և գրութիւն, որով Անին յանձնում էին յոյներին։ Գագիկ յուսահատուած գրաւոր հրաժարական տուաւ գահից։ Մինչ ազգային կուսակցութեան պարագլուխներն ամենայն եռանդով պաշտպանում էին իրենց թագաւորի իշխանութեալը, ստացուեց Գագիկի հրաժարուելու լուրը, որից յետոյ այլևս ապարդիւն համարեցին իրենց պայքարը։

Կաթողիկոսն իր աշխատութեան համար նախ մեծաքանակ գումար ստացաւ, ապա, երբ յոյները բոլորովին տիրեցին Հայաստանին, շատ իշխանների հետ ուղարկուեց Բիւզանդիա։

Գագիկ երկար ժամանակ իրեւ աքսորական թափառում էր Փոքր Ասիայում՝ առանց իրաւունք ունենալու Հայաստան վերադառնալ։ Փոքր Ասիայի մի քանի յոյն իշխանների ձեռքով 1079թ. դաւադրութեամբ սպանուեց։

Յոյները տիրելով արևելեան Հայաստանին՝ աշխատեցին հայերին դաւանափոխ անել և հայոց եկեղեցին ձուլել յունականի հետ։ Նրանք կազմալուծեցին և ցրուեցին հայկական գնդերը, իշխաններին ոմանց քշեցին, ոմանց դաւադրութեամբ սպանեցին և երկրում դիմադրող ոյժը ոչնչացրին։ Այդ ժամանակուայ կայսրները աւելի շատ զբաղւում էին կրօնական և եկեղեցական խնդիրներով, քան թէ պետական գործերով և յաճախ պետութեան շահերը զոհում

էին եկեղեցական զանազան հարցերի։ Հայերի գէմ մի սաստիկ կրօնական հալածանք սկսուեց, որը մեծ ատելութեան պատճառ դարձաւ երկու ազգերի մէջ. այդ ատելութիւնը շատ նը-պաստեց Ասիայում յունական ազգեցութեան ընկնելուն։ Յոյները միւս կողմից հոգ չտարին իրանց հեռաւոր արևելեան սահմանները պաշտպանելու։ Եւ այդպիսով Բիւզանդական կառավարութիւնը նպաստաւոր պայմաններ ստեղծեց այն նոր սրբավետողների առաջ, որոնք միջին Ասիայից կամաց-կամաց յառաջանում էին դէպի արեւմուտք։

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՀԱՐՍՈՒԹԻՒՆ.

Աշոտ՝ իշխանաց իշխան	.	.	859—885	թ.
Աշոտ Ա. թագաւոր	.	.	885—890	»
Մմբատ Ա.	.	.	892—914	»
Աշոտ Բ. Երկաթ	.	.	914—928	»
Աբաս	.	.	928—951	»
Աշոտ Գ. Ողորմած	.	.	952—977	»
Մմբատ Բ.	.	.	977—990	»
Գագիկ Ա.	.	.	990—1020	»
Յովհաննէս. Մմբատ	.	.	1020—1040	»
Գագիկ Բ.	.	.	1042—1045	»
Գագիկի մահը	.	.	—1079	»

Ե.

Հայաստանի անկումը

Սելջուկներ և նրանց արշաւանքները. Դիմադրութիւն և աւերած. Յոյների պարտութիւնը. Խկոնիայի սուլթանութիւնը. Հայաստանի դրութիւնը. Թաթարներ և նրանց արշաւանքները. Հայաստանի վերջնական քայլքայումը:

Առաջին յաջողութիւնից խարախուսուած՝ սելջուկները մի քանի անգամ էլի արշաւեցին Հայաստանի վրայ և այն տեղերը, որոնք առաջին յարձակումներից ազատ էին մնացել, ենթարկուեցին ամենասոսկալի կողոպուտի և աւերածի:

Յոյները վերջ ՚ի վերջոյ սթափուեցան և զօրք ուղարկեցին կայսրութեան արևելեան սահմանները պաշտպանելու. Յոյների հետ միացել էին փոքրաթիւ հայկական և վրացական գնդեր. Սելջուկները դաշնակիցներին յաղթեցին և անարդել առաջ անցան դէպի Փոքր Ասիա: Այդ յաղթութեամբ Հայաստանն ամբողջովին նրանց իշխանութեան տակ ընկաւ և նրանք ահազին կողոպուտով և բազմաթիւ գերիներով վերադառն Պարսկաստան:

1063 թուին սելջուկների գլուխն անցաւ Ալփ-Արտան, մի կատաղի և գազանաբարոյ մարդ։ Նա նոր արշաւանք կազմակերպեց դէպի արևմուտք և ցանկացաւ տիրել այն երկիրներին, որոնց իր նախորդը չէր կարողացել տիրել։ Կրկին անգամ Հայաստան արիւնաներկ եղաւ. քաղաքները հիմնայատակ կործանւում էին, մարդիկ կենդանիների պէս կոտորւում. դա ոչ թէ կոիւ էր երկու հակառակորդների, այլ անզէն ու անպաշտպան մարդկանց կոտորած։ Այլևս երկրի ոչ մի անկիւնը նրա վայրագութիւններից ազատ չմնաց։

Մինչ Ալփ-Արտան իր արշաւանքն առաջ էր տանում դէպի Փոքը Ասիայի խորքերը, 1071 թ. Ոռմանոս կայսը գուրս եկաւ նրա առաջը փակելու. սակայն սոսկալի պարտութիւն կրեց և գերի ընկաւ։ Նա պարտաւորուեցաւ վճարել միանուագ 1.500.000 ոսկի փըսկանք և տարեկան 360.000 ոսկի հարկ։ Այդ պարտութեամբ Փոքը Ասիական գաղութներն ընկան սելջուկների իշխանութեան տակ։ Սելջուկներն աւելի առաջանալով հիմնեցին իկոնիայի սուլթանութիւնը։ Ամբողջ Հայաստանում կոտորածի մատնուած կամ քշուած հայ իշխանների փոխարէն բռնեցին մահմեդական արար կամ սելջուկ մէծ ու փոքը էմիրներ ու բէկեր, այսպէս օրինակ՝ Մանագկերտի, Խլաթի, Արձէ-

շի, Անիի և այլն։ Միւս կողմից հայերի գաղթը մեծամեծ չափերի հասաւ. հայ ազնուականութիւնը գլուխը կորցրած դիմում էր այնտեղ, ուր յոյս ունէր պաշտպանուելու. Նրանց հետևում էր անպաշտպան ժողովուրդը։ Միւնիքից մեծ գաղթականութիւն դուրս եկաւ Գող Վասիլ իշխանի առաջնորդութեամբ. գաղթեցին և Խաչէնի իշխաններն իրանց հպատակներով. նրանք բնակութիւն հաստատեցին Եփրատի կողմերում Կիլիկիայում։ Այսպիսով Կիլիկիան շնորհիւ իր գիրքի՝ այն վայրը գարձաւ, ուր կամաց կամաց կենտրոնացան իրանց անկախութեանը ձգտող հայերը, մինչդեռ նրանց մնացորդներն ապաւինել էին Հայաստանի ամուր տեղերը։ Արցախ, Սասուն, Լոռի, Վասպուրականի լեռնային մասերը և Միւնիք։ Ուրիշ հատուածներ փոխադրում էին Յունաստան, Վրաստան և աւելի հեռաւոր վայրեր։

Տուղթիւբէկի և Ալփ-Արտանի արշաւանքների հետևանքն այն եղաւ, որ Միջերկրական ծովից մինչև Միջին Ասիա, Կովկասեան լեռներից մինչև Պարսից ծոցը և Պաղեստին ու Ասորիք, տրորուեցան սելջուկների ոտքերի տակ։ Ալփ-Արտանի յաջորդ Մելիքշահ մտածեց պետական կազմակերպութիւն մտցնել այդ երկիրների մէջ և օրէնքներ սահմանել։ Նրա օրով արշաւանքները գաղարել էին, և նա քսան տա-

ըուայ իշխանութեան ընթացքում (1072—1092) աշխատեց կենդանութիւն մտցնել այդ մեռած պետութեան մէջ:

Մինչ Մելիքշահ աշխատում էր խաղաղութիւն սփոել իր նախորդների տիրած երկիրներում, Միջին Ասիայում, հէնց սելջուկների հայրենիքում, կազմուում էր մի նոր աւելի հզօր՝ Խուարէզմի պետութիւնը: Նրանք նոյնպէս սելջուկների ցեղակից թափառական ցեղեր էին, որոնք միանալով ժԱրդ գարուց սկսած բաւական հզօրացել և արդէն մտել էին Պարսկաստան. իսկ Խուարէզմից գէպի հիւսիս-արևելք կազմակերպւում էր մի աւելի հզօր ու վայրագ հորդա, դա մոնղոլ-թաթարականն էր:

Ասիական ազգերի այդ շարժումների ժամանակ էր, երբ թաթարական մի ցեղ հալածուելով իրենից աւելի հզօրներից՝ եկաւ Փոքր Ասիա: Նրանց առաջնորդն էր Սուլէյման: Մելիքշահ ներքին ցեղական արիւնհեղութիւնների առաջն առնելու համար՝ նրանց բնակութեան տեղ շնորհեց Իկոնիայի սուլթանութեան մէջ: Յետակայում Սուլէյմանի յաջորդներից Օսման այնքան հզօրացաւ, որ նրա անունով էլ Իկոնիայի սելջուկները կոչուեցաւ օսմանցիներ:

Մելիքշահի մահուանից յետոյ նրա տէրութեան մէջ կազմուեցին բազմաթիւ նորանոր մահմեղական իշխանութիւններ. մինչդեռ հիւ-

սիսային Հայաստանն ընկաւ վրացիների իշխանութեան տակ, մնացած մասերն ընդունեցին Խուարէզմի Մուհամէդ շահի գերիշխանութիւնը: Անտանելի էր նրանց լուծը հպատակների համար. մինչեւսկ Բաղդադի խալիֆը ձանձրացել էր նրանց կամայականութիւններից: Եւ այն միջոցին, երբ արևելքից փոթորկի նման առաջանում էին թաթարները, խալիֆը պատղամաւրութեան միջոցով նրանց մեծ խանից պաշտպանութիւն խնդրեց՝ Խուարէզմի դէմ:

Զինաստանի հիւսիսային կողմում աարածւում է բնութեամբ աղքատ Մոնղոլիան: Երկրի մեծ մասը անապատ է, միւս մասը՝ լեռնոտ: Այդտեղի բնակիչները շատ վաղուց կոչւում էին մի ընդհանուր անունով մոնղոլներ: Նրանք իրանց յարձակումներով շարունակ սպառնում էին Զինաստանի խաղաղութեանը, գրա համար էլ դեռ ևս Քրիստոսից երեք դար առաջ չինացիք իրանց երկիրը բաժանեցին Մոնղոլիայից մի երկար պարսպով: Երկիրը հողագործութեան համար անյարմար է, չինական կուլտուրան մուտք չգործեց այնտեղ, և նրանք մնացին կիսավայրենի խաշնարած դրութեան մէջ: Զմեռը մօտենալիս նրանք իջնում էին անապատները, իսկ գարնանը բարձրանում աւելի հռվասուն լեռները: Նրանք բնակում էին վրաններում. հողի մէջ ցցում էին ճիպուններ, ասլա վրայից ծածկում թաղիք: Վրանները կոր ձև ունէին և հեշտութեամբ կարելի էր քանդել ու դարսել սայլերի վրայ: Բացի քառանիւ սայլերից՝ նրանք ունէին և երկանիւ սայլեր, որոնք վերելց ծածկուած էին: Այդ սայլերին

լծում էին եզներ կամ ուղաքեր: Սայլերի մէջ նստում
էին կանայք և դարսում էին անային իրեղէններ:

Կանայք պարապում էին առեւտով և կատա-
րում էին բոլոր տնային գործերը, իսկ աղամարդիկ
պարապում էին որսորդութեամբ և առհասսարակ գործ
ունէին զէնքի հետ: Նրանք կերակրում էին եղջււ-
րաւոր անասունների և որսի մսով ու կաթով.
Նրանց տմբնասիրելի խմիչքը մատակ ձիու կաթն էր,
որ անուանում էին «կումիս»: Հեռաւոր արշաւանքնե-
րի ժամանակ նրանք շատ դիմացկուն և սակաւաղետ
էին. մի քանի օր շարունակ տաք կերակրի երես չէին
տեսնում, երբեմ միայն բաց էին անում ձիանց
երակը և նրանց արիւնը խմում:

Հետնքին մէծ նշանակութիւն չէին տալիս նրանք
և զրա համար կրուում էին արտասովոր քաջութեամբ.
Վերին աստիճանի տիրասէր և համբերատար էին: Ար-
շաւանքների ժամանակ վերցնում էին ամենաանհրա-
ժեշտ անային կահկարասիքը միայն: Հեծնում էին
իրանց փոքրիկ, մրագավաղ և կատաղի ճիանքը, կող-
քից թուրը կախում, աղեղը թիկունքին՝ նետերով լիքը
կապարձի հետ և մտրակը ձեռքին, Շատ լաւ նետա-
ձիգ էին, զրա համար էլ կոչւում էին և «Նետող-
ների ազգ»: Ճակատամարտի ժամանակ ընդհանրապէս
խուսափում էին ձեռնամարտից, ընդհակառակն սիրում
էին յանկարծակի շրջապատել թշնամուն և նետերի
տարափ տեղալ նրանց վրայ.

Մոնղոլները կարճահասակ էին, ծուռ փոքրիկ ու
խոր ընկած աչքերով և անմօրուս. Երկայն մազերը հա-
ւաքում կալում էին ծոծրակին: Սակայն նրանք ա-
մուռ կազմուածքով էին, երկարակեաց և չափից գուրս
բազմացող. Նրանց մէջ համարեա բացակայում էին
հիւանդութիւնները: Իրանց տղեղ տեսքով ու ըստ

հնչիւն ձիչով սարսափ էին տարածում թշնամու վրայ:
Նրանք կատաղի էին և յարձակում էին կայծակի
նման:

Նրանք բաժանուում էին մանր ցեղերի. արիւն-
հեղութիւնն անպակաս էր նրանց մէջ: Նրանք որևէ
մշակուած կրօն չունէին. իւրաքանչիւր ցեղ հետեւում
էր տարբեր հաւատալիքների, այնուամենայնիւ նկա-
տելի էր բուգդայականութեան, հրէութեան և քրիստո-
նէութեան ազգեցութիւնը. քրիստոնեայ քարոզիչներ
վաղուց մուտք էին գործել. Նրանց մէջ: Արևմուտքի
հարուստ քաղաքների և ճոխ կեանքի մասին վաղուց
զրոյցներ էին պատում մոնղոլների մէջ:

Յեղական կոփեները և առօրինայ զբաղմունքը վա-
ղուց զարգացը էին նրանց մէջ զինուորական ար-
հետու, զրանից յառաջացաւ և թալանելու՝ թոյլին
կողովուելու հակումը: Ուժեղ ցեղը կոտորում և իրեն
էր միացնում թոյլին. այնուհետեւ այզպիսի միացեալ
ուժով արշաւանքներ էին կազմակերպում հարեանների
վրայ, նրանց կոտորում ու թալանում: Թալանը հա-
ւասարապէս բաժանում էին իրանց մէջ: Այսպիսով
ասիսկան այդ թափառականներին միացնող կապը
կողովուան ու թալանն էր, և այդ յատկութիւնները
գարձան նրանց ազգային յատկանիշները: Թալանու-
ելու վատնգն ստիպում էր մարդկանց պաշտպանուել.
զրա համար թալանողներն իրանց գործի յաջողու-
թեան տեսակեալից անինայ կոտորում էին գիմազրող-
ներին՝ պաշտպանուողներին, կամ նրանց զրկում
գիմազրելու հնարաւորութիւնից: Մոնղոլ-թաթարական
վայրէնի ցեղերն իրանց հետ բերին աւեր և կոտորած:
Այդ անհամար, միանզամայն վայրէնի ձիաւոր հոր-
դանների արշաւանքն զոհ գնաց թէ չինական, թէ
հնդկական և թէ արարական կուլտուրան Ասիայում:

Մոնղոլների ցեղապետներից մէկը՝ կատաղի Տեմուչինը 1203 թուին արիւնահեղ ճակատամարտում յաղթեց ու սպանեց իր հակառակորդին և դարձաւ ինը ցեղի առաջնորդ. նա այնուհետև կոչուեց Չինգիզխան (մեծ խան) և իր մայրաքաղաքն ընտրեց Կարակորում՝ Բայկալեան լճի ափին:

Չինգիզ խան իր հորդաներն ուղարկեց ամեն կողմ երկիրներ նուաճելու. Այդ կատաղի վայրենիները թալանի տենչով բռնուած սարսափելի անգթութիւններ գործեցին. նրանց անցած ճանապարհն ամայանում էր. հարուստ քաղաքները հողի էին հաւասարւում. բնակիչները անխնայ սրի էին մատնում. Նրանց գաղանութիւնների լուրը սարսափահար էր անում հեռաւոր վայրերի բնակիչներին. Միլիոնաւոր մարդիկ կոստրուեցան միայն Չինաստանում և Հնդկաստանում. այդ երկիրների կուլտուրան միանգամայն մեռաւ. կործանուեց հզօր Խուարէզմի պետութիւնը և նրա շահը՝ Մուհամէդ փախչելով հեռաւոր տեղեր՝ յետին թշուառութեան մէջ մեռաւ. Մուհամէդի որդի Զալալէդդին փախաւ Հայաստան և ցանկացաւ սելջուկների երկիրներին տիրել. Նրա առաջը գուրս եկան վրացիները և հայերը՝ Օրբէւեան իշխանների առաջնորդութեամբ՝ սակայն պարտուեցան: Զալալէդդին իր արշաւանքը շարունակեց դէպի

իկոնիա. սակայն այդտեղ կրկին միացեալ ուժերով գուրս եկան նրա առաջ հայերը, վրացիները և Իկոնիայի սուլթանը: Զալալէդդին յաղթուեց և փախչելով կորդուաց լեռները մեռաւ. Այնուհետև Հայաստան ամբողջովին ենթարկուեց մոնղոլ-թաթարների արշաւանքին:

1235 թուին մոնղոլները Հայաստան եկան փոթորկուող մրրկի նման՝ ճանապարհին ամեն բան աւերելով ու ոչնչացնելով: Պարսկաստանն ու սահմանակից երկիրները նուաճելուց յետոյ կասպից ծովի հիւսիս-արևելմտեան ափերով մտան Վրաստան և Աղուանք: Այդ երկիրները քարուքանդ անելուց յետոյ մի առ ժամանակ իրանց ձիերին հանգիստ տուին Մուղանի մշտադալար և բերբի հարթափայրերում: Այնուհետև մոնղոլներն այդ դաշան ընտրեցին իրանց մշտական հանգստափայր:

Տասնեակ տարիներ Հայաստանը ենթակայ էր նրանց աւերածին: Երկրի տէրերը մասամբ յանկարծակիի եկած մոնղոլների ահաւոր ու ուժգին յարձակումից, մասսամբ էլ իրանց անուժ համարելով ոչ մի դիմադրութիւն ցոյց չտուին, և նրանք անարգել երկրի մի ծայրից միւս էին անցնում զանազան ուղղութեամբ, թալանում ու աւերում ամեն բան: Այդպէս պարբերաբար գարնան դուրս էին գալիս երկիրներ նուաճելու, իսկ ձմեռը վերադառ-

նում Մուղան: Հայկական քաղաքակրթութեան հետքն անգամ չմնաց. ժողովուրդը սարսափահար փախչում էր անմատչելի լեռները կամ գաղթում հեռաւոր վայրեր: Այդ երկրում, որտեղ տասնեակ տարիներ կեանքի ու գոյքի ապահովութիւն չկար, կուլ'տուրական կեանք ստեղծելու մասին մտածել անգամ անկարելի էր. իսկ մանղոլ եւ սելցուկ թարարները բերել էին միայն մահ եւ աւերած: Եւ երկրում մնացած հայն ստիպուած էր երկար դարեր ապրել այդ անկուլ'տուրական վայրենիների հպատակութեան տակ. նա կամ պէտք է ինքն էլ վայրենանար, կամ պէտք է զոհ գնար նրա վայրագութեանը: Մոնղոլներն ամբողջ երկիրն աւերելուց յետոյ հարկի տակ գրին: Ակզբում նրանք խլում էին պատահած ձիերն ու թանկապին իրեղէնները. հայերի համար անհնարին դարձաւ ձի կամ ջորի պահելը. թաթար զօրապետները, երբ ձի էին գտնում, իրանց նշանով խարանում էին (գամզում) նրա որեւէ մի անգամը, որպէսզի կարեսը գէպքում տիրոջից պահանջեն: Նրանք մտնում էին աները և ինչ որ դուր էր դալիս, վերցնում էին:

Առաջին անգամ Մանգո մեծ խանը աշխարհագիր անել տուաւ Հայաստանը և ըստ մարդաթուի հարկ նշանակեց բնակիչների վրայ: Տասը տարեկանից սկսած ամենքի անուններն

արձանագրեցին՝ բացի կանանցից, և ամենքից պահանջեցին նշանակուած հարկը. ով չքաւութեան պատճառով չէր կարողանում վճարել, երեխաներին էին խլում, իսկ եթէ թագնուում էր, բոնում սպանում էին. շատ տեղեր հարկահաններին ընկերանում էին գաւառների կալուածատերերը, որպէսզի օգտուեն: Երկրի բոլոր հարստութիւնները սեպհականնեցին. աշխատանքի բոլոր աղբիւրները չքացան և ժողովուրդն ընկաւ յետին չքաւորութեան մէջ: Սակայն ընկաւ յետին չքաւորութեան մէջ: Սակայն նարկահանները եկեղեցուց հարկ չին սաւնում, որպինեսեւ մեծ խանը իրաւունք չէր տուել:

Իւրաքանչիւր անձ պարտաւոր էր վճարել հարիւր լիտր ցորեն, յիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ, երեք տոպքակ, երկու չուան, քսան սպիտակ (գրամ), մի նետ, մի պայտ, քսան անտառնից մէկը՝ բացի ՚ի հարկէ բոնութեամբ յափշտակածներից: Այդպիսի տնտեսական հարուածն էլ մի կողմից ստիպեց ազգաբնակութեանը թողնել Հայաստանն ու ցըռել որից յետոյ երկիրն ընկղմուեց խոր տպիտութեան մէջ:

Մոնղոլների աւերածութիւնները լրացրեց կանկթամուր, որ Զինգիզխանի շառաւիղներից մէկն էր: 1387 թուից մինչև 1405 թ. Հայաստան ենթարկուեցաւ նրա վայրագութեանը: Մարդիկ կենդանիների նման կոտորւում էին

նրա վայրենի հրոսակների առաջ. նորոգուած քաղաքները հիմնայատակ կործանում էին:

Սյոպիսով ԺԱ. դարուց սկսած Հայաստանն անընդհատ ենթակայութեան էր կոտորածների:

Ամբողջ արևմտեան եւրոպայի և առաջաւոր Ասիայի կուլտուրան միջնադարեան շրջանի վերջերին զոհ գնաց սելջուկ թուրքերի և մասուղով թաթարների արշաւանքներին. մի քանի ազգեր երկար դարեր կրելով նրանց լուծը՝ մնացին տգիտութեան մէջ: Այդ ազգերից մէկը հայերն են, որոնք մինչեւ այսօր էլ գեռ հեծում են նրանց բոնապետութեան տակ: Նորինիւ նըրանց Հայաստան միանգամայն բայխայուեցաւ:

Բացի այդ արտաքին աննպաստ հանգամանքներից՝ Հայաստանի քայլքայմանը նպաստեցին ու մի շարք բնական պատահարներ, պարբերաբար կրկնուող երկրաշարժն ու հրաբուղիները սոսկալի աւերածութիւններ էին գործում. այսպէս ԹՇ-րդ դարում երկրաշարժից կորժանաւց Դուին և իր փլատակների տակ թաղեց հազարաւոր մարդիկ. Ժ-րդ դարում սաստիկ երկրաշարժից մեծ վնասներ կրեց հարաւարեւմտեան Հայաստան. շատ շինութիւններ բոլորովին փլեցին, ժայռերը պատուեցին, շատ անջրդի տեղերում աղբիւրներ և ջրեր բացուեցան, դաշտերը ծածանում էին, լեռները կարծես իրար ողջունում էին. փոշու նման ծուխ էր բարձրանում և լցնում օդը. քաղաքների, գիւղերի և ազարակների շինութիւնները տապառութիւն մեռած կամ կիսամեռ բնակիչներին իրանց փլա-

տակների տակ էին առնում... Եւ այսպէս շարունակւում էր հօթն ամիս: ԺԱ.-րդ դարում ահաւոր և սոսկալի երկրաշարժ պատահեց և գողաց ամբողջ տիեզերքը... շատ հկեղեցիներ խախտուելով փլուեցին, երկրը պատուեց և մարդիկ ընկղմուեցան անդունդի խորքը. մի քանի օր նրանց աղաղակն ու ճիչը լուսում էր: ԺԲ.-րդ դարում կրկնուեցին սաստիկ երկրաշարժեր. երկիրը գողում էր մարդկանց աղիողորմ ձայների հետ, որոնք լսում էին լեռներից և փլուած ժայռերից. օրը կիրակի էր. կարծում էր՝ թէ աշխարհքի վերջն է:

Հայաստանի լեռներից շատերը հրաբխային են և երբեմն-երբեմն սոսկալի չափերով գործել են. նրանց արտավիժմանը զոհ են գնացել հազարաւոր մարդիկ: Այդ հրաբխային վիժուածքներից մէկի մասին հետեւալն է պատմւում. «Յետոյ յանկարծ վերելից Աստուծոյ պատուհասը հասաւ և ամբողջ գաւառը քառասուն օր խաւարը պատեց. սաստիկ շարժմունք և զղրդոց պատահեց. երկիրը սարսափելի դողալով եռում էր. անդունդներից մինչեւ վերև էր բարձրանում և ծովի ալիքների պէս ներքեւ թափւում (լաւան). լեռները տապալւում էին, ժայռերը հիմքից խախտում. անելն ու գեղեցիկ ապարանքները բնակիչների գերեզման էին գառնում. ազբիւրները խցում, գետերը կորչում էին և ամեն տեղ երկիրը ծածանում էր. լեռների գագաթներից և անդունդների խորքերից լսում էին մարդկանց ձայներ, որոնք «վայ» էին կանչում. մինչեւ 10000 կենդանի մարդ ընկղմուեցան» (735 թ.):

Պակաս աւերածութիւններ չեն գործում և տարափոխիկ հիւանդութիւնները. Զ-րդ դարում հարիւր հազարաւոր մարդիկ զոհ գնացին ժամատախտին: Այդ-

պիսի հիւանդութիւն կրկնուեց արաբական շրջանի
արշաւանքների և յետակայ կոտորածների շրջանում:
Արշաւանքներից ստիպուած շատ անգամ ազգաբնա-
կութիւնը քաշում էր լեռները ու երկիրը մնում էր
անմշակ. դրա հետևանքը լինում էր երբեմն-երբին
կրկնուող սովը, որը պակաս զոհեր չէր տանում. սով
էր պատահում և երաշտեց ու Պարսկաստանից յաճա-
խակի թռչող մարախից.

Հ.

Կ ի լ ի կ ի ա.

Դիբքը, կլիման և ազգաբնակութիւնը. Յարաբե-
սութիւն եւրոպայի հետ. Հայերի գաղթը և հայ իշխա-
նութիւններ. Խաչակրաց արշաւանքը և նրա հետե-
ւանքները:

Միջերկրական ծովի հիւսիսային ափից ձըգ-
ուում է դէպի Կապադովիլիա և Փոքր Հայք մի
լեռնաշղթայ, որ կոչում է Տաւրոսեան կամ
Տօրոսեան: Նրա հիւսիսային շարունակութիւնը
կոչում է Անտիտօրոս: Միջերկրական ծովի ա-
րևելեան կողմում լեռնաշղթան բաժանուում է
մի քանի ճիւղերի, որոնցից մէկը տարծուում է
դէպի հարաւ և յանգում է ծովին: Այդ վեր-
ջինն էլ կոչում է՝ Ամանոս: Տաւրոսեան լեռ-
նաշղթան հիւսիսից և Ամանոսը արևելքից Մի-
ջերկրական ծովին են սեղմում ցամաքի մի
կտոր, որ շատ հնուց յայտնի էր Կիլիկիա անու-
նով: Այդ բնական պատուալիները մի կողմից
կիլիկիայի յարաբերութիւնը դժուարացնում են
Ասիայի մնացած մասերի հետ, միւս կողմից
երկրի հիւսիսարևելեան մասը դարձնում են

լեռնային և անմատչելի, մինչդեռ ծովին կպած մասն իր հարթավայրերով թէ յարմար է ընակութեան համար և թէ ազատ յարաբերութիւն է պահպանում ծովի միջոցով Եւրոպայի հետ: Շնորհիւ այդ հանգամանքի՝ Ասիայի այդ փոքրիկ մասն աւելի շուտ ենթակայ էր Եւրոպայի, քան թէ Ասիայի ազգեցութեանը:

Կիլիկիան Ասիայի հետ յարաբերութիւն ունի Տաւրոսեան լեռնաշղթայի մէջ բացուած կիրճերով, իսկ արևելքից նրան սահմանակից է Եփրատի հովիտը:

Կիման լեռնային մասում խիստ է. ձմեռը ձիւնի պատճառով յարաբերութիւնն այնտեղ զըժուարանում է. մինչդեռ դաշտային մասում տիրում է մեղմ ձմեռ. Միջերկրական ծովի տաք գոջորշիներն ազատ մտնում են այնտեղ: Լեռները հարուստ են արօտներով, անտառներով և հանքերով: Շնորհիւ հիւսիսից դէպի ծովը հոսող Պիւռամոս, Սարոս, Կիդնոս, Կալկադնոս և այլ մանր գետերի դաշտային մասը լաւ ոռոգուած է. աճում են բամբակ, ծխախոտ, նարինջ, կիտրոն, ձիթենի, թթենի, խաղող, հացաբոյսեր և այն: Ընդհանրապէս երկրի այդ մասն աչքի է ընկնում իր պտղաբերութեամբ: Կիլիկիայի ծովափնեայ քաղաքները շատ հնում ծառայում էին իբրև մթերանոցներ և բոպացի և ասիացի վաճառականների համար: Այդ

քաղաքներից նշանաւոր են. Տարսոն, Այաս, Սելեկիա, Մամեստիա և ուրիշները: Բացի վաճառականներից ծովափնեայ վայրերում թագնըլում էին և ծովահէնների խմբեր՝ վաճառականական նաւերի վրայ ծովային յարձակումներ գործելու: Միջին դարում Կիլիկիան ևրոպական պետութիւնների համար մի տեսակ աքսորավայր էր դարձել: Ը. և Թ. դարերում յանցաւոր համարուած քրիստոնեաներն աքսորում էին երուսաղէմ՝ ապաշխարելու. Նրանք յաճախ բնակութիւն էին հաստատում Կիլիկիայում: Կիլիկիայի և Եւրոպայի մէջ յարաբերութիւն պահպանում էին և այն բազմաթիւ ուխտաւորները, որոնք շարունակ դիմում էին սուրբ վայրերը: Նրանց հետ երոպական քաղաքակրթութիւնը փոխադրւում էր Ասիայի այդ մասը:

Շնորհիւ վաճառականութեան այնտեղ բընակութիւն էին հաստատել յոյներ, ասորիներ, արաբներ, հրէաներ և հայեր: Կիլիկիան գտնւում էր Բիւզանդիայի իշխանութեան տակ:

Հայերի գաղթը դէպի Կիլիկիա մեծացաւ ԺԱ-ՐԴ գարսւց սկսած:

Քաղաքական աննպաստ պայմաններն ստիպում էին հայերին շարունակ դիմել դէպի արևմուտք՝ քրիստոնեայ յոյների հովանաւորութեան տակ ապրելու: Ասիական ազգերի արշաւանքների միջոցին դէպի արևմուտք դիմում

էին ոչ միայն քաղաքացիք՝ վաճառական և արհեստաւոր դասակարգերը, այլև երկրի ազնուականութիւնն իրենց հպատակ գիւղացիութեամբ և զինուած խմբերով։ Հայ իշխաններն իրենց կալուածները փոխանակում էին յունական գաւառների հետ, այսպէս օրինակ՝ Սենեքերիմ Արծրունին Վասպուրականի փոխարէն ստացաւ Սերաստիան իր շրջակայքով. Կարսի վերջին թագաւոր Գագիկ Բագրատունին ստացաւ Ծամընդաւն իր գիւղերով. Անիի Բագրատունեաց վերջին թագաւոր Գագիկ Բ. Շիրակի փոխարէն ստացաւ Պիզուն իր շրջակայքով։ Դրանց հետեւ շրջին մի շարք մեծ ու փոքր իշխաններ։ Բիւզանդիայի կայսրները նպաստում էին այդ գաղթին. նրանք արտօնութիւններ և պատուանուններ էին շնորհում նրանց։ Այսպիսով հայ կեանքը կամաց կամաց փոխադրուեց Հայաստանից դէպի Փոքր Ասիա։

ԹԱՐԴ գարու վերջերին Կիլիկիայում նշանաւոր էին Գող Վասիլ Սիւնեաց իշխանը Եփրատի կողմերում (Քեսունի) և Գանձակի Օշին իշխանը Լամբրոնում։ Դրանց շուրջն էին խմբուած հայ թագաւորադուն շատ երիտասարդներ։

Այսպիսով Կիլիկիայում միաժամանակ զարդանում էր թէ ասիական և թէ երոպական կուլտուրան։ Եւրոպական կուլտուրայի մուտք գործելուն մեծ չափով նպաստեցին Խաչակրաց արշաւանքները։

Հոռվմի պապերը վաղուց մտածում էին մի ընդհանուր կաթոլիկ պետութիւն ստեղծել, որի մէջ մանէին երոպական և ասիական քրիստոնեայ ազգերը. սակայն երոպական ազգերի մրցումը և արևելեան եկեղեցու անհաշտ վերաբերմունքը դէպի կաթոլիկութիւնը՝ խանգարում էին նրանց։ Եւրոպական բոլոր քրիստոնեաները կաթոլիկ եկեղեցուն էին պատկանում. պապի հեղինակութիւնը մեծ էր նրանց աչքում։ Եւ այդ հանգամանքներից ամենալայն չափով օգտուեց Հոռվմի Ուրբանոս Բ. պապը։ Նա առաջարկեց ազատել Քրիստոսի գերեզմանը մահմեղականներից. Մինչ երոպական պետութիւններն աշխատում էին առաջնութիւնը խլել երարից, միւս կողմից առաջին հարուածները տեղում էին Բիւզանդական պետութեան գըլխին, որն այնքան ատելի էր Հոռվմի պապին։

Թէև այդ արշաւանքներն Ասիայում չկարողացան քաղաքական գրութիւնը փոխել, սակայն խոշոր ազգեցութիւն ունեցան երկու աշխարհների՝ Ասիայի և Եւրոպայի կուլտուրաների զարացցման վրայ։ Փոխադրձ ազգեցութեամբ կեանքի շատ երևոյթներ փոփոխուեցան։

Կիլիկիան գտնուում է այն ճանապարհի վրայ, որտեղով պէտք է անցնէին արշաւանքին մասնակցող երոպական զօրամասերը, և դրա համար երոպական քաղաքակրթութեան անմիջական ազգեցութիւնը երևան եկաւ Կիլիկիայի հայերի կեանքում։

տոակել. ուղարկուած վարձկան զօրքերն էլ միւս
կողմից էին կեղեքում ժողովրդին, և երկիրը
մատնուեց անիշխանութեան։ Դժբաղդ ազգա-
քնակութիւնն ինքն սկսեց ինքնապաշտպանու-
թեան դիմել. գիւղացիք թողեցին իրանց բնա-
կութեան վայրերը, զինուած աւագակային խըմ-
բեր կաղմեցին և քաշուեցին լեռները. քաղա-
քացիք ամեն ըոպէ յարձակման հնժարկուելու
վտանգի մէջ էին և մտածում էին որևէ ուժե-
ղի պաշտպանութեան տակ մտնել. ամեն տեղ
բոնութիւնն էր թագաւորում։

Այդպիսի պայմանների մէջ էր Փոքր Ասի-
ան, երբ 1080 թուին Բագրատունեաց վերջին
թագաւոր Գագիկ Բ-ի մօտիկ ազգականը՝ Ռու-
բէն, օգտուելով տիրող անիշխանութիւնից՝ մի-
քանի զինուած կուսակիցներով քաշուեց Տաւ-
րոսեան լեռները և բնակութիւն հաստատեց
Բարձրերդի շրջակայքում։ Ռուբէնի նպատակն
էր զէնքի ուժով մի անկախ իշխանութիւնն
ստեղծել այդ երկրում։ Իր նպատակն իրագոր-
ծելու համար կային նպաստաւոր պայմաններ։
Կիլիկիայում բազմաթիւ հայ գաղթականներ
կային, որոնք կարող էին նպաստել նրա հօօ-
րանալուն. այլև կային մի շարք հայ իշխաններ։
Այդ իշխաններն ունէին իրանց ամրոցը, զօրքը,
հպատակ գիւղացիութիւնն ու կալուածները։
Քանի Բիւղանդական կառավարութիւնն

թ.

Ռուբինեան հարստութիւն.

I.

Ռուբէն (1080—1095) և նրա յաջորդները. Ռու-
բինեան իշխանների ձգտումը. Յոյների սթափութլը.
Մաքասման շրջան. Թորոս (1145—1168). Հայերի
կեանքի պայմանները։

ԺԱ-ՐԴ դարու վերջերին Բիւղանդակայում
իրար յետեից խոռվութիւններ էին բարձրանում՝
չնորհիւ կառավարութեանը մօտ կանգնած ան-
ձանց։ Դրսից տեղացող յաճախակի յարձակում-
ները մի կողմից՝ զան իրար ձեռքից լսելու
տենչով բոնուած զօրապետների դաւադրութիւն-
ները միւս կողմից՝ ուժասպառ էին անում եր-
կիրը։ Այդ դրութիւնից ամենից շատ օգտում
էին սելջուկները, որոնք թէւ նոր էին հաստա-
տուել Փոքր Ասիայում, սակայն համարեա յու-
նական երկիրներին ամբողջովին տէր էին դար-
ձել։ Բիւղանդական կառավարութիւնը մերժեց
Ալփ-Արալանի դրած հարկը վճարել և դրա հա-
մար սելջուկներն սկսեցին ամեն կողմ առպա-

զբաղուած էր արտաքին և ներքին թշնամիներով, Ռուբէնին և նրա երկու յաջորդներին յաջողուեց իրագործել իրանց ծրագիրը՝ առանց խոշոր ընդհարումների. նրանք կամաց-կամաց քշեցին յոյն ազգաբնակութիւնը և նրանց տեղերը տուին հետզհետէ իրանց շուրջը հաւաքուող հայերին: Տիրող բռնութիւններից ստիպուած՝ գիւղացիութիւնն աշխատում էր որիէ իշխանի պաշտպանութեան տակ լինել: Այս հանգամանքը մանաւանդ շատ նպաստեց Ռուբէնի յաջորդների հզօրանալուն:

Ռուբէնի յաջորդ Կոստանդնի ժամանակ (1095—1100) տեղի ունեցաւ առաջին Խաչակրաց արշաւանքը: Այդ արշաւանքը մի կողմից ուղղուած էր մահմեղականների դէմ, միւս կողմից նպաստում էր Բիւղանդիայի թուլանալուն. երկու դէպքում էլ նպաստաւոր էին Ռուբէննեանների համար: Կոստանդին թէ պաշարով և թէ զօրքով օգնեց երոպացիներին և այդպիսով մտերմութիւն հաստատուեց Ռուբէննեանների և նրանց մէջ:

Խրախուսուած այդ բանից՝ Կոստանդնի յաջորդը՝ Թորոս (1100—1123) սկսեց իր երկիրն ընդարձակել դէպի հիւսիս: Իկոնիայի սեղուկներն առաջին անգամ ուշագրութիւն դարձրին Ռուբէննեանների յառաջադիմութեան վրայ և մտածեցին յարձակումներով խանգարել նը-

բանց. սակայն Թորոս, որ ձեռքի տակ բաւականին ոյժ ունէր, Գող Վասիլ իշխանի օգնութեամբ նրանց հալածեց և ազատ սկսեց երկիրն ընդարձակել հարևան յոյն մանր իշխանների հաշուին:

Ռուբէննեանների երկիրն այժմ շփուռմ էր մի շարք մեծ ու փոքր իշխանութիւնների հետ. հիւսիսից՝ սեղուկների, արևելքից՝ նոր հաստատուած խաչակիրների (Մարաշի և Անտիոքի), հարաւից՝ Լամբրոնի, որի իշխանը հայ էր: Դրանցից սեղուկներն ու Լամբրոնի տէրերը միանգամայն թշնամաբար էին վերաբերում դէպի նորեկ Ռուբէննեանները և ամեն կերպ աշխատում էին խանգարել նրանց. իսկ խաչակիրներն անտարբեր էին, կամ երբ ձեռնուու էր՝ շահ էին սպասում, բարեկամանում էին, իսկ հակառակ պարագայում՝ թշնամանում: Սակայն այդ փոքրիկ թշնամինների հետ կային և երկու հզօր թշնամիններ՝ Բիւղանդական կայսրութիւնը և Ասորիքի ու Եփիպտոսի մահմեղական իշխանութիւնները: Քանի խաչակիրների դէնքերն Ասիայում ուղղուած էին մահմեղականների դէմ, նրանք զբաղուած էին միմիայն իրանց երկիրները պաշտպանելով: Իսկ Բիւղանդիան էինց որ ազատուեց խաչակիրների վտանգից, դէնքերն ուղղեց Ասիայի իր թշնամինների դէմ: Իկոնիայի սեղուկներին և խաչակիրներին յաղ-

թելուց յետոյ՝ Յովհաննէս Կոմինոս իր ուշադրութիւնը դարձրեց Ռուբինեան իշխանութեան վրայ:

Թորոսի յաջորդ Լևոն (1123—1136) անկարող եղաւ այդպիսի հզօր թշնամուն դիմադրել և անձնատուր եղաւ: Նա իր երկու որդոց հետ գերի տարուեցաւ Բիւզանդիա և այդպիսով առ ժամանակ կիլիկիայում Ռուբինեանների իշխանութեանը վերջ արուեց:

Սակայն յոյները քշելով Լևոնին չկարողացան վերջ տալ այդտեղ խմբուած հայերի ձըգտումին: Յոյների հայերի դէմ հանած կրօնական հալածանքը և դրա հետևանք տնտեսական ճնշումը խորն ատելութիւն էր ստեղծել նրանց մէջ և մի թէկուզ փոքրիկ նալաստաւոր հանգամանք էր հարկաւոր, որպէսզի կրկին երևան գար ժողովրդի անկախութեան ձգտումը:

Այդ ձգտումը երևաց Յովհաննէս Կոմիննոսի յետակայ արշաւանքների ժամանակ: Երբ կայսրն զբաղուած էր սելջուկներին յետ մղելով, մի պատահարից մեռաւ և գերութեան մէջ մեռած Լևոնի Թորոս որդին օգտուելով յոյների անյաջողութիւնից՝ փախաւ բանակից ու ապաւինեց իր հայրենի լեռները: Ժողովուրդը ցնծութեամբ ընդունեց նրան և խկոյն խմբուեցին նրա դրօշակի տակ: Նա կրկին նուաճեց իր հայրենի երկիրը և ապա պատրաստուեց դիմա-

դրելու յոյներին, որոնք լուրջ պատրաստութեամբ վճռեցին ոչնչացնել Փոքր Ասիական իշրենց այդ նոր թշնամուն: Եւ սկսուեց մի երկար մաքաման շրջան, որ տեսք մօտ քսան տարի:

Յոյները մէկը միւսի յետևից բանակներ էին ուղարկում Թորոսի վրայ, սակայն Թորոս որ զինուորական արհեստի մէջ վարժուել էր յունական բանակում, շնորհիւ իր պատերազմական հմտութեան և երկու եղբայրների ու գէպի յոյներն ատելութեամբ զինուած հայերի կարողացաւ յաջողութեամբ դիմադրել, մինչև կայսրն անձամբ արշաւեց նրա վրայ: Այն ժամանակ խաչակիր իշխանների միջարդութեամբ կայսրը հաշտուեց Թորոսի հետ: Թորոս ընդունեց Բիւզանդիայի գերիշխանութիւնը, խոստացաւ հարկ տալ, որի համար կայսրը բերդապահ դօրք թողնելով վերադարձաւ:

Սակայն գա վերջնական խաղաղութիւն չէր հայերի և յոյների մէջ, որովհետև կրօնական ատելութիւնից դրդուած նորանոր արիւնհեղութիւններ պատահեցին:

Թորոսի մահուանից յետոյ նրա երկրում երկպատակութիւններ ծագեցին, որովհետև նա չափահաս որդի չունէր: մինչև որ իշխանութիւնն անցաւ նրա եղբօր որդուն՝ Ռուբէնին (1175—1185):

Առաջին Ռուբէնից սկսած մինչև այս վերջին Ռուբէնն իշխանները ճիշտ նոյն յարաբերութեան մէջ էին ժողովրդի հետ, ինչպէս մի ժամանակ Հայաստանում նախարարները։ Նըրանք իրանց նուաճած երկրի տէրն էին. զիւղացիութիւնը կապուած էր հողի հետ. զինուորական ոյժի ներկայացուցիչն իշխանն էր։ Հպատակներն իրանց տանուաէր իշխանին «պարոն» էին կոչում։ Զօրքը զինավառում էր իշխանի հաշուխն. նրա զօրքի քանակը կախուած էր իր նիւթական միջոցներից։ Երկրում կային ազատներ և ռամիկներ՝ բացի հոգեորակականներից։ Իշխաններն աշխատում էին բազմացնել թէ բերդերի, որոնք երկրի պաշտպանութեան համար կարեոր էին, և թէ վանքերի թիւը։

Վանքերից նշանաւորներն էին Սև լեռան վրայ գտնուածները, որտեղ զարգանում էր վանական կեանքը։ Կիլիկիայի վանական կեանքը բաւականաչափ տարբերում էր Հայաստնի վանական կեանքից։ Մինչդեռ բուն Հայաստանի վանականներն աչքի էին ընկնում իրանց խըտակեաց կեանքով, Կիլիկիայում ընդհակառակն նրանք բաւականաչափ ազատամիտ էին։ Բացի հայկական վանքերից՝ Կիլիկիայում կային յունական և յետակայում նոյնպէս կաթոլիկ միաբանութիւններ։ Հայ վանականներն անընդհատ շփման մէջ էին նրանց հետ.

մանաւանդ իրանց կեանքի եղանակով ու մտածողութեամբ հետևում էին նրանց. Կրոպական գրականութիւնն ու լեզուները մուտք գործեցին նրանց մէջ. շատ վանականներ ազատ տիրապետում էին ֆրանսերէնին և յունարէնին. մամնակցում էին նրանց կրօնական վիճաբանութիւններին, աշխատում էին կրթուած երեւալ և չպախարակուելու համար՝ նրանց ձեւերն էին ընդունում։

Ահա այդ է պատճառը, որ արևելեան և արևմտեան հայ հոգեորակականների մէջ պայքար սկսուեց կրօնական հարցերի շուրջը, որ բաւականաչափ զբաղեցրեց նրանց և որոշ չափով նպաստեց նրանց մտաւոր զարգացմանը։

Արևելեան հոգեորականները մեղադրում էին արևմտեան իրանց պաշտօնակիցներին այլազդիների նկատմամբ ցոյց տուած կրօնական անտարբերութեան մէջ, դրանք միանգամայն համարելով հայ Լուսաւորչական եկեղեցու հոգուն հակառակ. իսկ վերջիններս իրանց վարմունքն արդարացնում էին նրանով, որ իրանք շարունակ շփւում էին օտարագաւան հոգեորականների և հրոպացիների հետ, որոնց բարեացակամ վերաբերմունքից էր մասամբ կախուած հայերի անդորր կեանքը Ասիայի այդ հեռու ծայրում։

Վանքերում զարգանում էր և զրելու ձեւը. արտագրում էին եղած զբքերը և նորերը գըրում ու զարգացնում մանրանկարչութիւնը։

III.

Առաջն Ա. թագաւոր Կիլիկիայի (1185—1219). Զարգացման շրջան. Խաչակրաց նոր արշաւանքը և Լևոնի յարաբերութիւնը նրանց հետ. Բարենորոգութիւններ. Եկեղեցիների միութեան խնդիր և լատինականութիւն:

Ռուբէն ձանձրանալով աշխարհային կեանքից 1185 թուին հրաժարուեց գահից և առանձնացաւ վանք: Իշխանութիւնն անցաւ Եղբօրը՝ Լևոնին: Լևոն խելացի, քաղաքագէտ և ընդունակ մարդ էր. նա կարողացաւ տիրող նստաւուր պայմաններից օգտուել. իր իշխանութիւնը տարածելով ամբողջ Կիլիկիայի վրայ՝ Երկիրը ծաղկած դրութեան հասցըեց:

ԺԲ-րդ դարու կիսերին հզօրացան Ասորիքի մահմեդականները և տիրեցին այն քաղաքներին, որտեղ երողացի խաչակիրները նախորդ արշաւանքներից յետոյ իշխանութիւններ էին հիմնել. Նրանց անկմանը միւս կողմից էլ նպաստեցին յոյները: Նոյն դարու վերջերին լուր ստացուեց Եւրոպայում, որ Սալահէդդին սուլթանը Երուսաղէմ խլել է քրիստոնեաների ձեռքից: Նոր խաչակրաց արշաւանք կազմուեց, և այս անդամ արշաւանքի գլուխն անցաւ Գերմանիայի Ֆրիդրիկոս Բարբարոսա կայսը:

Յոյներն այդ արշաւանքի լուրը լսելով գաղտնի դաշնադրութիւն կապեցին սելջուկնե-

րի հետ, այնուամենայնիւ խաչակիրները երկու հակառակորդներին էլ զգալի հարուած հասցնելով՝ հասան Կիլիկիայի սահմաններին:

Բարբարոսա կայսը ուտեսատի պաշար խընդրեց «Լեռների թագաւորից», որի փոխարէն խոստացաւ նրան թագաւորական թագ շնորհել: Լևոն անմիջապէս առատ պաշար ուղարկեց խաչակիրներին, իսկ ինքը կաթողիկոսի հետ գնացին նրանց գիմաւորելու: Սակայն երբ Լևոն հասաւ խաչակիրների բանակը, կայսըն արդէն մի պատահարից մեռել էր, որի պատճառով Լևոնի թագավորութիւնը վեց տարի յետաձգուեց: Այդ ժամանակամիջոցում Լևոն աւելի ևս մաերմացաւ երոպացիների հետ, յարաբերութիւն սկսեց Հռովմի պապի հետ և նոյն իսկ խոստացաւ, Եկեղեցիների միութեան գործը գլուխ բերելու համար, որոշ զիջումներ անել: Լևոնը կարողացաւ նուաճել ամբողջ Կիլիկիան և 1198 թուին Գերմանիայի կայսեր պատգամաւորը և պապի նուիլսակը Լևոնին թագ և առիւծանշանդրութիւնն: Նա անուանուեց «Թագաւոր Հայոց Կիլիկիայի», որպիսի տիտղոս այնուհետև կրում էին նրա յաջորդները: Յունաց կայսը նոյնպէս նրան գրաւելու համար թագ ուղարկեց: Եւրոպացիների այդ վերաբերմունքը շատ էր ոգեսրում Լևոնին, դրա համար նա ամեն կերպ աշխատում էր այդ բարեկամութիւնը

հաստատուն պահել. նա ամեն բանով ցանկացաւ նմանուել երոպացիներին: Պալատում մըտցրեց երոպական կարգեր և պաշտօններ. երոպական միապետական կառավարութիւն մտցրեց երկրում. բոլոր իշխանները՝ թէ կալուածատէր և թէ պաշտօննեայ կախումն ունէին թագաւորից. երկիրն ամբողջովին պատկանում էր նրան. իւրաքանչիւր «պարոն» (կալուածատէր իշխան) ենթարկելում էր նրա անմիջական իշխանութեանը: Հայ իշխանների մէջ երոպական կարգերն արմատացնելու նպատակով՝ շատ ասպետների կալուածներ չորհեց և պալատում պաշտօններ տուաւ: Ժողովուրդը դասակարգերի բաժանեց. ազնուականներ և առպետներ, քաղաքացիներ և գիւղացիներ: Գիւղացիները հողի հետ կապուած էին. նրանք մի կալուածատիրոջից անցնում էին միւսին:

Արքունիքում կար «թագադիր հայոց», «երկրորդ արքայի», «գունդստապլ» (զօրքի սպարապետ), «մարածախտ» (նրա, օգնականը), «ջամպլայն» (սենեկապետ) «ջանցլեր» (արքունի ատենապիր), «պրոկամոս» (գանձերի հազարապետ), «սինեջալ» (արդարադատութեան նախարար):

Դատարանները բաժանւում էին մի քանի կարգի. բարձրագոյն դատարանն արքունի ատեանն էր, որին նախագահում էր ինքը՝ թա-

գաւորը, կամ նշանակած «աւագ պարոնը». նըրանից յետոյ Սսի արքեպիսկոպոսի ատեանն էր, իսկ ամենից վերջը՝ ստորին դատարաններն էին:

Գիւղացիք վճարում էին բերքերից տասանորդ, օտարականները՝ գլխահարկ, իսկ վաճառականները՝ մաքս:

Վաճառականութեանը զարկ տալու և երոպացիների հետ կապուելու նպատակով իտալացիներին, մասնաւորապէս վենետիկցիներին և ջենովացիներին մեծամեծ առևտուական արտօնութիւններ տուաւ, որի փոխարէն հայ վաճառականներն էլ արտօնութիւններ ստացան վենետիկում:

Կիլիկիա բերում էին կտաւեղէն, մահուղեղէն, ազնիւ մետաքսէ կտորներ, գեղօրայք, բամբակ, շաքարաւազ, սնդիկ, թանկագին մետաղներ, զէնքեր, սապոն, հայելիներ և այլն: Հայերը նրանց վաճառում էին կենդանիներ, փայտեղէն, մետաղներ և այլն. հայերը միջնորդ էին երոպացիների և սախացիների մէջ:

Երկրի պահպանութեան համար Լևոն միշարք ամրոցներ և բերդեր կանգնեցրեց, բերդապահ գնդեր նշանակեց:

Լևոնի այդ վերաբերմունքից օգտուել ցանկացաւ Հռովմի պապը. նա առաջարկեց եկեղեցիները միացնել: Հայոց կաթողիկոսներն այդ

ժամանակ նստում էին Հռոմկլա. Նրանք Հայաստանից հեռու էին և ենթակայ՝ թէ Կիլիկիայի թագաւորի և թէ նոր՝ Արոպական հոսանքի ազգեցութեան. Կիլիկիայի հոգեորականներից շատերը կողմանակից էին միութեան, մանաւանդ Տարսոնի հայոց Եպիսկոպոս Ներսէս Լամբրոնացին, որը մի ընդունակ մարդ էր: Նա իր թեմի եկեղեցիներում մի քանի նորութիւններ էր մացրել, ցանկանալով այդպիսով նմանուել կաթոլիկ հոգեորականութեանը: Սակայն Կիլիկիայի հոգեորականութեան այդ ձգտումներին հակառակ էին արևելեան Հայաստանի հոգեորականները:

Լևոն ամուսնացաւ Կիպրոսի Լուսինեան Փրանսիական տոհմի իշխանուհու հետ, իսկ նրա նախորդները խնամէական կապերով կապուել էին Անտիոքի լատին իշխանների հետ: Լեւոն ամեն կերպ աշխատում էր, որ Կիլիկիան նկատուի իրեւ եւրոպական պետութիւն: Շնորհիւ նրա բաղաբականութեան հայերի մէջ առաջ եկաւ լատինասէրների կուսակցութիւն: Մահմեդականները զինուեցին հայ իշխանութեան դէմ եւրոպացիների Ասիա արշաւելու պատճառ: Եւ դրդող նրանց համարելով:

Բացի բարենորոգումներից Լևոն մի շաբք պատերազմներ մղեց Իկոնիայի, Անտիոքի, Հաւէպի իշխանութիւնների դէմ:

Ժ.

Հեթումնան հարստութիւն.

Հեթում Ա. (1226—1270). Նրա յարաբերութիւնը թաթարների հետ, Եգիպտոսի մամլուքների արշաւանքները. Խոսվութիւններ գահակալութեան շուրջը. Կրօնական խնդիրներ. Ունիթուններ. Լևոն Դ. Անկման շրջան:

Լևոն արու զաւակ չունէր. դրա համար իշխանները նրա միակ դստերը՝ Զապէլին, որ նախ ամուսնացած էր Անտիոքի լատին իշխանորդու հետ, երկրորդ անգամ ամուսնացը ին Լամբրոնի տէր Օշինի ազգականներից Հեթումի հետ: Այդպիսով Կիլիկիայի գահն անցաւ Հեթումեան տոհմին: Հեթում Ա.ի (1226—1270) թագաւորութեան օրով էր, որ Ասիայից մոնղոլ—թաթարներն արշաւեցին արևմուտք:

Քրիստոնեայ. իշխանութիւններն Ասիայում թուլացել էին և կրկին գլուխ էին բարձրացը ել մահմեդականները: Հեթում կրոպացինների վրայ յոյս դնել չէր կարող. դրա համար էլ հպատակութիւն յայտնեց թաթարներին և անձամբ գընաց Կարակորում՝ մեծ խանին ներկայացաւ: Մանգո մեծ խանն ուրախութեամբ ընդունեց

Հեթումին, և նա դարձաւ թաթարների դաշ-
նակիցը:

Այդ խելացի վարժունքով Հեթում թէ Կի-
լիկիան ազատեց մոնղոլների յարձակումից և
թէ առ ժամանակ պաշտպանուեց մահմեդական
իշխանների դէմ: Թաթարներն իրանց գէնքերն
ուղղեցին Իկոնիայի դէմ և նուաճեցին. Իկո-
նիայի անկմամբ Հեթում ազատուեց իր մի զօ-
րեղ թշնամուց:

Սակային Հեթումի թագաւորութեան վերջին
տարիները Եգիպտոսի մահմեդական մամլուք-
ները հզօրացան և մի քանի անգամ արշաւեցին
Կիլիկիայի վրայ:

Հեթումի յաջորդներն իրանց թագաւորու-
թեան տարիները մեծ մասամբ անց էին կաց-
նում մահմեդականների դէմ պատերազմելով.
Թաթարների բարեկամութիւնն էլ միւս կողմից
էր նրանց գրգռում: Այդ յաճախակի արշաւանք-
ները փոքրիկ Կիլիկիայի համար կորստաբեր կա-
րող էին լինել միայն: Նրանք զգալի եղան հա-
յերի համար մանաւանդ այն ժամանակ, երբ
թաթարները ժԳ-ըդ դարու վերջերին մահմե-
դականութիւն ընդունելով իրանց գէնքերը դարձ-
րին դաշնակից հայերի դէմ:

Ամեն կողմից թշնամիների յարձակումե-
րին ենթակայ լինելով՝ Հեթումեան տոհմի վեր-
ջին թագաւորներն իրանց միակ յոյսը Եւրո-

պայի վրայ էին դնում և անընդհատ դիմումներ
անում պապին՝ օգնութիւն ստանալու: Նրանց
այդ քաղաքականութեանը շատ էին նպաստում
լատինասէրների կուսակցութիւնը և պապի յատ-
կապէս հայերին կաթոլիկ դարձնելու նպատա-
կով նշանակած քարոզիչները, որոնք կոչւում
էին ունիթուներ (միարարներ): Ունիթուների
մոլեուանդութիւնն այնտեղ էր համում, որ հայե-
րից, եթէ կաթոլիկութիւն ընդունող էր լինում,
կրկին մկրտում էին, այդպիսով ցանկա-
նալով ցոյց տալ, որ հայերը քրիստոնեայ չեն: Նրանց
կատաղի հակառակորդներն ազգային
եկեղեցու կուսակիցներն էին. այդ կուսակցու-
թիւնները գոյութիւն ունեին և՝ արքունիքում,
և՝ իշխանների, և՝ հասարակ ժողովրդի մէջ: Ու-
նիթուններին աջակցում էին հայ թագաւորների
երապացի ազգականները. Նրանց պայքարը ա-
րիւննեղութեան հասաւ:

Այդ կուսակցական պայքարին աւելացան և
գահի շուրջը կրկնուող խոռովութիւնները. մեռ-
նող թագաւորի ժառանգներն իրար ձեռքից
գահը խլելու համար դաւադրութիւններ էին
կազմում: Այդ ներքին երկպառակութիւնները
նպատաւոր պայմաններ ստեղծեցին մահմեդա-
կանների համար և Կիլիկիան ենթարկուեց ա-
նընդհատ յարձակումների: Եգիպտոսի մամլուք-
ները շարունակ յարձակումներ էին գործում,

քաղաքները կործանում, հազարաւոր գերիներով և հարուստ աւարով վերադառնում, և հայերն ստիպուած էին միաժամանակ հարկ տալ թէ եղիպտացիներին և թէ թաթարներին։

Հեթումեան տոհմի վերջին ներկայացուցիչն էր Լևոն Դ. (1320—1341), որը փոխանակ երկրի պաշտպանութեան մասին մտածելու, զբաղուած էր միութեան խնդրով։ Նա լատինամութիւնից դրդուած հալածում էր ազգային եկեղեցու կուսակից իշխաններին։ ոմանց դաւադրութեամբ սպանել տուաւ և իրան շըրջապատեց լատիններով։ Նա իր վարմունքով միանգամայն զզուեցրեց ժողովրդին։

Երկիրը մատնուեց մամլուքների նորանոր արշաւանքներին։ Ժողովուրդն իր վրայ վերցրեց երկրի պաշտպանութեան գործը և կամամաւոր ինքնապաշտպանողական խմբեր կազմեցին։ Ժողովրդի ազատասիրական ողին երեան եկաւ այդ ինքնապաշտպանողական խմբերի միջոցով։ Նրանց չէին առաջնորդում ոչ թագաւորը և ոչ երկրի իշխաններն ու հոգեորականները։ Հայ ժողովրդի կեանքում հազուագիւտ են այնպիսի դէպքեր, երբ գիւղացիութիւնն է ասպարէզ նետում։ Մի քանի յաջող յարձակումներով նրանք թշնամիներին քշեցին և երկիրն ազատեցին վերջնական կործանումից։ Իսկ թագաւորը քաշուած ապահով տեղեր՝ դիմումներ

էր անում պապին, որը միայն մի պայմանով էր խոստանում օգնել հայերին՝ երե նրանք կ'ընդունեն կարոլիկութիւն։

Եղիպտացիք լսելով Լևոնի դիմումների մասին նորանոր յարձակումներ գործեցին և միայն ժամանակ յետ քաշուեցին, երբ Լեռն աւտարանի վրայ երդուեց՝ եւրոպացիների հետ այլեւս հաղորդակցութիւն չունենալ։

Լևոն 1341 թուին մեռաւ անժառանգ, որով Հեթումեան տոհմը վերջացաւ։

Ճ.Ա.

Լուսինեան հարստութիւն.

Լուսինեան թագաւորների ձգառումը, Ազգային և լատինասէր կուսակցութիւնների պայքարը, Դաւագրութիւններ, Կոստանդին Դ., Լեռն Ե. (1374—1375). Կիլիկիայի հայոց իշխանութեան վախճանը:

Լեռն Դ.-ի մահուանից յետոյ հայկական գահի միակ ժառանգներ մնացել էին նրա հօրաքրոջ որդիքը, որոնց հայրը ֆրանսիական Լուսինեան տոհմի իշխաններից էր և կիպրոսի լատին թագաւորի ազգականը: Նրանք ջերմեռանդ կաթոլիկներ էին: Նրանցից անդրանիկին Լեռն նշանակել էր տէրութեան խնամակալ՝ պայլ: Նրա անունը Յովիհաննէս էր:

Թագաւորի մահուանից յետոյ հայ իշխանները խորհուրդ անելով հրաւիրեցին Յովիհաննէսի կրտսեր եղբօրք՝ Գուլիտոնին՝ նախօրօք խօսք առնելով, որ նա հայ եկեղեցու պաշտպան կը լինի: 1342 թուին Գուլիտոն թագաւոր օծուեց Կոստանդին Բ. անունով:

Կոստանդին Բ. (1342—1344) հակառակ իր խոստման իրեն շըջապատեց լատին ազգա-

կաններով, յարաբերութիւն սկսեց Հռովմի Պապի հետ միութեան առթիւ և յոյս գնելով նրա խոստումների վրայ մերժեց եղիպատացիներին հարկ տալ: Ազգային կուսակցութեան պարագուխները գաւադրութիւն կազմեցին նրա դէմ և նրան իր երեխաններով սպանեցին:

Լատինասէրներն առ ժամանակ սարսափանար տեղի տուին և այն ժամանակ ազգային կուսակցութիւնն առաջ քաշեց հայ իշխանական տոհմից Կոստանդինին, որը թագաւորեց Կոստանդին Գ. (1344—1363) անունով: Նա կրկին հարկատու եղաւ եղիպատացիներին, նա հարեւանների գաշնազրութեամբ կարողացաւ Կիլիկիան ազատել արտաքին թշնամիններից: Սակայն նրա մահուանից յետոյ կրկին խորվութիւններ բարձրացան երկու կուսակցութիւնների մէջ և երկիրը մատնուեց անիշխանութեան: Ամեն մի կուսակցութիւն իր թեկնածուին էր առաջ քաշում. լատինասմոլները պահանջում էին, որ գահն անցնէ օրինաւոր ժառանգին, որ այդ ժամանակ նախկին խնամակալ Յովիհաննէսի ջերմ կաթողիկ Լեռն որդին էր. նրա թեկնածութիւնը պաշտպանում էր պապը. իսկ ազգային կուսակցութիւնն առաջ էր քաշում հայ իշխանական ծագում ունեցողներին:

Այդ անիշխանութիւնից օգտուելով եղիպատացիք յարձակուեցին Կիլիկիայի վրայ և շատ

աեղեր իրանց զօրքերով բռնեցին։ Երկրի զըժ-
բաղդութեանը վերջ տալու նպատակով վերջա-
պէս հայերը հրաւիրեցին Լևոնին գահը ժառան-
գելու միայն այն պայմանով, որ ազգային եկե-
ղեցու ծէսով օծուի և միութեան ինդիր չյա-
րուցանի։

Մեծ դժուարութեամբ Լևոն եկաւ (1374
թ.), սակայն հակառակ իր խոստան չէր հա-
մաձայնուում հայկական ծէսով օծուելու և իր
վերաբերմունքով գէպի հայ եկեղեցին միան-
գամայն յուսախաբ արաւ ազգային կուսակ-
ցութեանը։

Լևոն հազիւ եօթն ամիս կարողացաւ թա-
դաւորել. եգիպտացիք գրգռուած ազգային կու-
սակցութեան հաղորդած լուրերից՝ մեծ զօրքով
պաշարեցին. Սիս մայրաքաղաքը, ուր փակուած
էր Լևոն. ազգային կուսակցութեան պատգա-
մաւորները միւս կողմից հրաւիրեցին Հալէպի
սուլթանին, իսկ Լևոնին շարունակ գրդում էին՝
հարկ չտալ եգիպտացիներին։ Նրանք մինչև իսկ
դաւգրութիւն կազմեցին Լևոնի կեանքի գէմ,
և Լևոն յուսահատուած իր և ընտանիքի կեան-
քի ապահովութեան համար խոստում առնելով
1375 թուի ապրիլի 16-ին անձնատուր եղաւ-
եգիպտացոց զօրապետին։ Դրանով էլ վերջացաւ
հայկական իշխանութիւնը կիլիկիայում։ Եգիպ-
տացիք տիրեցին ամբողջ երկրին և հայերը նե-

զուած նրանց հարստահարութիւններից խումբ-
խումբ թողեցին երկիրը և ցրուեցին զանազան
կողմեր։

Իսկ Բիւզանդիան իր վերջին օրհասն էր
ատղում. նա ուժերը լարած դիմադրում էր օս-
մանցիներին, որոնք արդէն հասել էին իր մայ-
րաքաղաքի դռներին։

Լևոն Ե. Կիլիկիայի վերջին թագաւորի մասին
հետեւեալ մանրամասնութիւններն են հաղորդում։

Լևոն 1374 թուի յուլիսի 24-ին բազմաթիւ վլ-
տանգներից խուսափելով իր Մարգարիտ ամիկող և
ազգականների հետ 25 ձիաւորով մտաւ Սիս։ Ամբողջ
երկիրը բանուած էր եգիպտացիներով և ճանապարհ-
ները փակուած. միայն Սիսն էր ազատ, որ բազմա-
թիւ յարձակումներից համարեա կիսակործան դրու-
թեան մէջ էր։

Նա խոստացել էր հայ ծէսով օծուել. սակայն
իրրև ջերմիւանդ կաթոլիկ իր հետ Սիս էր բերել կա-
թոլիկ եպիսկոպոս և կաթոլիկական միւսոն։ Հայերը
վրդութեցին այդ բանից, և վերջ ՚ի վերջոյ Լևոն հա-
մաձայնուեց նախ օծուել կաթոլիկ եպիսկոպոսի, ապա
հայ կաթոլիկոսի ձեռքով։

Սեպտ. 14-ին Վերացման Խաչի տօնն էր. Սսի
մայր եկեղեցին լիքն էր խուսն բազմութեամբ։ Լևոն
կանգնած էր՝ մի կողմին ունենալով հայոց կաթոլի-
կոսին և միւս կողմին՝ կաթոլիկ եպիսկոպոսին։

Օծումից յետոյ նա հայ իշխաններին ասաց.
«Մենք հնապանդ ենք Հոռվմի եկեղեցուն և կաթոլիկ
հաւատ ունինք. դուք էլ պարտաւոր էք նոյնն ու-
նենալ»։

Եգիպտական 22000-նոց բանակը բռնած էր Ախս տանող ճանապարհները. հայերը պաշար անցկացնելու համար ամեն անգամ ստիպուած էին լինում միծաքանակ գումար տալ:

Լևոն իր վարմունքով սկզբից և եթ իր դէմ զինեց ազգայնականների կուսակցութիւնը. նրանք մի կողմից եղիպատացիներին էին զրգուամ նրա դէմ, միւս կողմից Լևոնին էին զրգուամ հարկ չվճարել: Ազգայնական կուսակցութեան ատելութիւնն այն աստիճանի էր, որ նրանք խնդրեցին սուլթանին թագաւոր կարգել մահմեդականութիւն ընդունած Աշոտին: Միւս կողմից նրանք դիմեցին Հալէպի սուլթանին, որ դայ և քաղաքը զրաւէ: 1375 թ. յունուար 1-ին սուլթանը 15000 զօրքով կանգնեց Սսի առաջ: Լևոն ամենքին հաւաքեց միջնաբերդը.

Նա անձամբ մասնակցուամ էր դիմադրութեանը և ծնօտի վրայ վէրք սուացաւ: Նա պառկել էր աշտարակներից մէկում: Ազգայնականները կաթողիկոսի մասնակցութեամբ ժողով զումարեցին և դաւադրութիւն կազմեցին նրա կեանքի դէմ: Դաւադիրները յարձակուեցին աշտարակի վրայ, սպանեցին հայ պահապաններին և սկսեցին կացիններով դռները ջարդել, որպէսզի մտնեն խուցը, ուր Լևոնն էր պառկած: Լևոն թոկով իջնելով աշտարակից՝ փախաւ աղատուեց: Նա յուսահատուած գրաւոր խոստում ստացաւ եղիպտացոց զօրապետից և 1375 թուի ապրիլ 16-ին անձնատուր եղաւ: Նոյն ամսի 22-ին աղաւու պոստով այդ լուրը իմացուեց Կահիրէում, որի առթիւ երեք օր շարունակ թմբկահարութիւն կատարուեց:

Լևոն իր ընտանիքով ուղարկուեցաւ Եղիպտոս. սուլթանը թոյլ տուաւ նրան Կահիրէի հայերի երաշխաւութեամբ աղատ ապրել՝ առանց քաղաքից հե-

ոսնալու իրաւունքի: Նա եօթը տարի մնաց գերութեան մէջ և այդ ժամանակամիջոցում անընդհատ դիմումներ էր անում պապին, Կիպրոսի, Սպանիայի և Կաստիլիայի թագաւորներին, որպէսզի միջնորդեն իրեն աղատելու: Բոլոր միջնորդութիւններն ՚ի գուր էին անցնուամ: Վերջապէս նրա խոստովանահայրը՝ Յովհաննէս Դարդէլ լատին վարդապետը Լևոնի նամակներով շրջեց Եւրոպայի արքունիքները և նկարագրեց նրա դառն վիճակը: Մեծամեծ նուէրներ ուղարկուեցան Կաստիլիայի և Արագոնի թագաւորների կողմից Եղիպտոսի սուլթանին, և 1382 թ. սեպ. 30-ին Լևոն աղատ արձակուեց գերութիւնից:

Լևոն անմիջապէս հեռացաւ Եղիպտոսից: Սուլթանը զջաց որ նրան աղատ է թողել որպէսկետև վախենուամ էր, որ Լևոն կըզգրգոէ երոպական թագաւորներին իր դէմ, բայց ուշ էր: Նոյն տարուայ գեկտ. 12-ին նա հասաւ Վենետիկ, որտեղից շտապեց պապի տեսութեանը: Պապը մեծ թափօրով ընդառաջ եկաւ, խոշոր դրամական նուէր տուաւ, որպէսզի նա գնայ իր գահին տիրանայ: Լևոն այդտեղից գնաց Սպանիա և ապա Կաստիլիա: Երկու թագաւորներն էլ մեծ շքով ընդունեցին հայոց թագաւորին. Սպանիայի թագաւորն առանձին հրովարտակով Լևոնին նշանակեց երեք քաղաքի տանուտէր և նրանց եկամուտը նրան շնորհեց: Կաստիլիայի Յովհաննէս թագաւորը լսելով Լևոնի զալու մասին, ընդառաջ դուրս եկաւ: Լևոն հետուից տեսնելով իր աղատարարին, իջաւ ջորուց և ծունդ դրաւ նրա առաջ. Յովհաննէս հետեւեց նրա օրինակին: Այն ժամանակ Լևոն ասաց. «Տէր, ես եմ՝ պարտաւոր Զեր արքայական վիճակառութեան ստաջ մեծարանք անելու, որովհետեւ Զեր և Զեր բարութեանն եմ՝ պարտական, որ աղատուեցի այն խիստ և դժնդակ բանդից»: Լևոն

մի առ ժամանակ մնաց նրա մօտ, մեծ պատիւներ և նիւթական օժանդակութիւն ստացաւ: Այնուհետև ուղղորուեց ֆրանսիա, ուր թագաւորում էր Կարոլոս Զ. Նոյնպիսի պատիւներ ստացաւ և նրանից: Կարոլոս իր «յոյժ պատուական և յոյժ սիրելի եղբայրակից հայոց թագաւորին» ամսական 500 ֆր. նպաստ նշանակեց:

Լեռն թէև գնացել էր Եւրոպա օգնութիւն խընդրելու, որ կարողանայ կիլիկիան ազատել եղիպատացիներից, սակայն նիւթական մեծամեծ նպաստները, որ նա առատութեամբ ստանում էր և Փարիզի հանգիստ կեանքը միանդամայն մոռացնել տուին և կիլիկիայի գահը, և թագաւորութիւնը. իսկ ժողովրդի մասին նա երբէք էլ չէր մտածել: 1393 թուի նոյեմբ. 29-ին, 51 տարեկան հասակում, վաղաժամ ծերացած մեսաւ Փարիզում և մեծ շքով թագուեց Կեղեստինեանց վանքում: Նրա կտակի համաձայն դին հազցրուած էր սպիտակ զգեստով՝ դէմքն ու ոտները բաց, սպիտակափառ անկողնի մէջ. գլխավերել ոսկեղէն թագն էր: Նրա ցանկութեան համաձայն դադաղը տանում էին 12 սպիտակ հագած աղքատներ, նոյնպիսի չորս հոգի էլ ջահեր էին բոնել: Թաղումը շատ հետաքրքիր էր Քրանսիացիների համար, որովհետև կատարում էին հայոց թագաւորներին յատուկ թաղման արարողութեամբ և եղանակով: Նա իր ունեցածը բաշխեց կարօտեալներին, հիւանդանոցներին, վանքերին, ծառաներին և մտերիմներին:

Տապանի վրայ գրուած է. „Սյուել հանգստմ է մեծասոհմ եւ մեծապայծառ իշխան Լեռն Լուսինեան Ե., Հայոց թագաւորութեան լատին արքան, որ հոգին աւանդեց առ Սատուած Փարիզում նոյնիքը ամսուայ ՅՊ-րդ օրը, Քրիստոսի 1393 բուականին: Աղօքեցէ՛ Երա համար“:

ՌՈՒԲԻՆԵԱՆ ՀԱՐՍՈՒԹԻՒՆ

Ռուբէն իշխան	1080—1095	թ.
Կոստանդին իշխան	1095—1100	»
Թորոս իշխան	1100—1123	»
Լեռն իշխան	1123—1136	»
Կիլիկիան Յունաց իշխան. տակ	1136—1145	»
Թորոս իշխան	1145—1168	»
Խնամակալութիւն	1168—1170	»
Մլէն (Միքայէլ) իշխան	1170—1175	»
Ռուբէն իշխան	1175—1185	»
Լեռն Ա. Ժագաւոր կիլիկիայի	1185—1219	»
Զապէլ (խնամակալութիւն)	1219—1222	»
» և Ֆիլիպ	1222—1225	»

ՉԵԹՈՒՄԵԱՆ ՀԱՐՍՈՒԹԻՒՆ

Հեթում Ա. (Զապէլի հետ)	.	.	.	1226—1270	»
Լեռն Բ.	.	.	.	1270—1289	»
Հեթում Բ.	.	.	.	1289—1297	»
Թորոս	.	.	.	1293—1295	»
Մլբատ	.	.	.	1297—1298	»
Կոստանդին Ա.	.	.	.	1298—1299	»
Խնամակալութիւն	.	.	.	1299—1301	»
Լեռն Գ.	.	.	.	1301—1307	»
Օշին	.	.	.	1308—1320	»
Լեռն Դ.	.	.	.	1320—1342	»

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՀԱՐՍՈՒԹԻՒՆ

Գուիտոն կամ Կոստանդին Բ.	.	.	.	1342—1344	»
Կոստանդին Գ. (հայ)	.	.	.	1344—1363	»
Լեռն (հայ)	.	.	.	1363—1365	»
Կոստանդին Դ. (հայ)	.	.	.	1365—1373	»
Լեռն Ե. Լուսինեան	.	.	.	1374—1375	»
Նիա մահը	.	.	.	—1393	»

Ց Ա Ն Կ.

ԵՐԵԱ

Ներածութիւն	1
ա) Քրիստոնեայ Արշակունիք	12
բ) Ոսկէ դար	73
գ) Կրօնական պատերազմներ	82
դ) Ինքնավար Հայաստան	103
Արաբներ և մահմեդականութիւն	114
ե) Հայաստանն Արաբական իշխան. տակ .	123
զ) Բագրատունեաց հարստութիւն	129
է) Հայաստանի անկումը	159
ը) Կիլիկիա	173
թ) Ռուբինեան հարստութիւն	178
ժ) Հեթումեան հարստութիւն	191
ժա) Լուսինեան հարստութիւն	196



16125